


ՄՅԱՍՆԻԿ ԵՍՈՅԱՆ

«ԱՐԵՎ» ԴԱՐԲԵՐԱԿԱՆԸ 2010-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ



ԵՐԵՎԱՆ - 2022

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՄՅԱՍՆԻԿ ԵՍՈՅԱՆ

**«ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ
2010-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԺԵԱՆ
ՄԱՏԵՆԱԶԱՐ
226



ASHJIAN ARCH. MESROB
BOOK SERIES
226

Signature

ԵՐԵՎԱՆ – 2022



Handwritten in blue ink: 109041

ՀՏԴ 070(091)

ԳՄԴ 76.02

Ե 597

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագիր՝ պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
Ալբերտ Ա. Խառատյան**

ԵՍՈՅԱՆ Մ.

**Ե 597 «Արեգ» պարբերականը 2010-2015 թվականներին / Մ. Եսոյան. –
Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022.- 168 էջ:**

Մենագրությունը նվիրված է Եգիպտոսի «Արեգ» պարբերականի 2010–2015 թվականների պատմության ուսումնասիրմանը: Ներկայացված է պարբերականի բնութագիրը, լուսաբանված է նրա տեղն ու դերը եգիպտահայ համայնքի հասարակական մտքի ու պարբերական մամուլի պատմության մեջ: Գիրքը նախատեսված է պատմաբանների, արևելագետների և ընթերցող լայն հասարակայնության համար:

ՀՏԴ 070(091)

ԳՄԴ 76.02

ISBN 978-9939-892-11-5

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2022

© Եսոյան Մ., 2022

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական բարեգործական ընդհանուր միության Կահիրեի մասնաճյուղի ֆինանսավորմամբ 2010 թ. առաջօր լույս է տեսնում «Արեգ» պարբերականը, որը շարունակում է «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածի առաքելությունը: «Պատահական չէ, որ պարբերականը «Արեգ» անվանումը ստացավ»,- նկատում է արաբ հետազոտող Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը «Վերադարձ դեպի սկիզբ» հոդվածում, որտեղ հեղինակը ներկայացնում է պարբերականի ստեղծման պատմությունը¹:

«Արև»-ի արաբերեն հավելվածի նման «Արեգ» պարբերականի հիմնական նպատակը հայ-արաբական մասնավորապես հայ-եգիպտական հարաբերություններն ամրապնդելն է: ՀԲԸՄ-ն արաբերեն պարբերականի օգնությամբ նպատակ ունի խորացնելու մշակութային կապերը հայ և արաբ ժողովուրդների միջև: Հայկական թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական քովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և պահպանել նրանց հիշատակը արաբախոս ընթերցողի շրջանում:

Ամսագիրը ճանաչողական լուրջ բնույթ ունի եգիպտոսի պատմության մեջ երկրի պետական կառավարման տարբեր ոլորտներում կարևոր դերակատարում ունեցած հայ գործիչներ-

¹ , Արեգ, Կահիրե, 2010, № 1, էջ 1 (արաբերեն):

րի, եգիպտահայ արվեստագետների դերը արժևորելու տեսանկյունից, ինչպես նաև արաբ հասարակության կողմից հայերին ճանաչելու, հայ-եգիպտական բարեկամական հարաբերությունները խորացնելու առումով: Եգիպտացիների մեծ մասը, այդ թվում մտավորականները, տեղյակ չեն հայերի, հայկական մշակույթի մասին, այնինչ Եգիպտոսում հայերը դարեր ի վեր ունեն եկեղեցիներ, դպրոցներ և այլն:

Ամսագրի համարներում ներկայացված են եգիպտական, արաբական, ինչպես նաև հայկական լրատվամիջոցներում, մամուլում տեղ գտած կարևոր նորությունները: Պարբերականի էջերում մեծ տեղ են գրավում հայ գրականության, մշակույթի, թատրոնի, կինոյի, արվեստի, Հայաստանի պատմության մասին հրապարակումները: Ամսագիրն իր էջերում հրապարակել է հայ, արաբ, եգիպտացի բազմաթիվ անվանի մտավորականների հոդվածներ ու վերլուծություններ:

Արաբերեն պարբերականի առանցքային ու հիմնական հարցերից է արաբախոս ընթերցողին և արաբերենին տիրապետող հայ սերունդներին Հայոց ցեղասպանության հիմնահարցը, նրա միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքները ներկայացնելը, Թուրքիայի մերժողական քաղաքականությունը մերկացնելը, ինչպես նաև արդի աշխարհի տարբեր հիմնախնդիրների ու հարցերի վերաբերյալ հայկական տեսակետները ներկայացնելը:

«Արեգ»-ի էջերում հրատարակված նյութերը հիմնականում վերաբերում են հետևյալ թեմաներին՝ 1. Եգիպտահայ արվեստագետներին, 2. Եգիպտոսի հայ համայնքի պատմությանը, Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում հայ գործիչների խաղացած դերին, 3. Հայոց ցեղասպանության լուսա-

բանմանը արաբախոս ընթերցողի շրջանում, 4. Հայ-արաբական, մասնավորապես, հայ-եգիպտական հարաբերությունների լուսաբանմանը, 5. Եգիպտոսի պատմությանը:

Արաբերեն պարբերականը նաև տեղեկատվական բնույթի ծեռնարկ է, որը արաբախոս ընթերցողին զանազան տեղեկություններ է հաղորդում հայ, արաբ երևելի արվեստագետների, մտավորականների, հասարակական, քաղաքական գործիչների կենսագրության ու գործունեության մասին: «Արեգ»-ի հրապարակումները շատ արժեքավոր են արաբական, մասնավորապես, Եգիպտոսի պատմությունը, մշակույթը ճանաչելու տեսանկյունից հենց եգիպտացիների կողմից, ուստի այս ամսագրի գործունեությունը շատ կարևոր է ոչ միայն Եգիպտահայ համայնքի, այլ նաև Եգիպտոսի արաբ հասարակության ու, ընդհանրապես, ամբողջ արաբական աշխարհի համար: Ամսագրի էջերում մեծ թիվ են կազմում նաև հայ-արաբական, հայ-եգիպտական հարաբերությունների մասին հոդվածները, որոնցում ներկայացվում և արծարծվում է երկկողմ հարաբերությունների՝ պատմական վաղ անցյալից մինչև այսօր շարունակվող բարիդրացիական, եղբայրական լինելու փաստը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԸ «ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

«Արեգ» պարբերականը, «Արև»-ի արաբերեն հավելվածի նման, ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում վառ պահել նրանց հիշատակը:

Եգիպտահայ համայնքը 20-րդ դարում նշանակալից հաջողություններ ունեցավ կերպարվեստի բնագավառում: Կերպարվեստի տարբեր ճյուղեր բավականին շահութաբեր էին՝ հնարավոր դարձնելով նկարչական դպրոցների, ցուցասրահների և ցուցահանդեսների առկայությունը: Կահիրեում և Ալեքսանդրիայում գործում էին Լեոնարդո դա Վինչիի նկարչական դպրոցը, բազմաթիվ ցուցասրահներ, որոնք զբաղվում էին նկարների առևտրով: Այդ միջավայրում ապրեցին և ստեղծագործեցին մի շարք հայ նկարիչներ և քանդակագործներ, որոնք պատվավոր տեղ են գրավում եգիպտական կերպարվեստի պատմության մեջ: Չնայած եգիպտահայ մամուլը՝ հատկապես «Արև» օրաթերթը, բազմիցս անդրադարձել է եգիպտահայ նշանավոր արվեստագետների կենսագրության ու ստեղծագործական գործունեության լուսաբանմանը, «Արեգ» պարբերականը ևս պարբերաբար վերհիշում է հայազգի նշանավոր արվեստագետներին և համառոտ կենսագրական և ստեղծագործական տեղեկություններ հաղորդում ընթերցողին:

Երվանդ Դեմիրճյան

Արաբերեն պարբերականը եգիպտահայ արվեստագետների առաջին սերնդի ներկայացուցիչներից մեծապես արժևորում է Երվանդ Դեմիրճյանի ու Վահրամ Մանավյանի արվեստը: Երվանդ Դեմիրճյանը ծնվել է 1870 թ. Ստամբուլում: Նախնական կրթություն ստանալուց հետո 1885–1890 թթ. ուսանել է Ստամբուլի Գեղարվեստից դպրոցում, որն այդ ժամանակ տարածաշրջանի լավագույն դպրոցներից մեկն էր: 1893 թ. մեկ տարով մեկնում է Փարիզ և ուսանում աշխարհահռչակ Ժուլիանի ակադեմիայում¹, որտեղ ծանոթանում է բազմաթիվ արվեստագետների հետ, այցելելում տարբեր թանգարաններ՝ ծանոթանալով աշխարհահռչակ նկարիչների գործերին, ինչը մեծ ազդեցություն ունեցավ հայազգի արվեստագետի ստեղծագործական կյանքի վրա: 1894 թ. Երվանդ Դեմիրճյանը, վերադառնալով Ստամբուլ, ականատես եղավ հայկական կոտորածներին, որից հետո ստիպված, բազմաթիվ հայերի հետ մեկտեղ, լքեց Ստամբուլը և 1896 թ. ժամանեց Ալեքսանդրիա, ուր մեկ տարի մնալուց հետո 1897 թ. ընտանիքի հետ միասին հաստատվեց Կահիրեում: Երվանդ Դեմիրճյանը արագորեն ինտեգրվեց եգիպտական հասարակության մեջ և առայսօր մեծ հարգանք է վայելում եգիպտացիների շրջանում²: Երվանդ Դեմիրճյանը ինքնամիտփ անձնավորություն է եղել, շատ չի խոսել, շատ չի ժպտացել: Հավանաբար նման վարքագծի պատճառ են հանդիսացել կյանքի ընթացքում տեսած արհավիրքներն ու դժվարությունները: Իր կյանքի ընթացքում հայազգի արվեստագետը աչքի է ընկել նաև

¹ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., *Հայերը Եգիպտոսում 1896–1961 թթ.*, Կահիրե, 2003, էջ 603 (արաբերեն):

² , Արեգե, 2015, № 57, էջ 15:

հասարակական գործունեությամբ: Մասնավորապես, 1899 թ. Կահիրեի հայկական մշակութային կենտրոններից մեկում դասախոսությամբ է հանդես եկել, իսկ 1924 թ. հայ արվեստագետների ակումբը Երվանդ Դեմիրճյանի մեծարման երեկո է կազմակերպել¹: 1933 թ. Երվանդ Դեմիրճյանը, Վահրամ Մանավյանի հետ միասին, կազմակերպել է ցուցահանդես, որտեղ ներկայացվել են արվեստագետների 70 աշխատանքներ (դիմանկարներ, բնապատկերներ, Կահիրեի քաղաքային նկարներ և այլն)²:

Տարիների ընթացքում Երվանդ Դեմիրճյանը ամբողջ Եգիպտոսում հայտնի դարձավ: Հայազգի նկարիչը չի ամուսնացել և ամբողջ կյանքը նվիրել է նկարչությանը: Ստեղծագործական վաղ շրջանի լավագույն աշխատանքը 1903 թ. իր դիմանկարն է, որ ներկայումս կախված է Կահիրեի հայ առաքելական եկեղեցու սենյակներից մեկի պատին: Անվանի մտավորական Հարութ Սասունյանը պատմում է, թե ինչպես հանկարծակիի եկավ, երբ առաջին անգամ 1997 թ. տեսավ նկարը: «Ռուպենը շարունակ ես լռակյաց նայում էի իրեն, իսկ արվեստագետը (Դեմիրճյանը – Մ.Ե.) խորաթափանց հայացքով նայում էր ինձ, ու լռությունը պատել էր ինձ³», - նկատում է Հարութ Սասունյանը: Երվանդ Դեմիրճյանի լավագույն աշխատանքներից է Տիգրան Աբրոյանի դիմանկարը (1905 թ.): 20-րդ դարի սկզբին Երվանդ Դեմիրճյանը նկարել է Մուհամմադ Ալիի ծոռան՝ Ֆաթիմա Զահրադի դիմանկարը: Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը նշում է, որ հայազգի արվեստագետը

¹ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 604:

² Թովուզյան Հ.Խ., *Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն*, Երևան, 1978, էջ 309:

³ Արեգե, 2015, № 57, էջ 17:

ստեղծել է եգիպտական «Մոնա Լիզա» կտավը¹։ Դեմիրճյանի բազմաթիվ նկարներով են զարդարված Կահիրեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին։ Երվանդ Դեմիրճյանը ստեղծել է նաև կրոնական բնույթի նկարներ, որոնք այսօր փակցված են Եգիպտոսի հայկական եկեղեցիների պատերին։ Հայազգի արվեստագետը 1930-ականների կեսերին ծանր հիվանդացավ և մեկնեց Փարիզ՝ բուժման նպատակով, սակայն 1938 թ. մահացավ։ Նրա մահից հետո՝ 1939 թ., արվեստագետի աշխատանքները՝ 49 եգիպտացի տղամարդու և կնոջ դիմանկարներ, 161 բնապատկերներ, քաղաքային նկարներ և այլն, տեղափոխվեցին Կահիրեի հայկական պատրիարքարան։ Բացի այդ՝ հայազգի արվեստագետը իր կյանքի ընթացքում ստեղծել է 16 յուղաներկ, 10 ջրաներկ կտավ։ Ընդհանուր առմամբ, Երվանդ Դեմիրճյանի ստեղծագործական հավաքածուն ներառում է 236 կտավ²։

Վահրամ Մանավյան

Եգիպտահայ նշանավոր արվեստագետներից է Վահրամ Մանավյանը, որը ծնվել է 1880 թ. Ստամբուլում։ Նախնական կրթություն ստանալու ընթացքում բացահայտվում է նրա հակումը դեպի արվեստը և, ուսուցչի առաջարկով, 1895–1900 թթ. սովորում է Ստամբուլի Գեղարվեստի դպրոցում։ Հայազգի արվեստագետը դժվարություններով լի ծանր կյանք է ունեցել։ ՀՅԴ կուսակցության գաղափարներին հարելու համար Օսմանյան կայսրության իշխանությունների կողմից աքսորվել է Ռոդոս կղզի, ուր ապրել է չորս տարի։ Կղզում գտնվելու ընթացքում

¹ , Արևե, Կահիրե, 2000, № 29, էջ 13–14 (արաբերեն)։

² , Արեգե, 2015, № 57, էջ 14–20։

պատկերել է թուրք բյուրոկրատների դիմանկարներ, որի շնորհիվ մեծ հարգանք է ձեռք բերել վերջիններիս շրջանում և նրան թույլատրվել է ազատ տեղաշարժվել կղզու տարածքում: Օգտվելով նպաստավոր իրավիճակից Վահրամ Մանավյանը, հույն նավաստիների օգնությամբ, 1906 թ. փախչում է Ալեքսանդրիա¹: Տեղի Պողոսյան դպրոցում երեք տարի դասավանդելուց հետո 1909 թ. մեկնում է Կիլիկիա և ուսուցչական գործունեություն ծավալում Ադանայի Աբգարյան դպրոցում: 1910–1911 թթ. Բեռլին–Բադդադ երկաթգծի կառուցմամբ զբաղվող գերմանական ընկերությունում որպես գծագրող աշխատելուց հետո 1911 թ. վերադառնում է Ալեքսանդրիա: Ալեքսանդրիայում հայազգի արվեստագետը հիմնում է նկարչական արհեստանոց, որը շարունակում է գործել մինչև 1931 թ.² մոր մահը (հորը կորցրել է 8 տարեկան հասակում): Ալեքսանդրիայում ապրած տարիներին զբաղվել է նկարչությամբ, յուղաներկով նկարել է Ալեքսանդրիայի քաղաքային, ծովափնյա տեսարաններ: 1918–1919 թթ. Մանավյանը կրկին դասավանդում է Պողոսյան դպրոցում, որտեղից՝ տնօրինության հետ տարաձայնություն ունենալու պատճառով, 1919 թ. դուրս է գալիս աշխատանքից: 1931 թ., մոր մահվանից մի փոքր անց, տեղափոխվում է Կահիրե, որտեղ 1933 թ. Երվանդ Դեմիրճյանի հետ համատեղ ցուցահանդես է կազմակերպում²: 1932–1941 թթ. դասավանդել է Գալուստյան վարժարանում, այնուհետև Եգիպտոսում տեղակայված անգլիական զորամասերից մեկում աշխատել է քարտեզագիր: 1951 թ. կազմակերպում է անհատական ցուցահանդես, որտեղ ներկայացված էին արվեստագետի 60-ից ավելի յուղաներկ և ջրա-

¹ , Արեգե, 2015, № 57, էջ 21:

² Նույն տեղում, էջ 22:

ներկ աշխատանքները: 1952 թ., Վահրամ Մանավյանի մահից հետո, նրա աշակերտը՝ հայազգի արվեստագետ Հովհաննես Դաջիրջյանը, Մանավյանի բարեկամներից գնում է 50-60 նկար: Դրանից հետո ոչ ոք չգիտի Վահրամ Մանավյանի նկարների ճակատագիրը: Հարուֆ Սասունյանը նշում է, որ եգիպտական հին ֆիլմերը դիտելու ընթացքում նկատել է, որ որոշ ֆիլմերի դեկորացիաներ պարունակում են Մանավյանի բնապատկերները¹:

Արման Արնաուտյան

Եգիպտահայ ավագ սերնդի հայտնի արվեստագետներից է Արման Արնաուտյանը, ով առավել հայտնի է Ալբան ազգանունով: Հայազգի արվեստագետը ծնվել է 1883 թ. Ստամբուլում: Համիդյան կոտորածների ժամանակ ընտանիքի հետ գաղթում է Ալեքսանդրիա: Նախնական կրթությունը ստացել է Ստամբուլում, այնուհետև Ալեքսանդրիայի մի քանի դպրոցներում, որտեղ սովորել է ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն: Հաճախել է նաև երաժշտական դպրոց: Վաղ տարիքից ստիպված է եղել աշխատել՝ ընտանիքի հոգսերը հոգալու համար: Սկզբնական շրջանում աշխատել է հայկական Բալյան նկարչական արհեստանոցում, որտեղ սպասարկում էր հաճախորդներին: Որոշ ժամանակ անց Ալբանը արդեն նաև մասնակցում է նկարների պատրաստման գործին: Բալյան, այնուհետև Թաշյան նկարչական արհեստանոցում աշխատած տարիներին հմտանում է նկարչության բնագավառում և որոշում է իր նկարչական արհեստանոցը բացել Ալեքսանդրիայում²: Սակայն, հանդիպելով լուրջ մրցակ-

¹ . Արեգե, 2015, № 57, էջ 23:

² . Արեգե, 2015, № 53, էջ 13:

ցության և ֆինանսական դժվարությունների, Առաջին աշխարհամարտի ավարտից հետո մեկնում է Փարիզ, այնուհետև՝ Բրյուսել, ուր մի քանի տարի աշխատելուց հետո անձնական նկարչական արհեստանոց է բացում և շատ կարճ ժամանակահատվածում նշանակալի հաջողությունների հասնում։ Երկար տարիներ Բրյուսելում ապրելուց հետո Արման Ալբանը մեկնում է Փարիզ, որտեղ ևս արհեստանոց է բացում։ Այստեղ ևս հայազգի արվեստագետը մեծ ճանաչում է ձեռք բերում, և նրա արհեստանոցում նկարներ էին պատվիրում բազմաթիվ ճանաչված անհատներ։ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Ֆրանսիայում կտրուկ վիճակը վատթարանում է, և Արման Ալբանը ստիպված թողնում է Փարիզը և 1940 թ. վերադառնում Եգիպտոս։ Ալեքսանդրիայում մի քանի ամիս ապրելուց հետո տեղափոխվում է Կահիրե, որտեղ ապրում և ստեղծագործում է մինչև իր կյանքի ավարտը՝ 1961 թ.¹։

Ալեքսանդր Սարուխան

Արաբերեն պարբերականը եգիպտահայ արվեստագետների երկրորդ սերնդի ներկայացուցիչներից մեծապես կարևորում է Տիրան Կարապետյանի, Պարույր Պարտիզպանյանի, Աուսքել Պատրիկի, Ալեքսանդր Սարուխանի, Օնիկ Ավետիսյանի, Արամ Ալբանի և Վահան Հովվյանի արվեստը։ 20-րդ դարի եգիպտոսի նշանավոր արվեստագետներից է երգիծաբան Ալեքսանդր Սարուխանը, ով համարվում է նաև Մերձավոր Արևելքի խոշորագույն ծաղրանկարիչներից մեկը։ 20-րդ դարում եգիպտոսում մեծ վերելք ապրեց քաղաքական երգիծանքը, որի հիմնադիրներից է Ալեքսանդր Սարուխանը։

¹ Նույն տեղում, էջ 7-14։

Ալեքսանդր Սարուխանը ծնվել է Բաթումի մերձակա գյուղերից մեկում 1898 թ., որտեղից 1909 թ. նրա ընտանիքը տեղափոխվում է Ստամբուլ: Ստամբուլում սովորել է արվեստի դպրոցում, որը Մեծ եղեռնի տարիներին փակվեց: 1922 թ. Թուրքիայում տեղի ունեցած հեղաշրջման ժամանակ Սարուխանը մեկնում է Ավստրիա, որտեղ սովորում է Վիեննայի Գրաֆիկական արվեստի դպրոցում: Վիեննայում ծանոթանում է մի եգիպտացու հետ, ում օգնությամբ 1924 թ. տեղափոխվում է Ալեքսանդրիա, որտեղ եգիպտահայ Արամ Բերբերյանի առաջարկով աշխատանքի է անցնում թերթերի կլիշաների պատրաստման արհեստանոցում¹: Արհեստանոցում մի քանի ամիս աշխատելուց հետո ծանոթանում է «Ռուզ ալ Յուալֆ» ամսագրի խմբագիր Մուհամմադ ալ Թաբաիի հետ, որը տեսնելով Ալեքսանդր Սարուխանի նկարները, անմիջապես ընդգրկում է նրան ամսագրի խմբագրության կազմում²: 1928 թ.-ից Սարուխանի երգիծական նկարները հեղեղեցին ամսագրի էջերը, որից հետո կարճ ժամանակահատվածում նա մեծ հռչակ ձեռք բերեց եգիպտացիների շրջանում: 1934 թ. Մուհամմադ ալ Թաբաին հիմնեց նաև այլ պարբերականներ, որոնց յուրաքանչյուր համարում տպագրվում էին նաև հայազգի արվեստագետի երգիծապատկերները: Հայազգի արվեստագետը հազարավոր ծաղրանկարներ է տպագրել Եգիպտոսի արաբալեզու և ֆրանսալեզու մամուլի էջերում³: Եգիպտացի արվեստագետ Ահմադ Սաբիթ Տուշանը նշում է, որ Սարուխանը Եգիպտոսում իրեն երջանիկ էր զգում և՛ որպես անհատ և՛ որպես արվեստագետ: «Եգիպտոսում ամուսնացավ,

¹ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 621:

² «Արեգ», 2014, № 51, էջ 16:

³ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 624:

դուստր ունեցավ¹, - իր հուշերում հիացմունքով նշում է արաբ արվեստագետը և խոստովանում, - Սարուխանից շատ բան եմ սովորել»²:

1929-1933 թթ. համաշխարհային ֆինանսական առաջին մեծ ճգնաժամը տարածվեց նաև Եգիպտոսում, որի պատճառը Բրիտանիայի վարած գաղութային քաղաքականությունն էր: Այդ տարիներին Ալեքսանդր Սարուխանը ապրել է Եգիպտոսում և այդ ճգնաժամի ու դրա հաղթահարմանն ուղղված եգիպտական իշխանությունների կատարած միջոցառումների ականատեսն է եղել, որոնք արտահայտել է իր մի քանի եգիժական նկարներում³: «1929-1933 թթ. տնտեսական ճգնաժամը Սարուխանի արվեստում» վերնագրով հորվածում ներկայացվում է հայ անվանի երգիծաբանի՝ տնտեսական ճգնաժամի վերաբերյալ մի քանի երգիծական նկարները: Հոդվածագիրը կարևորում է նաև Սարուխանի ներդրումը Եգիպտական մամուլի զարգացման գործում, ում ջանքերով 1930-ականներին հրատարակվել են մի քանի թերթեր⁴:

1938 թ. հայազգի երգիծաբանը նկարազարդել է Ե. Օոյանի «Ընկեր Փանջունի» և Հ. Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» երգիծական վեպերը, 1945 թ. հրատարակել է «Այս պատերազմը» խորագրով քաղաքական ծաղրանկարների ալբոմ: Սարուխանը ցուցահանդեսներ է ունեցել Կահիրեում, Ալեքսանդրիայում, Բեյրութում և Հալեպում⁵:

¹ , Արեգե, 2014, № 51, էջ 19:

² Նույն տեղում, էջ 14:

³ , Արևե, 2007, № 111, էջ 15:

⁴ Նույն տեղում, էջ 16:

⁵ Թոփուզյան Հ.Խ., նշվ. աշխ., էջ 311:

Եգիպտահայ հասարակական-քաղաքական գործիչ Պերճ Թերզյանը, Ալեքսանդր Սարուխանին ներկայացնելով Շարլ Ազնավուրի ու Վիլյամ Սարոյանի հետ, նշում է, որ վերոնշյալ հայազգի մարդիկ պահպանելով իրենց հայկական արմատները՝ միևնույն ժամանակ իրենց նոր հայրենիքներում դարձան տեղի հասարակության կողմից հարգված ու լիիրավ անդամներ¹:

«Արև»-ի արաբերեն հավելվածը ներկայացնում է տարբեր թերթերում աշխատած տարիներին հայազգի երգիծաբանի ստեղծած տարբեր կերպարները՝ «Եգիպտացի պարոնը», «Արաբ պարոնը» և այլն: Ալեքսանդր Սարուխանն իր ծաղրանկարներում պատկերել է ժամանակի քաղաքական կյանքի բարքերը ու համարվում է եգիպտական մամուլի քաղաքական երգիծանքի հիմնադիրը²:

«Սարուխանը 1967 թ. աղետի և 1973 թ. հաղթանակի միջև» հոգվածում արաբ մտավորական Աբդալլահ Ալի Ադիբը ներկայացնում է 1967–1973 թթ. Ալեքսանդր Սարուխանի երգիծապատկերները, դրանց բովանդակությունը: 1967 թ. պատերազմից հետո եգիպտա-ամերիկյան հարաբերություններում լարվածություն էր տիրում, ինչը լավագույնս արտացոլված է Սարուխանի երգիծապատկերներում: Բացի այդ, Ալեքսանդր Սարուխանի երգիծապատկերներում մեծ տեղ է հատկացված նշված ժամանակահատվածում ԱՄՆ-ի մերձավորարևելյան քաղաքականության, եգիպտա-սաուդական, եգիպտա-հորդանանյան հարաբերությունների լուսաբանմանը³:

¹ , Արև, 1998, № 10, էջ 1–4:

² Նույն տեղում, էջ 2:

³ , Արեգ, 2013, № 39, էջ 21–25:

1967–1973 թթ. ընթացքում Ալեքսանդր Սարուխանը շուրջ 90 երգիծապատկերներ է նկարել, որոնցում արտահայտված են Եգիպտոսի արտաքին և ներքին քաղաքականության կարևորագույն իրադարձությունները: 1967 թ. արաբա-իսրայելական պատերազմում կրած պարտությունը խորը հետք թողեց եգիպտական հասարակության շրջանում: 1967 թ. օգոստոսի 29-ին արաբական երկրները հարտում քաղաքում ընդունեցին երեք «ոչ»-երի քաղաքականությունը Իսրայելի նկատմամբ, ինչը լավագույնս պատկերված է Սարուխանի աշխատանքներից մեկում: Այս շրջանի երգիծապատկերներում հայազգի երգիծաբանը մեծ տեղ է հատկացրել արաբական մեկ միասնական ազգի, ընտանիքի թեմային: Ալեքսանդր Սարուխանի երգիծապատկերներում արտացոլված է 1971 թ. Եգիպտոսի նախագահի պաշտոնը ստանձնած Անվար Սադատի որդեգրած արտաքին և ներքին քաղաքականությունը, որի ընթացքում մի շարք արմատական փոփոխություններ իրականացվեցին¹: Սարուխանը պատկերել է նաև նավթի գործոնը միջազգային հարաբերություններում. մասնավորապես մի երգիծապատկեր է պատկերել, որում ներկայացվում է, թե ինչպես են արաբական երկրները փորձում նավթի գործոնը օգտագործել որպես քաղաքական լծակ արևմտյան պետությունների քաղաքականության վրա ազդելու համար²: Սարուխանը իր աշխատանքներում անդրադարձել է նաև Եգիպտոսում զինվորականների դերի լուսաբանմանը, որոնք առայսօր շարունակում են կարևոր դերակատարում ունենալ երկրի պետական կառավարման գործում³:

¹ Նույն տեղում, № 40, էջ 11–12:

² Նույն տեղում, էջ 12–13:

³ , Արեգե, 2013, № 40, էջ 6–15:

Ալեքսանդր Սարուխանը իր երգիծապատկերներում անդրադարձել է Սուեզի ջրանցքի ազգայնացմանը, արաբախուրայելական պատերազմներին, Ասուանի ջրամբարի կառուցմանը, մերկացրել Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում առկա խնդիրները¹: Ալեքսանդր Սարուխանը ստեղծագործական կյանքի ընթացքում հեղինակել է մոտ 40.000 երգիծապատկեր, որոնք տպագրվել են արաբական, հայկական և ֆրանսիական մամուլի էջերում²:

Ալեքսանդր Սարուխանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ Եգիպտոսում տեղի ունեցան տարբեր մշակութային միջոցառումներ: Նախ 1998 թ. դեկտեմբերի 6–14 տեղի ունեցավ երգիծաբանի հորեյանական ցուցահանդեսը, որի ընթացքում ցուցադրվեց հայ երգիծաբանի մոտ 100 աշխատանք: Այնուհետև, Կահիրեի Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից թողարկվեց Ալեքսանդր Սարուխանի լավագույն աշխատանքների ալբոմը, իսկ 1998 թ. դեկտեմբերի 14-ին տեղի ունեցավ հորեյարի հիշատակին նվիրված ֆորում, որի ընթացքում մասնակիցները հանդես եկան նրա կյանքի ու գործունեության վերաբերյալ զեկուցումներով³: Ի պատիվ հայազգի նկարչի՝ Կահիրեի քաղաքապետի 2006 թ. 2663 որոշմամբ Կահիրեի փողոցներից մեկը վերանվանվեց Ալեքսանդր Սարուխանի անունով⁴:

¹ Նույն տեղում, 2014, № 42, էջ 24–25:

² Սարուխան Ալ., *Մենք մեր սկիզբով*, Գահիրե, 1962, էջ 5:

³ Արևես, 1999, № 13, էջ 11:

⁴ Նույն տեղում, 2007, № 111, էջ 17:



Օնիկ Ավետիսյան

Արվեստագետ Օնիկ Ավետիսյանի ծննդյան կապակցությամբ «Արեգ»-ը տեղեկություններ է հաղորդում եգիպտահայ արվեստագետի կյանքի և ստեղծագործական գործունեության կարևոր էջերի մասին¹:

Օնիկ Ավետիսյանը ծնվել է 1898 թ. Թուրքիայի Բուրսա քաղաքում, որտեղից նրա ընտանիքը 1890 թ. տեղափոխվում է Ստամբուլ: Նախնական կրթությունը ստացել է Ստամբուլի Հինթիան և այլ դպրոցներում: 1920 թ. դպրոցն ավարտելուց հետո մեկ տարի արվեստի մասնագիտացված պարապմունքների է հաճախել անվանի նկարիչ Սերովկիե Քուրքիջյանի մոտ: 1901 թ. քանդակագործ Արա Սարգիսյանի հետ մեկնում է Եվրոպա՝ արվեստի բնագավառում բարձրագույն կրթություն ստանալու համար: Մի քանի ամիս Հռոմում ուսանելուց հետո 1921–1924 թթ. սովորում է Վիեննայի Գրաֆիկական արվեստի դպրոցում, որտեղ ծանոթանում է բազմաթիվ հայտնի արվեստագետների, այդ թվում Աշոտ Զորյանի և Ալեքսանդր Սարուխանի հետ, որը 1927 թ. ամռաննում է Օնիկ Ավետիսյանի քրոջ հետ: 1924–1925 թթ. Աշոտ Զորյանը պատկերում է Օնիկ Ավետիսյանին Վիեննայի այգիներից մեկում նստած նկարելիս: Այս նկարը ներկայումս գտնվում է Կահիրեի Օնիկ Ավետիսյանի անվան տուն-թանգարանում²: 1923 թ. հայազգի արվեստագետի երեք աշխատանքները ցուցադրվում են Վիեննայում կազմակերպված հանրային ցուցահանդեսում: Վիեննայում 1922 թ. ամռաննում է Իմրա անունով աղջկա հետ, որը որդի է պարգևում

¹ , Արեգ, 2014, № 52, էջ 3–12:

² Նույն տեղում, էջ 3:

հայազգի արվեստագետին: 1922 թ., Թուրքիայում ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող կոտորածների ժամանակ, Ավետիսյանի հայրն իր ընտանիքը ուղարկում է Վիեննա: 1924 թ. Վիեննայում ուսումն ավարտելուց հետո Օնիկ Ավետիսյանը Աշոտ Զորյանի հետ մեկնում է Հոռոմ ուսումն ամբողջացնելու համար, իսկ ընկերները վերադառնում են Հալեպ: Հոռոմի Գեղարվեստի ակադեմիայում երկու տարի սովորելու ընթացքում մասնակցում է մի քանի միջազգային ցուցահանդեսների: 1926 թ. Հոռոմում ուսումն ավարտելուց հետո կնոջ հետ վերադառնում է Հալեպ, սակայն եվրոպացի արիստոկրատ կինը չհարմարվեց Հալեպի կյանքին և 1928 թ. բաժանվելով Օնիկ Ավետիսյանից՝ վերադարձավ Վիեննա¹:

Կնոջից բաժանվելուց հետո Օնիկ Ավետիսյանի ընտանիքը տեղափոխվում է Կահիրե, որտեղ աշխատանքի է անցնում Նուբարյան վարժարանում: 1932 թ. կազմակերպում է աշխատանքների առաջին ցուցահանդեսը Կահիրեում, իսկ 1934 թ.¹ երկրորդ անհատական ցուցահանդեսը Ալեքսանդրիայում, որտեղ հանդիպում է իր վաղեմի ընկեր Աշոտ Զորյանին²:

1936–1941 թթ. հայազգի արվեստագետը տեղափոխվում է Նիկոսիա, որտեղ դասավանդում է Մելքոնյան վարժարանում: Այստեղ ապրած տարիների ընթացքում յուրաներկով բազմաթիվ նկարներ է նկարում, որոնցում պատկերված են Նիկոսիայի քաղաքային, Կիպրոսի բնության տեսարանները³: Կիպրոսում Օնիկ Ավետիսյանը 1938 թ. ամուսնանում է Անահիտ անունով մի աղջկա հետ: 1941 թ. կնոջ հետ մեկնում է Երուսաղեմի պատ-

¹ , Արեգե, 2014, № 52, էջ 4:

² Նույն տեղում, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 7:

րիարքարան, որտեղ մոտ երկու տարի ուսումնասիրում է հայկական ձեռագրերը, որից հետո նրա արվեստում նոր ոճային փոփոխություններ են նկատվում¹:

1945 թ. հայնազգի արվեստագետը 12 նկարով մասնակցում է Կահիրեում կազմակերպված եգիպտահայ արվեստագետների համատեղ մրցանիս խոշոր ցուցահանդեսին, որի ընթացքում ցուցադրվում են 20² եգիպտահայերի աշխատանքներ (ընդհանուր 123 նկար): Օնիկ Ավետիսյանի վաղ շրջանի գրաֆիկական նկարներում պատկերված են Ավստրիայի և Իտալիայի տեսարաններ, Հալեպի և Կահիրեի հին թաղամասերի պատկերներ³: 1930-ականներին պատկերում է Կիպրոսի տարբեր վայրերի, Ասուան և Լյուքսոր քաղաքների տեսարաններ, որոնք հիմնականում յուղաներկ աշխատանքներ են: Իր կյանքում շատ է ճանապարհորդել հայազգի արվեստագետը: Մասնավորապես, 1946 թ. մեկնում է Ասուան, ապա 1951 թ.⁴ Եվրոպա, այցելում Իտալիայի բազմաթիվ քաղաքներ³:

Օնիկ Ավետիսյանը նաև հողվածներ է տպագրել «Արև» օրաթերթում՝ եգիպտահայ արվեստագետների, եգիպտոսի մշակութային կյանքի մասին: «Եգիպտահայ արվեստագետների ընկերություն» միությունը առաջարկեց նրան 100–150 էջանոց գիրք հրատարակել եգիպտահայ նկարիչների մասին: Ութ տարի տևած քրտնաջան աշխատանքից հետո, տարբեր աղբյուրներից հավաքելով արժեքավոր նյութեր եգիպտահայ արվեստագետների մասին, Օնիկ Ավետիսյանին հաջողվեց ավարտին

¹ Արեգե, 2014, № 51, էջ 1–8:

² Նույն տեղում, էջ 3:

³ Նույն տեղում, էջ 4:

հասցնել գրքի շարադրանքը¹: Այն 1200 տպաքանակով լույս տեսավ 1959 թ., որի 494 էջերում 350 արվեստագետների, վերջիններիս 500-ից ավելի նկարների մասին արժեքավոր տեղեկություններ են ամփոփված²:

1960-ականներին լիբանանահայ առևտրական Վահե Սեթյանի հրավերով, ում հետ ծանոթացել էր Հոռմում սովորելիս, արվեստագետն իր կնոջ հետ մեկնեց Բեյրութ, որտեղ ապրեց մինչև 1967 թ.: Լիբանանում ապրած տարիներին Օնիկ Ավետիսյանը ավարտին հասցրեց մի շարք արժեքավոր գործեր. մասնավորապես 16 կրոնական բնույթի նկարներ Բեյրութի Սուրբ Նշան եկեղեցու պատերը զարդարելու համար³:

1968 թ. հայազգի արվեստագետը կնոջ և Ալեքսանդր Սարուխանի հետ այցելում է Հայաստան: Նրա աշխատանքներից ընդամենը մեկ նկարում է պատկերված Հայաստանի տեսարան: Սա զարմանալի չէ, քանի որ 70 տարեկան հասակում էր այցելել Հայաստան: 1970 թ. մահանում են հայազգի արվեստագետի կինն ու ընկերը՝ Աշոտ Զորյանը: Դրանից հետո, մինչև իր մահը՝ 1974 թ., այլևս կարևոր իրադարձություն տեղի չունեցավ Օնիկ Ավետիսյանի կյանքում:

Վիեննայում Օնիկ Ավետիսյանը հմտացավ նաև փորագրության մեջ: Մինչև 1932 թ. մոտ 40 փորագրական աշխատանք է ստեղծագործել, որոնցով մասնակցել է մի քանի ցուցահանդեսների: 1936 թ. Օնիկ Ավետիսյանը անցում է կատարում յուղանկարներին: Կիպրոսում ապրած տարիներին հեղինակել է

¹ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 614:

² Արեգե, 2014, № 51, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 6:

20–25 յուղանկար (անմիջական ոճով), որոնցում պատկերված են Եգիպտոսի տարբեր վայրերի տեսարաններ¹:

Իր կյանքի ընթացքում հայազգի նկարիչը Եգիպտոսի ու Եվրոպայի տարբեր քաղաքներում կազմակերպել է բազմաթիվ ցուցահանդեսներ²: Օնիկ Ավետիսյանի նշանավոր նկարներից են «Ընտանիքը» (1944 թ.), «Մոր մահը» (1957–1958 թթ.), որ նկարել է մոր մահվանից հետո: Նկարի կենտրոնում մայրիկի մարմինն է՝ շրջապատված երեք երեխաներով³:

1930-ականներին Օնիկ Ավետիսյանը նաև մոտ 15 քանդակ է ստեղծել, որոնց մեծ մասը կիսանդրիներ են: Դրանցից նշանավոր են հոր՝ Հակոբ Ավետիսյանի, Պողոս Նուբար փաշայի և Տիգրան Աբրոյանի կիսանդրիները: Հայազգի արվեստագետի աշխատանքների ընդհանուր թիվը 125–130 է⁴: Ամփոփելով Օնիկ Ավետիսյանի ստեղծագործական գործունեությունը՝ կարող ենք փաստել, որ հայազգի արվեստագետը իրեն փայլուն դրսևորել է վեց տարբեր ոլորտներում՝ փորագրության, նկարչության, քանդակագործության, եգիպտահայ պատմության ուսումնասիրման, ինչպես նաև զբաղվել է դասավանդմամբ և տասնյակ հոգվածներ է գրել եգիպտահայ նշանավոր արվեստագետների մասին:

Տիրան Կարապետյան

Եգիպտահայ արվեստագետ Տիրան Կարապետյանը (1882–1963 թթ.) աշակերտել է Երվանդ Դեմիրճյանին, իսկ 1900–1905 թթ. սովորել է Փարիզի Ժյուլիանի անվան նկարչական ակադե-

¹ , Արևելք, 2014, № 51, էջ 8:

² , Արևելք, 1999, № 22, էջ 15–16:

³ , Արևելք, 2014, № 52, էջ 9:

⁴ Նույն տեղում, էջ 3–11:

միայում: Կյանքի ընթացքում ունեցել է բազմաթիվ ցուցահանդեսներ: Եգիպտական մամուլը բարձր է գնահատել նրա ստեղծագործությունները¹:

Պարույր Պարտիզպանյան

Պարույր Պարտիզպանյանը (1887–1932 թթ.) ավարտել է Ստամբուլի Գեղարվեստի դպրոցը, 1910 թ. եղել է Գերմանիայում, իսկ 1923 թ. մշտական բնակություն է հաստատել Եգիպտոսում: Մասնակցելով տարբեր հանրային ցուցահանդեսների՝ նա աչքի ընկնող տեղ է գրավել եգիպտական նկարիչների շարքում: Մահացել է թոքախտից: 1936 թ. Կահիրեում կազմակերպվել է նրա ստեղծագործությունների հետմահու ցուցադրությունը²:

Արամ Ալբան

Հայտնի եգիպտահայ լուսանկարիչ Արամ Ալբանի ծննդյան 130-ամյակի կապակցությամբ Հրանտ Քեշիշյանը, իդում անելով Արամ Ալբանի 1959 թ. դեկտեմբերին գրած «Հուշեր»-ին, ներկայացնում է հայազգի լուսանկարչի կյանքն ու գործունեությունը: Արամ Ալբանի լուսանկարչական գործունեությունը կարելի է բաժանել երեք շրջանի: Առաջին շրջանը ընդունված է համարել 1902–1919 թթ., երբ լուսանկարիչը ապրում և ստեղծագործում էր Ալեքսանդրիայում: Այնուհետև, 1920–1940 թթ. Արամ Ալբանը հաջողությունների է հասնում Եվրոպայում, որտեղ մասնակցում է բազմաթիվ միջազգային ցուցահանդեսների, իր աշխատանքների մի քանի անհատական ցուցահանդես է կազ-

¹ , Արեգե, 2012, № 27, էջ 9–11:

² Նույն տեղում, էջ 12–13:

մակերկրում Փարիզում, Բրյուսելում: Եվ վերջապես վերջին շրջանը 1941–1961 թթ. է, որի ընթացքում հայազգի լուսանկարիչը ստեղծագործել է Կահիրեում: Արամ Ալբանը աշխատանքի ընթացքում օգտագործում էր ժամանակի տեխնիկական նորամուծությունները, որի շնորհիվ մեծ հռչակ է վայելում եգիպտոսում¹:

Աշոտ Զորյան

Պարբերականը եգիպտահայ արվեստագետների երրորդ սերնդից առանձնացնում է Գրիգոր Մկրտչյանին, Աշոտ Զորյանին, Արթին Տուքալյանին, Արտավազ Յուզգաթալյանին, Բյուզանդ Ջոջամանյանին, Հրանտ Անդրանիկյանին, Սիմոն Շահիրեյանին, Սիմոն Սամսոնյանին, Ջոն Փափազյանին, Հովհաննես Դազիբջանին:

Հրանտ Քեշիշյան, արվեստագետներ Աշոտ Զորյանի և Սիմոն Սամսոնյանի ծննդյան 100-ամյակների կապակցությամբ, ընթերցողին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում վերջիններիս կյանքի ու ստեղծագործությունների մասին:

Աշոտ Զորյանը ծնվել է 1905 թ. Թուրքիայում, Տրապիզոնից 120 կմ արևմուտք ընկած Զիրասոն քաղաքում: Մեծ եղբունի տարիներին նրա ընտանիքը աքսորվում է: Աքսորի ժամանակ Շապին Գարահիսար քաղաքում ոմն թուրք գնում է նրան, որպես ծառա աշխատեցնելով իր տանը՝ այդպես փրկելով Զորյանին մահից: Այնուհետև Զորյանը տեղափոխվում է Տրապիզոն, որտեղ նա հանդիպում է իր հարազատներից մեկին²: Աշոտ Զորյանը իր հարազատի ընտանիքի հետ տեղից տեղ է տեղա-

¹ , Արեգե, 2013, № 39, էջ 6–11:

² Նույն տեղում, 2015, № 59, էջ 16:

փոխվում՝ վերջնականապես հաստատվելով Բաթում քաղաքում: Վրաստանում հանդիպում է իր քեռուն, որի օգնությամբ 1921 թ. տեղափոխվում է Ստամբուլ և ընդունվում Եսայան որբանոց, որտեղ ուսուցանելու ընթացքում հատուկ հետաքրքրություն է ցուցաբերում նկարչության հանդեպ: Որբանոցում որոշում են նրան ուղարկել Վիեննա՝ նկարչության ասպարեզում: Խոր մասնագիտական գիտելիքներ ձեռքբերելու համար: Անչափահաս լինելու պատճառով քեռու հետ է մեկնում Վիեննա, որտեղ 1922–1925 թթ. սովորում է Գեղարվեստի դպրոցում: Հայազգի արվեստագետը մի քանի տարի ուսանել է նաև Հռոմում, որտեղ ծանոթացել է բազմաթիվ իտալացի արվեստագետների հետ, որոնք մեծ ազդեցություն են թողել հայազգի արվեստագետի հետագա գործունեության վրա: Եվրոպայում սովորելու ընթացքում Աշոտ Զորյանը մասնագիտացավ կանանց մերկ նկարներ ստեղծագործելու գործում¹: Հռոմում ուսումն ավարտելուց հետո 1929 թ. մեկնում է Ալեքսանդրիա՝ իր քեռու փոքր ընտանիքի հետ ապրելու: Ալեքսանդրիայում հաստատվելուց հետո 1930 թ. աշխատանքի է անցնում Պողոսյան վարժարանում, ինչպես նաև սկսում է նկարչական գործունեությունը: 1936 թ. կազմակերպում է իր անհատական առաջին ցուցահանդեսը, որին ներկայացրել է 60 աշխատանք²: Ալեքսանդրիայում հայազգի արվեստագետը սիրահարվում է Սիրվարդ անունով մի ամուսնացած կնոջ, որի ընտանիքը 1936 թ. զոհվում է: Սակայն հայազգի արվեստագետը այդպես էլ չի ամուսնանում՝ իրեն ամբողջությամբ նվիրելով արվեստին: 1941 թ. Զորյանը տեղափոխվում է Կահիրե, որտեղ անմիջապես Գալուստյան վար-

¹ , Արեգե, 2015, № 59, էջ 17:

² Ռիֆայթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 615:

ժարանում նշանակվում է արվեստի ուսուցիչ, դասավանդում մինչև 1952 թ.: 1942 թ. կազմակերպում է իր անհատական երկրորդ ցուցահանդեսը: Ցուցահանդեսից հետո շատ երիտասարդներ ցանկություն են հայտնում աշակերտելու նրան, ինչի կապակցությամբ բացում է նկարչական արհեստանոց¹: Իր կյանքի ընթացքում կազմակերպել է 9 անհատական ցուցահանդես, այդ թվում, Հալեպում և Բեյրութում: Բացի այդ, հայազգի արվեստագետը մասնակցել է 1945 թ., 1953 թ., 1958 թ. և 1962 թ. արվեստագետների միության, 1949 թ. և 1952 թ. Փարիզում և Վիեննայում կազմակերպված ցուցահանդեսներին²: 1968 թ. մեկնում է ԱՄՆ՝ քրոջ մոտ, այնտեղից վերադառնալուց հետո ծանր հիվանդանում է, որից հետո՝ 1970 թ., եգիպտահայ նշանավոր արվեստագետը հեռանում է կյանքից: Քանի որ երեխաներ չունեի, նրա նկարչական ժառանգությունը բաժանվեց երեք մասի, որից երկուսը անցավ քույրերին, իսկ երրորդը՝ ամենամեծ բաժինը (մոտ. 210 նկար), ուղարկվեց Հայաստանի ազգային պատկերասրահ: Աշոտ Զորյանի աշխատանքների մոտ 1/3-ը դիմանկարներ են, մասնավորապես, կանանց դիմանկարներ, որոնցում հեղինակը պատկերել է կնոջ գեղեցկությունը: Աշոտ Զորյանի աշխատանքներում մեծ թիվ են կազմում նաև ծաղիկները, բնապատկերները, ծովանկարները, քաղաքային տեսարանները: Բացի այդ, Աշոտ Զորյանը հեղինակել է կրոնական բնույթի նկարներ, որոնք զարդարում են Կահիրեի հայ առաքելական եկեղեցու պատերը³:

¹ Նշենք, որ 1920–1930-ականների ծնված եգիպտահայ արվեստագետների ճնշող մեծամասնությունը Աշոտ Զորյանի աշակերտներն են եղել:

² Արեգե, 2015, № 59, էջ 19:

³ Արեգե, 2015, № 59, էջ 15–21:

Սիմոն Սամսոնյան

Սիմոն Սամսոնյանը ծնվել է Թուրքիայի ծովափնյա Սամսոն քաղաքում 1913 թ.: 1915 թ. կորցնելով ծնողներին՝ հայտնվում է Զմյուռնայի որբանոցներից մեկում, որտեղից 1922 թ. հայ փախստականների հետ աքսորվում է նախ Կ. Պոլիս, ապա Հունաստան, իսկ 1927 թ. տեղափոխվում է Եգիպտոս: Դեռ մանուկ հասակից զգացվել է նրա սերը դեպի արվեստը: Սիմոն Սամսոնյանը 1927–1932 թթ. սովորել է Կահիրեի Գալուստյան դպրոցում, որից հետո 1932–1936 թթ. սովորել է Լեոնարդո դա Վինչիի անվան արվեստի դպրոցում: Այն ավարտելուց հետո կազմակերպել է իր առաջին անհատական ցուցահանդեսը: 1935–1940 թ. Գալուստյան դպրոցում աշխատել է որպես ուսուցիչ: 1939 թ. ամուսնացել է իր աշակերտ Լյուսիի հետ¹:

1936 թ. կազմակերպվեց հայազգի արվեստագետի աշխատանքների առաջին անհատական ցուցահանդեսը: Նկարչության ասպարեզում գիտելիքները հարստացնելու նպատակով 1950 թ. հայազգի նկարիչը մեկնում է եվրոպական տարբեր երկրներ: 1950 թ. եվրոպա այցելելուց և բազմաթիվ համաշխարհային նշանավոր արվեստագետների աշխատանքների ծանոթանալուց հետո հայազգի արվեստագետի մոտ ոճային որակական փոփոխություններ են տեղի ունենում, ինչը արտահայտվում է 1950 թ. հետո ստեղծագործած նկարներում: Հայազգի արվեստագետը սկսում է իր նկարներում պատկերել իրական կյանքի տարբեր դրվագներ²: 1950 թ. Եգիպտոսի կառավարական հանձնաժողովը Վիեննայի ցուցահանդեսների

¹ Նույն տեղում, էջ 21–22:

² Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 612–613:

համար եզիպտացի արվեստագետների աշխատանքների շարքում ընդգրկեց նաև հայազգի արվեստագետի որոշ աշխատանքներ: Սամսոնյանը ստեղծել է բազմաթիվ նկարներ, որոնցում պատկերել է երաժիշտների, իր երեխաների դիմանկարները: Սամսոնյանի նկարներում մեծ տեղ են գրավում նաև կնոջ ու երեխայի պատկերները՝ շաղախված տխրությամբ ու ցավով¹:

Հայազգի արվեստագետը մասնակցել է Կահիրեում 1945 թ., 1958 թ., 1962 թ. և Ալեքսանդրիայում 1953 թ. կազմակերպված ցուցահանդեսներին: Անհատական ցուցահանդեսները կազմակերպել է 1936, 1949, 1961, 1965 և 1967 թվականներին Բեյրութում, 1968 թ.² Աթենքում, 1969 թ.³ Տորոնտոյում, 1972 և 1977 թվականներին՝ Նյու Յորքում և, վերջապես, 1973 թ.⁴ Երևանում, որի ընթացքում 25 նկար է նվիրել Ազգային պատկերասրահին: Մահացել է 2003 թ. Նյու Յորքում⁵:

Բյուզանդ Ջոջամանյան

Եզիպտահայ արվեստագետների շարքում առավել հայտնի արվեստագետներից է նկարիչ Բյուզանդ Ջոջամանյանը, որի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ արաբերեն պարբերականը ընթերցողին ներկայացնում է հայազգի նկարչի կյանքն ու գործունեությունը: Բյուզանդ Ջոջամանյանը ծնվել է 1909 թ. դեկտեմբերի 31-ին Թուրքիայի Տրապիզոն քաղաքում: 1915–1916 թթ. հայկական կոտորածների ընթացքում ծնողներին կորցնելուց հետո Բյուզանդ Ջոջամանյանը երկար տարիներ ապրում է որբանոցներում, որտեղից 1920-ականների սկզբներին տեղափոխվում է Հունաստան, իսկ 1927 թ., 18 տարեկան

¹ , Արևել, 1999, № 17, էջ 8–11:

² , Արեգե, 2015, № 59, էջ 21–25:

հասակում, հաստատվում է եգիպտոսում: Արվեստի նկատմամբ հետաքրքրությունն ի հայտ է եկել դեռևս Հունաստանում անթափանչ տարիների ընթացքում, իսկ Կահիրեում հաստատվելուց հետո երեք տարի ուսանել է Լեոնարդո դա Վինչիի անվան արվեստի դպրոցում: Ուսումնառությանը զուգահեռ աշխատել է Հարություն Ամիրյանի տպարանում, որը, նկատելով Բյուզանդ Ջոջամանյանի տաղանդը, ուղարկում է Իտալիա՝ Հռոմի Գեղարվեստի ակադեմիայում կրթությունը շարունակելու¹: 1934 թ., ուսումնառության ավարտից հետո, հայազգի արվեստագետը վերադառնում է Կահիրե և սկսում ստեղծագործական բուռն գործունեությունը: Ամուսնացել է 1944 թ. Շաքե Աբոյանի հետ, ունեցել երեք երեխա: Բյուզանդ Ջոջամանյանը եգիպտահայ համայնքի նշանավոր արվեստագետներից է, ով իր գործերով բազմաթիվ ցուցահանդեսների է մասնակցել լաշխարիի տարբեր քաղաքներում՝ Կահիրեում, Ալեքսանդրիայում, Հռոմում, Սան Պաուլոյում և այլն²: «Արեգ»-ը անդրադառնում է 1950–1960-ականներին հայազգի արվեստագետի 26 անհատական ցուցահանդեսներից մի քանիսի լուսաբանմանը³: 1983 թ. երևանում բացվեց նրա անհատական ցուցահանդեսը, որի ընթացքում տարբեր տարիների ստեղծագործած 68 կտավներից 12 կտավ հեղինակը նվիրաբերեց Հայաստանի Ազգային պատկերասրահին⁴: 1972 թ. ընտանիքով տեղափոխվում է ԱՄՆ: Նամահանում է 1993 թ. Լոս Անջելոս քաղաքում: Ստեղծագործական վաղ շրջանում Բյուզանդ Ջոջամանյանը վառ գույներով

¹ , Արեգ, 2010, № 3, էջ 6:

² Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 610–611:

³ , Արեգ, 2010, № 3, էջ 4–11:

⁴ , Արեգ, 2010, № 3, էջ 7:

պատկերել է բնության տեսարաններ, դիմանկարներ, ծաղիկներ և այլն: 1940–1960-ական թթ. աշխատանքներում գերիշխում են զգացմունքային նկարները: Այս շրջանում Բյուզանդ Ջոջամանյանը սկսում է պատկերել մարդկային հարաբերությունները, նկարում բազմաթիվ կտավներ սիրո, ընտանիքի և ընկերության վերաբերյալ: Արաբերեն պարբերականը հայազգի արվեստագետի աշխատանքներից առանձնացնում և արժևորում է «Նրանց աշխարհը» կտավը, որում պատկերված է եգիպտական ավանդական գյուղացու ընտանիքը, և «Մայրն ու նրա երեխաները» կտավը, որում հեղինակը պատկերել է մորը և երեխաներին: Այս կտավում նկարիչն արտահայտել է Մեծ եղեռնի տարիներին հայ ժողովրդին, այդ թվում իր ընտանիքին, պատած վիշտը: 1970–1980-ական թթ. աշխատանքներում զգացմունքային բնույթի նկարները իրենց տեղը զիջում են ապագայի հանդեպ լավատեսությամբ, հույսով ու հավատով համեմված նկարներին¹:

Եգիպտահայ արվեստագետ Բյուզանդ Ջոջամանյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ ՀԲԸՄ-ն ցուցահանդես էր կազմակերպել Կահիրեում 2009 թ. նոյեմբերի 23–29 ընկած ժամանակահատվածում, որտեղ ցուցադրված էին եգիպտահայ նշանավոր արվեստագետներ Բյուզանդ Ջոջամանյանի, Տիրան Կարապետյանի, Ալեքսանդր Սարուխանի, Սիմոն Շահիրիքյանի, Երվանդ Դեմիրճյանի և այլոց աշխատանքները²:

Հովհաննես Դազիրջյան

¹ Նույն տեղում, էջ 10–11:

² , Արեգե, 2010, № 1, էջ 14:

Եգիպտահայ երրորդ սերնդի անվանի արվեստագետներից է Հովհաննես Դազիբջյանը, որը ծնվել է 1925 թ. Կահիրեում: Նախնական կրթությունը ստացել է Գալստյան վարժարանում, որտեղից 1940 թ. դուրս է եկել աշխատելու՝ ընտանիքի հոգսը հոգալու համար: 1941–1945 թթ. աշխատել է բրիտանական ռազմական զորամասում, որտեղ ծանոթացել է Վահրամ Մանավանի, ճարտարապետ-ինժեներ Հրազդան Պալյանի հետ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո՝ 1947–1951 թթ., հայազգի արվեստագետը աշխատել է Հրազդան Պալյանի ինժեներական գրասենյակում: Որպես արվեստագետ ստեղծագործել է մինչև 1966 թ., երբ ծանր սոցիալական պայմանների պատճառով, նկարչությունը շարունակելու մոտիվացիայի բացակայության պայմաններում թողել է նկարչությունը: Հովհաննես Դազիբջյանը 1953 թ. կազմակերպել է իր առաջին և վերջին անհատական ցուցահանդեսը: 1950–1960 թթ. նա ստեղծել է 50–60 յուղաներկ աշխատանք, որոնցում պատկերված են հիմնականում Կահիրեի քաղաքային տեսարաններ: 1960-ականների սկզբներին մի քանի տարի աշխատել է ջրաներկով՝ ստեղծելով մի քանի նկարներ: Բացի այդ, Հովհաննես Դազիբջյանը զբաղվել է դեկորացիաների, յուղաներկ նկարների բարեկարգմամբ և վերականգնելու գործով: Այս ոլորտում նրա կատարած ամենահայտնի աշխատանքը անվանի արվեստագետ Տիրան Կարապետյանի 90 նկարների վերականգնումն էր, որը կատարել է 1981–1983 թթ.: Ինչևէ, երկարատև դադարից հետո Հովհաննես Դազիբջյանը շարունակել է ստեղծագոր-

ծել և մասնակցել է 2008 թ. Ալեքսանդրիայում և 2009 թ. Կահիրեում կազմակերպված ցուցահանդեսներին¹:

Սիմոն Շահիրիքյան

Եգիպտահայ երրորդ սերնդի նշանավոր արվեստագետներից է նաև Սիմոն Շահիրիքյանը, որի ընտանիքը սերում է Արևմտյան Հայաստանի Սվազ նահանգից, որտեղից 19-րդ դարի 80-ականներին մեկնում է Ստամբուլ: 1896 թ. ջարդերից հետո Սիմոն Շահիրիքյանի ընտանիքի մի մասը գաղթում է Բուլղարիա, մի մասը՝ Եգիպտոս, որտեղ 1911 թ. ծնվում է Սիմոն Շահիրիքյանը: Վերջինս նախնական կրթությունը ստանում է Կահիրեի Գալուստյան դպրոցում, որտեղ դասավանդում էին հայտնի արվեստագետներ Երվանդ Դեմիրճյանը, ծաղրանկարիչ Ալեքսանդր Սարուխանն ու այլոք²: 1923 թ. մահանում է Շահիրիքյանի հայրը, որից հետո Շահիրիքյանը ուսումնառության ընթացքում ստիպված է լինում աշխատել ընտանիքի հոգսերը հոգալու համար: 1927 թ. Գալուստյան դպրոցն ավարտելուց հետո ընդունվում է Եգիպտոսում անգլիական գործի հրամանատարական կենտրոնին պատկանող ճարտարապետանախագծային բաժին: 1931 թ. Շահիրիքյանը Կահիրեի Նուբարյան դպրոցում անցնում է աշխատանքի որպես արվեստի դասախոս, իսկ 1938 թ.՝ Եգիպտոսում գտնվող անգլիական գործերում, որպես նախագծող: Այդ պաշտոնում աշխատում է ընդհուպ մինչև 1956 թ.՝

¹ . Արեգե, 2015, № 57, էջ 23–24:

² . Արևե, 2006, № 104, էջ 1–3:

Եգիպտոսից անգլիական զորքերի հեռանալը¹: Դրանից հետո նա վերադառնում է Կահիրե ու զբաղվում իր նախընտրած արվեստով՝ դիմանկարչությամբ՝ հեղինակելով բազմաթիվ աշխատանքներ: Հոդվածագիրը ավստոսանքով նշում է, որ Շահրիքյանը իր աշխատանքները ներկայացրել է անհատական երկու ցուցահանդեսներում 1970 թ. Կահիրեում և 1982 թ. Ալեքսանդրիայում: Կյանքի վերջին տարիներին նա տառապում էր քաղցկեղով, որի պատճառով մահացավ 1989 թ.: Հոդվածագիրը հպարտությամբ արժևորում է Սիմոն Շահրիքյանի և՛ մարդկային, և՛ արվեստագիտական արժանիքները²:

Մեկ ուրիշ համարում Հրանտ Քեշիշյանը լուսաբանում է 2000 թ. հունիսի 6–24 Եգիպտոսում տեղի ունեցած ցուցահանդեսը, որտեղ ներկայացված էր 20-րդ դարի եգիպտահայ նշանավոր նկարիչ Սիմոն Շահրիքյանի 85 աշխատանք³: Սիմոն Շահրիքյանի վաղ շրջանի աշխատանքներում տիրապետող են արտաքին միջավայրի տեսարանները, նկարչի հետագա աշխատանքներում զգացվում է ֆրանսիական նկարչության ազդեցությունը: Այնուհետև հայ արվեստագետի աշխատանքներում մեծ տեղ են գրավում անհատական նկարները, դիմանկարները, իսկ Սիմոն Շահրիքյանի արվեստի վերջին շրջանում գերակշռում են նոր ռեալիզմի ոճին հատուկ նկարներ⁴:

Ալեն Զիզիմյան

Արաբերեն պարբերականը ժամանակակից եգիպտահայ արվեստագետներից առանձնացնում է Հակոբ Հակոբյանին,

¹ , Արեգե, 2011, № 17, էջ 7–8:

² , Արև, 2006, № 104, էջ 4–5:

³ Նույն տեղում, 2000, № 31, էջ 12–14:

⁴ , Արեգե, 2011, № 17, էջ 7–8:

Հովհաննես Դանգյանին, Նորա Ազարարյանին, Արմենուհի Ժամկոչյանին, Շուշան Էգոյանին, Ռոզ Փափազյանին, Վահե Մուղալյանին, Շանթ Ավետիսյանին, Մարգարիտա Բալտիյանին, Հրանտ Քեշիշյանին, Սարգիս Տուսոնյանին, Վահան Բեկյանին, Արման Հակոբին, Ալեն Զիզիմջանին, Մարի Արթինյանին և Գեղամ Ճաղալյանին ու համառոտ ներկայացնում վերջիններիս ստեղծագործական գործունեությունը¹:

Ալեն Զիզիմջանի ծննդյան 50-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը ընթերցողին ներկայացնում է հայազգի արվեստագետի կյանքն ու գործունեությունը: Ալեն Զիզիմջանը ծնվել է 1960 թ. նոյեմբերի 20-ին Կահիրեում: Նախնական կրթությունը Գալուստյան դպրոցում ստանալուց հետո 1979–1984 թթ. սովորել է գեղարվեստի ֆակուլտետում: Անհատական առաջին ցուցահանդեսը կազմակերպել է 1983 թ., որից հետո ևս չորս անհատական ցուցահանդես: Բացի այդ, հայազգի արվեստագետը բազմիցս մասնակցել է հանրային ցուցահանդեսների, այդ թվում, 2008 թ. և 2009 թ. Ալեքսանդրիայում և Կահիրեում ՀԲԸՄ-ի կողմից կազմակերպված եգիպտահայ արվեստագետների աշխատանքների միացյալ ցուցահանդեսին²:

Մարտիրոս Բալյան

Շարունակելով հորեղբայրների շարքը՝ արաբերեն հավելվածը ներկայացնում է քարտեզագիր Մարտիրոս Բալյանի, արվեստագետներ Մարտիրոս Մանուկյանի, Շանթ Ավետիսյանի, Վահե Վարժապետյանի և Քրիստինա Թաշադրազյանի կյանքն ու գործունեությունը: Մարտիրոս Բալյանը ծնվել է 1891 թ. Արաբ-

¹ , Արեգ 2011, № 17, էջ 16–25:

² Նույն տեղում, 2010, № 6, էջ 19–20:

կիր քաղաքի մոտակա գյուղերից մեկում, որտեղից 1905 թ. ընտանիքով տեղափոխվել է Եգիպտոս: Նախնական կրթությունը ստացել է Կահիրեի Գալուստյան դպրոցում, որից հետո, 1909–1913 թթ., սովորել է ճատարապետական ուսումնարանում, մասնագիտացել քարտեզագրության մեջ: Մարտիրոս Բալյանը դասավանդել է Գալուստյան, Նուբարյան և Բերբերյան դպրոցներում: Կյանքի ընթացքում կազմել է Օսմանյան կայսրության կազմում Արևմտյան Հայաստանի վեց նահանգների, Խորհրդային Հայաստանի, ՊորտՍալիդի հայ գաղթականների քարտեզները և այլն: Հայազգի քարտեզագիրը նաև ակտիվ հասարակական գործունեություն է ծավալել Եգիպտոսի հայ համայնքի շրջանում¹ Հնչակյան կուսակցության հովանու ներքո²:

Մարգարիտա Մանուկյան

Մարգարիտա Մանուկյանը ծնվել է 1941 թ. Կահիրեում: Գալուստյան դպրոցն ավարտելուց հետո սովորել է Լեոնարդո դա Վինչիի անվան արվեստի դպրոցում, մասնագիտացել նկարչության, մասնավորապես, զարդանկարչության ոլորտում: Մարգարիտա Մանուկյանը ստեղծագործել է հիմնականում յուղաներկով՝ նկարել Եգիպտացի կնոջը նվիրված բազմաթիվ դիմանկարներ: 1982 թ., 1984 թ., 1986 թ. Կահիրեում և Ալեքսանդրիայում կազմակերպել է իր անհատական աշխատանքների ցուցահանդեսները: Հայազգի արվեստագետը երկար տարիներ դասավանդել է Կահիրեի Գալուստյան դպրոցում³:

Շանթ Ավերիսյան

¹ Արեգե, 2011, № 17, էջ 6:

² Արեգե, 2011, № 17, էջ 6:

³ Նույն տեղում, էջ 9:

Շանթ Ավետիսյանը ծնվել է 1951 թ. Կահիրեում: Սովորել է Գալուստյան դպրոցում, աշակետել է Աշոտ Զորյանին՝ մասնագիտանալով նկարչության ոլորտում: Երիտասարդ արվեստագետը 1969 թ. Գալուստյան դպրոցի դահլիճում հայ արվեստագետներ Հրանտ Քեշիշյանի և Վահե Վարժապետյանի հետ միացյալ ցուցահանդես են կազմակերպում: Ոինեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ Եգիպտոսի տարբեր քաղաքներում: Շանթ Ավետիսյանը 1970–1974 թթ. սովորել է Կառնադյի Մոնրեալի Գեղարվեստի ուսումնարանում, իսկ 1974–1976 թթ. Փարիզի Զարդանկարչության բարձրագույն դպրոցում¹: Հեղինակել է 300-ից ավելի կտավներ, որոնցում պատկերել է արաբ նշանավոր մարդկանց դիմանկարներ, բնապատկերներ և այլն: 2006 թ. Լոնդոնում հրատարակվել է Շանթ Ավետիսյանի լավագույն աշխատանքների ալբոմը²:

Քրիստինա Թաշադրազյան

Քրիստինա Թաշադրազյանը ծնվել է 1961 թ. Կահիրեում, սովորել է տեղի Գալուստյան դպրոցում, ապա Գեղարվեստի վարժարանում: Ուսումն ավարտելուց հետո, 1989–1991 թթ., ուսանել է Փարիզի Գեղարվեստի ակադեմիայում: Հայազգի արվեստագետը ունեցել է բազմաթիվ անհատական ցուցահանդեսներ և առ այսօր շարունակում է ստեղծագործել Եգիպտոսում: Ստեղծագործելուն զուգահեռ Քրիստինա Թաշադրազյանը զբաղվում է ուսուցչական գործունեությամբ՝ դասավանդելով Եգիպտոսի հայկական տարբեր դպրոցներում³:

¹ , Արեգե, 2011, № 17, էջ 11:

² Նույն տեղում, էջ 11–12:

³ , Արեգե, 2011, № 17, էջ 14–15:

Վահե Վարժապետյան

Վահե Վարժապետյանը ծնվել է 1951 թ. Կահիրեում: Սովորել է Գալուստյան դպրոցում, աշակերտել է Աշոտ Զորյանին: 1968–1971 թթ. մեկնել է Եվրոպա, ծանոթացել նշանավոր բազմաթիվ արվեստագետների հետ, որոնք մեծ ազդեցություն են թողել հայազգի արվեստագետի վրա: Նկարչական գործունեության ընթացքում ունեցել է 16 անհատական ցուցահանդես, մասնակցել 20-ից ավելի հանրային ցուցահանդեսների և առ այսօր նույնպես շարունակում է ստեղծագործել¹: Վահե Վարժապետյանը ստեղծագործում է հիմնականում յուղաներկով և տարբեր թեմաների է անդրադառնում իր կտավներում: Նրա աշխատանքներում մեծ թիվ են կազմում բնապատկերները, ծովային, գյուղական, քաղաքային տեսարանները, ինչպես նաև որոշ նկարներում նկարիչը պատկերել է կենդանիներ, ծաղիկներ²:

Հրանտ Մինաս Քեշիշյան :

Արաբերեն պարբերականը եգիպտահայ երաժիշտներից առանձնացնում և տեղեկություններ է հաղորդում երգահան Հրանտ Մինաս Քեշիշյանի³ կենսագրության և երաժշտական լավագույն ստեղծագործությունների մասին: Եգիպտահայ երաժիշտների շարքում իր ուրույն տեղն ունի անվանի հայ երաժիշտ, երգահան Հրանտ Քեշիշյանը, որի երաժշտական գործունեության վերաբերյալ ամսագիրը ներկայացնում է վերջինիս

¹ Նույն տեղում, էջ 12–13:

² Նույն տեղում, էջ 14:

³ Հրանտ Քեշիշյանը ծնվել է 1947 թ. Եգիպտոսում: 1974–1989 թթ. ապրել է մայր հայրենիքում, որտեղից 1980-ականների վերջերին կրկին գաղթել և բնակություն է հաստատել Եգիպտոսում:

հուշերը, որտեղ հայ անվանի երգահանը լուսաբանում է իր կյանքի անցած ուղին, խոսում կյանքի ընթացքում ձեռք բերած հաջողությունների մասին: Իր հուշերում Հրանտ Քեշիշյանը նշում է, որ երաժշտության հանդեպ իր սերը առաջացել է 2-րդ դասարանում (1955–1956 թթ.), երբ Կահիրեի Գալուստյան դպրոցում, որտեղ ուսանել է հայ երաժիշտը, երաժշտության առարկան սկսեց դասավանդել մանեստրո Էդվարդ Հակոբյանը: Վերջինս 1955 թ. Գալուստյան դպրոցում ստեղծեց մի քանի աշակերտներից բաղկացած դպրոցական երգչախումբ: Պարապմունքների ժամանակ էլ ի հայտ է եկել Հրանտ Քեշիշյանի տաղանդը երաժշտության ասպարեզում: Հայ երաժիշտը նշում է, որ իր առաջին, պարզունակ, հանպատրաստից երաժշտությունները 9 տարեկան հասակում է ստեղծագործել: Հրանտ Քեշիշյանի կյանքի վաղ շրջանում հեղաշրջող նշանակություն ունեցավ աշխարհահռչակ երգահան Արամ Խաչատրյանի՝ 1961 թ. գարնանը Եգիպտոս կատարած այցը, որի ընթացքում Կահիրեում հանդես եկավ մի քանի համերգային ծրագրերով, որոնց ներկա է գտնվել Հրանտ Քեշիշյանը՝ ծնողների հետ միասին: Ոգևորվելով Արամ Խաչատրյանի արվեստով՝ Հրանտ Քեշիշյանն այդ շրջանից սկսած ավելի շատ ժամանակ է հատկացնում երաժշտությանը, ու արդեն 1963–1964 թթ. գրի է առնում իր առաջին լուրջ երաժշտությունը: Երաժշտական գործունեության ընթացքում հայազգի երգահանը գրի է առել հարյուրավոր ստեղծագործություններ¹: «Արեգ»-ը լայնորեն լուսաբանում է 2010 թ. դեկտեմբերի 4–9 Կահիրեի օպերայի շենքում տեղի ունեցած Հրանտ Քեշիշյանի անհատական ցուցահանդեսը,

¹ , Արեգե, Կահիրե, 2012, № 25, էջ 13–18 (արաբերեն):

որին հեղինակը ներկայացրել էր լավագույն 63 գործերը: Արաբերեն պարբերականը առանձին-առանձինն երկայացնում է հայազգի արվեստագետի 63 աշխատանքները՝ նշելով դրանց ստեղծման պատմությունը և բովանդակությունը¹:

20-րդ դարի ընթացքում Եգիպտոսում ապրեցին և ստեղծագործեցին հայազգի բազմաթիվ արվեստագետներ, որոնք մեծ ներդրում ունեցան Եգիպտոսի մշակութային զարգացման գործում: Առանձնապես մեծ հաջողությունների հասան եգիպտահայ նկարիչները: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում պահպանել նրանց հիշատակը: Արաբերեն պարբերականը մեծապես արժևորում է եգիպտահայ անվանի արվեստագետների գործունեությունը և արժեքավոր տեղեկություններ հաղորդում վերջիններիս մասին:

¹ . Արեգ, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 15-19:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՊՈՂՈՍ ԲԵՅ ՅՈՒՍՈՒՖՅԱՆՆ ՈՒ ՅԱԿՈԲ ԱՐԹՒՆԸ «ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷՋԵՐՈՒՄ

«Արեգ» պարբերականը ծագել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ հասարակական, քաղաքական նշանավոր գործիչների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում արթուն պահել նրանց հիշատակը:

Եգիպտահայ համայնքը մշտապես կարևոր դերակատարում է ունեցել Եգիպտոսի հասարակական-քաղաքական կյանքում: Հայերը այժի են ընկել մշակույթի և կրթության բնագավառում և կարևոր օղակ են հանդիսացել Եվրոպայի առաջադեմ գաղափարները, եվրոպական կրթական համակարգը, լեզուները Եգիպտոսում ներդնելու և ուսուցանելու գործում: Արաբերեն պարբերականը նկատում է, որ եգիպտահայ համայնքի ներկայացուցիչները նախևառաջ փայլուն տիրապետել են հայերենին և թուրքերենին: Բազմաթիվ հայեր նաև արաբերենին են տիրապետել, ստեղծագործել են այդ լեզվով: Թարգմանչական գործը Եգիպտոսում 18-րդ դարի վերջերին և 19-րդ դարի ընթացքում կազմակերպել են հիմնականում հայերը, որոնք տարբեր թարգմանություններ են կատարել անգլերենից, ֆրանսերենից և իտալերենից թուրքերեն, արաբերեն ու հայերեն: Եգիպտահայ թարգմանիչներից «Արեգ» պարբերականը ներկայացնում է Պողոս Բեյ Յուսուֆյանի գործունեությունը, ով 18-րդ դարի վերջերին աշխատելով որպես թարգմանիչ Իզմիրում Բրիտանիայի հյուպատոսարանում, 1798 թ. վերադառնում է Ալեքսանդրիա և մոտ 30 տարի անմնացորդ ծառայում Եգիպտոսի պետական

կառավարման համակարգում Մուհամմադ Ալիի կառավարման տարիներին¹:

Մուհամմադ Ալիի կառավարման շրջանում ձևավորվեց Եգիպտոսի արտաքին գործերի նախարարությունը, որը սկզբնական շրջանում կոչվում էր առևտրի և պետական հարցերի դիվան: 19-րդ դարում այդ պաշտոնը գերազանցապես զբաղեցրել են Եգիպտոսի հայ համայնքի ներկայացուցիչները՝ Պողոս Բեյ Յուսուֆյանը (1837–1844), Արթին Չրաքյանը (1844–1850), Ստեփան Դեմիրճյանը (1853–1857), Նուբար Նուբարյանը (1866–1874, 1878–1879, 1884–1888), Տիգրան Աբրոյանը՝ փոխարտգործնախարար (1882–1891)²: Այնուհանդերձ, հայերի ամենամեծ ներդրումը Եգիպտոսի տնտեսությունում առևտրի ոլորտն է, որը մեծ ծաղկում ապրեց այդ շրջանում: «Արև» օրաթերթի արաբերեն հավելվածը նշում է, որ բազմաթիվ հայերի Եգիպտոսում կոչում էին «առևտրի գործակալներ», ուստի պատահական չէ, որ Մուհամմադ Ալիի օրոք առևտրի նախարարի (վեզիրի) պաշտոնը զբաղեցրել են հայերը՝ Պողոս Բեյ Յուսուֆյանը (1826–1833 թթ.), Արթին Չրաքյանը (1833–1850 թթ.): Ամսագիրը մեծապես կարևորում է Պողոս Բեյ Յուսուֆյանի դերը եգիպտական պետական համակարգում ներկայացնելով վերջինիս որպես Մ. Ալիի մերձավոր շրջապատի անդամ³: Պողոս Բեյ Յուսուֆյանը եղել է Մուհամմադ Ալիի գլխավոր թարգմանը, առաջին կարգի խորհրդականը: Հայազգի պետական գործիչն իր գործունեությամբ մեծապես նպաստեց Եգիպտոսում կարգ ու կանոնի ապահովմանը, տնտեսության աշխուժացմանը: Պողոս

¹ Արեգե, Կահիրե, 2014, № 42, էջ 6–10 (արաբերեն):

² Արև, Կահիրե, 1998, № 5, էջ 18 (արաբերեն):

³ Արեգե, 2014, № 42, էջ 7:

Բեյ Յուսուֆյանը համոզված էր, որ Եգիպտոսի հարստության բանալին արտաքին աշխարհի հետ առևտուրն էր, ուստի պետական հաշվեկշռի տակ ներառվեցին երկրի մաքսատներն ու հողագործական արտադրությունները, կազմակերպվեցին ներքին և արտաքին առևտրի ցանցերը¹: Առևտրին զարկ տալու համար Ստամբուլից և Ջնյունայից Եգիպտոս հրավիրվեցին հայտնի առևտրականներ, որոնք սերտ կապեր ունեին Արևմուտքի առևտրային ընկերությունների հետ:

1824 թ. Պողոս Բեյ Յուսուֆյանը Հնդկաստանի Բենգալ քաղաքից լեղակենի աճեցնելու և ներկը զտելու մասնագիտություն ունեցող 40 հայ ընտանիքների հրավիրեց Եգիպտոս լեղակատունկի մշակումը զարգացնելու համար²: Հայազգի դիվանագետը լուրջ դերակատարում ունեցավ Պատերազմական դիվանի ստեղծման գործում, նրա խորհրդով բանակի շարքերը համալրվեցին տեղացիներով: Պողոս Բեյ Յուսուֆյանի վարած արտաքին քաղաքականության շնորհիվ 1841 թ. օսմանյան սուլթանի հրամանագրով Մուհամմադ Ալիի գերդաստանին ժառանգական իրավունք շնորհվեց Եգիպտոսի կուսակալության կառավարման գործում: Պողոս Բեյ Յուսուֆյանի բազմաբովանդակ գործունեության արդյունքում Եգիպտոսում բարելավվեց կրթական համակարգը. Ստեղծվեց Հանրային կրթության գերագույն խորհուրդը, բացվեցին նախակրթարաններ, մասնագիտական վարժարաններ³: Եգիպտահայ քաղաքական գործիչը մեծ ծառայություններ է մատուցել նաև եգիպտահայ համայնքին: Մաս-

¹ Չեթլեան Ս., *Հայության ներդրումը վաղ միջնադարեան և արդի Եգիպտոսի պատմության մեջ*, Մոնրեալ, 2004, էջ 73:

² Նույն տեղում, էջ 75:

³ Արեգե, 2014, № 42, էջ 8-9:

նավորապես, նրա միջնորդությամբ մահվան և ժառանգության վերաբերյալ հարցերի տնօրինումը շնորհվեց Առաջնորդարանին¹: Եգիպտահայ նշանավոր գործիչ Նուբար Նուբարյանն իր հուշերում նշում է, որ Պողոս Բեյ Յուսուֆյանը Մուհամմադ Ալիի ամենահավատարիմ մարդկանցից է եղել, ում հետ առաջին անգամ հանդիպել է 1810-ական թվականներին Ալեքսանդրիայում իր հայրիկի, ով Մուհամմադ Ալիի ներկայացուցիչն էր Փարիզում, հուղարկավորության ժամանակ: Պողոս Բեյ Յուսուֆյանն այնքան կարևոր խնձ է եղել Մուհամմադ Ալիի համար, որ վերջինս, երբ տեղեկանում է, որ 1844 թ. Պողոս Բեյ Յուսուֆյանին հուղարկավորել են առանց զինվորական ծիսակարգի, նկատողություն է անում Ալեքսանդրիայի 'կառավարչին' պահանջելով դիակը հանել գերեզմանից ու հուղարկավորել զինվորական ծիսակարգով²:

Բացի տնտեսական ոլորտում գրանցած հաջողություններից, հայերը նաև մեծ ներդրում ունեցան Եգիպտոսի կրթական համակարգի բարելավման գործում: 1826 թ. Եվրոպա ուսման նպատակով ուղարկված Եգիպտական խմբում ընդգրկված էին նաև 4 հայեր՝ Արթին ու Խոսրով Չրաքյանները, Ստեփան Դեմիրճյանն ու Հովսեփ Բաշյանը: Ուսումն ավարտելուց հետո Ստեփան Դեմիրճյանը ղեկավարել է Փարիզի Եգիպտական ռազմական դպրոցը, իսկ Արթին Չրաքյանը, Յուսուֆ Հեքեքյանի հետ միասին, կարևոր դերակատարում է ունեցել Եգիպտոսի ինժինեռական դպրոցի ստեղծման գործում:

Եգիպտահայերը բազմաթիվ ղեկավար պաշտոններ են զբաղեցրել Եգիպտոսի կրթական տարբեր հանձնաժողովնե-

¹ Զեյթուն Մ., նշվ. աշխ., էջ 80:

² , Արևել, 2000, № 32, էջ 10-11:

րում, կրթական ծրագրերում¹: Խոսելով Եգիպտոսի կրթական համակարգի զարգացման մասին՝ «Արեգ» պարբերականը մեծապես արժևորում է Արթին Չրաքյանի (Յակուբ Արթին) դերը 19-րդ դարի վերջին քառորդում կրթության զարգացման գործում: Արթին Չրաքյանը, զբաղեցնելով Եգիպտոսի կրթության նախարարի պաշտոնը 1885–1906 թթ., մեծապես նպաստել է Եգիպտոսում կրթական համակարգի բարելավմանը: Արթին Չրաքյանը, տիրապետելով տարբեր օտար լեզուների և ուսումնասիրելով օտար երկրների կրթական համակարգերը, 19-րդ դարի վերջերին հեղինակել է կրթական համակարգի բարելավման վերաբերյալ մի քանի աշխատություններ:

Անձնվեր ծառայությամբ աչքի ընկած Եգիպտահայ պետական գործիչների շարքում առանձնահատուկ տեղ ունի Յակուբ Արթին փաշան, որը Եգիպտոսի կրթական համակարգում կատարած բարեփոխումների համար արժանացել է «Ալ Ուսթազ ալ Քաբիո» (մեծ վարպետ) անվանը: Յակուբ Արթին փաշան ծնվել է 1842 թ.: Եգիպտոսում նախնական կրթություն ստանալուց հետո ուսումը շարունակում է Կ. Պոլսում, այնուհետև մեկնում է Փարիզ, ուր մասնագիտանում է իրավունքի ոլորտում: Յակուբ Արթինը Եվրոպայում ուսանելու տարիներին սովորում է տարբեր լեզուներ՝ անգլերեն, ֆրանսերեն, իտալերեն, թուրքերեն և հին հունարեն: 1870 թ. սկսած հայազգի գործիչը տարբեր պաշտոններ է զբաղեցրել Եգիպտոսի պետական կառավարման ապարատում, մասնավորապես կրթության և ֆինանսական ոլորտներում: 1880 թ. նշանակվել է վիճակագրության հանձնաժողովի անդամ, այնուհետև պետական ծառայություն-

¹ , Արևել, 2000, № 123, էջ 4-5:

ների հանձնաժողովի անդամ, Ալեքսանդրիայի մաքսատան հատուկ ուսումնասիրությունների հանձնաժողովի անդամ, իսկ 1882 թ. Յակոբ Արթինը նշանակվել է արաբական հուշարձանների պահպանման հանձնաժողովի անդամ¹։ Բացի այդ, Յակոբ Արթինը տարբեր պաշտոններ է զբաղեցրել Եգիպտոսի երկաթուղային կայարանի գլխավոր հանձնաժողովում, գլխավորել է եգիպտական պատվիրակությունը Վիեննայում տեղի ունեցած Արևելագետների 8-րդ համագումարում, տարբեր համալսարանների խորհուրդների, Պոլոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակության անդամ է եղել²։ Յակոբ Արթինը 1913 թ. Կահիրեի ջրային տնտեսության տնօրեն է նշանակվել, իսկ 1916 թ. Եգիպտոսի կառավարության լիազոր ներկայացուցիչ Սուեզի ջրանցքի ջրային միջազգային ընկերություններում³։

Աբբաս և Սայիդ փաշաների կառավարման տարիներին Եգիպտոսում հանրային կրթության բազմաթիվ հաստատություններ փակվեցին, կրթական գործն անտարբերության մատնվեց։ Իսդիվ Իսմայիլի օրոք միայն քայլեր ձեռնարկվեցին կրթական համակարգում արմատական փոփոխություններ կատարելու ուղղությամբ։ Այդ նպատակի իրագործման գործում անգնահատելի ներդրում ունեցավ Յակոբ Արթին փաշան։ Յակոբ Արթինն իր գործունեության ընթացքում ամենաբարձր աստիճանի հասել է 1886 թ., երբ նշանակվեց Եգիպտոսի կրթության վաքիլ (նախարար)⁴։ Այդ պաշտոնը զբաղեցրած 20 տարիների ընթացքում Յակոբ Արթինը մի շարք բարեփոխումներ իրակա-

¹ Արեգե, 2015, № 54, էջ 22։

² Թոփուզյան Հ.Խ., *Եգիպտոսի հայկական գաղութի պատմություն*, Երևան, 1978, էջ 117։

³ Արեգե, 2015, № 54, էջ 23։

⁴ Նույն տեղում, էջ 22-23։

նացրեց կրթության ոլորտում: Մասնավորապես, Եգիպտոսում կազմավորվեցին նախնական, միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգեր, ստեղծվեցին մասնագիտական վերապատրաստման դպրոցներ: Քաղաքներում և գյուղերում բացվող կրթական նոր օջախների ուսուցիչներ ապահովելու համար հայազգի պետական գործիչը հիմնադրեց Կահիրեի պետական ուսուցչանոցը¹: Յակուբ Արթինի ղեկավարման տարիներին հատուկ ուշադրություն հատկացվեց դպրոցներում օտար լեզուների ուսուցմանը: Բացի այդ, Յակուբ Արթինի ջանքերով ստեղծվեցին աղջիկների համար նախատեսված դպրոցներ, ինչպես նաև հայազգի հասարակական-քաղաքական գործիչը մեծ աշխատանք կատարեց դասախոսների, ուսուցիչների սոցիալ-տնտեսական պայմանները բարելավելու ուղղությամբ²: Յակուբ Արթինը պետական պաշտոններ զբաղեցնելուց բացի նշանավոր հետազոտող է եղել և Եգիպտոսի տնտեսության վերաբերյալ ֆրանսերենով բազմաթիվ աշխատանքներ է հեղինակել: Մասնագիտական ուսումնասիրություններից բացի Յակուբ Արթինը հավաքել և Ֆրանսիայում տպագրել է ազգային ասույթների ժողովածուն՝ «Նեղոսի հովտի ազգային ասույթները»: Յակուբ Արթինի՝ եգիպտացի ժողովրդի ապրելակերպն ու մտածելակերպն արտահայտող ասույթներն առ այսօր արդիական են եգիպտական հասարակության շրջանում: Հայազգի հասարակական-քաղաքական գործիչը «Գիտական հանդես» ամսագրում 1883–1909 թթ. ֆրանսերենով բազմաթիվ հոդվածներ է գրել եգիպտահայ համայնքի մշակութային կյանքի, պատմության, Պողոս Նուբար փաշայի, Պողոս Յուսուֆյանի և հոր՝ Ար-

¹ Զեյթուն Ս., նշվ. աշխ., էջ 112:

² Արեգե, 2015, № 54, էջ 24–25:

թին Չրաքյանի մասին¹: Յակոբ Արթինը նաև առաջիններից էր, որ առաջ քաշեց Եգիպտոսում համալսարան ստեղծելու գաղափարը²: Իր ազգանվեր գործունեության ընթացքում Եգիպտոսի կառավարիչների կողմից պարգևատրվել է բազմաթիվ տիտղոսներով և պարգևներով³:

Յակոբ Արթինն անգնահատելի ծառայություն է մատուցել հայ կաթոլիկ եկեղեցուն: Պատկան մարմինների մոտ կատարած բարեխոսության շնորհիվ 1905 թ. նոյեմբերի 18-ին հայ կաթոլիկ համայնքը իրավունք ստացավ ունենալ իր ներքին կանոնադիրը⁴: Հայազգի գործիչը կարևոր դեր է կատարել եգիպտահայության կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում՝ գորավիզ կանգնելով համայնքին՝ օրեցօր աճող հայ համայնքի կարիքները հոգալու գործում: 1897 թ. Յակոբ Արթինի ջանքերով բացվեց Անարատ Հղության Քույրերի դպրոցը՝ 1894–1896 թթ. համիդյան կոտորածների հետևանքով Եգիպտոս գաղթած հայ որբուհիներին ապաստանելու և դաստիարակելու համար: Բացի այդ՝ նրա ջանքերով հիմնադրվեց Եղիայեան ուսանողական հիմնադրամը՝ որը և չքավոր հայ ուսանողների բարձրագույն կրթության ծախսերը Եգիպտոսում կամ Եվրոպայում հոգալու համար, պայմանով, որ ուսման ավարտից հետո աշխատանքային գործունեություն ծավալեն երկրի ազգային հաստատություններում⁵: Յակոբ Արթինն ակտիվ մասնակցություն է ունեցել նաև Պորտ Սայիդի հայ գաղթականների վրանաքաղաքի ստեղծման գործում: Յակոբ Արթինի և նրա

¹ Արեգե, 2015, № 63, էջ 15–18:

² Արևե, 2008, № 123, էջ 22:

³ Արեգե, 2015, № 54, էջ 20–25:

⁴ Զեյթունյան Ս., նշվ. աշխ., էջ 114:

⁵ Նույն տեղում, էջ 115:

նմանների օրինակին հետևելով՝ եգիպտահայությունը ոչ միայն սիրով ընդունեց բոլոր հայ գաղթականներին, այլև բազմակողմանի օգնություն կազմակերպեց և նպաստեց հայ գաղթականների արագ ինտեգրմանը եգիպտոսի հասարակությանը:

Այսպիսով, «Արեգ» պարբերականը 2010–2015 թթ. լույս տեսած համարներում 19-րդ դարի եգիպտահայ պետական գործիչներից առանձնացնում և արժևորում է Պողոս Բեյ Յուսուֆյանի ու Յակուբ Արթինի գործունեությունն ու ներդրումը եգիպտոսի կառավարման պետական համակարգում, երկրի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործում: Եգիպտահայ վերոնշյալ գործիչները բազմաթիվ ղեկավար պաշտոններ են զբաղեցրել եգիպտոսի կրթական տարրեր հանձնաժողովներում, կրթական ծրագրերում, ինչպես նաև մեծ դեր են կատարել եվրոպական լեզուներից տարբեր ոլորտների գրքերի թուրքերեն ու արաբերեն և հակառակը թարգմանության գործում: Բացի այդ՝ և Պողոս Բեյ Յուսուֆյանը, և Յակուբ Արթինը մեծ դերակատարում են ունեցել եգիպտահայ համայնքի կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում և սոցալիական ու բարոյահոգեբանական մեծ աջակցություն են ցուցաբերել եգիպտոս գաղթած արևմտահայ գաղթականներին:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԵԳԻՊՏԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

«Արեգ» պարբերականի հիմնական նպատակը հայ-արաբական, մասնավորապես, հայ-եգիպտական հարաբերություններն ամրապնդելն է: ՀԲԸՄ-ն արաբներն պարբերականի օգնությամբ ցանկանում է խորացնել հայ և արաբ ժողովուրդների միջև մշակութային կապերը: Հայկական բովանդակությամբ թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական բովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ համայնքի պատմությունն ու արդի վիճակը:

Հայերը եգիպտոսում հաստատվել են վաղ ժամանակներից: Հայ համայնքի ոսկե շրջանը եղել է Ֆաթիմյան (969–1171 թթ.) շրջանը և 19-րդ դարը: 4–5-րդ դարերում Հայաստանից եգիպտոս են մեկնում որոշ թվով հոգևորականներ, որոնք այնտեղ միաբանություն են հիմնում: Հայերի թիվը եգիպտոսում աճեց 11-րդ դարի կեսերին, երբ մայր հայրենիքից մեծ թվով հայեր մեկնեցին եգիպտոս: Նրանցից շատերը բարձր պաշտոնների հասան Ֆաթիմյան և Այուբյան դինաստիաների կառավարման տարիներին: «Արեգ»-ը ներկայացնում է վերոնշյալ դինաստիաների օրոք վեզիրի պաշտոնը զբաղեցրած թվով 9 եգիպտահայերին՝ Բադր ալ Ջամալիի գլխավորությամբ: Ֆաթիմյանները հանդուրժողականություն էին ցուցաբերում քրիստոնյանե-

րի նկատմամբ, ինչից հետո հարևան երկրներից մեծ թվով հայեր ժամանեցին Եգիպտոս¹: Արաբերեն պարբերականը նաև հիշատակում և տեղեկություններ է հաղորդում 11–13-րդ դարերում Եգիպտոսում 5 վանքերի, 20 եկեղեցիների և աղոթարանների մասին, որոնց մի մասը հետագայում մամլուքների ու Օսմանյան կայսրության կառավարման տարիներին վերածվեցին մզկիթների²:

Մամլուքների տիրապետության շրջանում (1250–1517 թթ.) Եգիպտոսում հայերի քանակն ավելանում է, քանի որ Կիլիկիայի հայկական թագավորության դեմ պատերազմներում մամլուքներին հաջողվում է մեծ թվով հայերի գերի վերցնել: Մամլուքները, ընդհանուր առմամբ, նույնպես հանդուրժողականություն էին դրսևորում քրիստոնյաների, այդ թվում, հայերի նկատմամբ³:

Եգիպտահայ համայնքի դրությունը վատթարացավ, երբ Եգիպտոսը նվաճվեց Օսմանյան կայսրության կողմից, ինչը պատճառ հանդիսացավ, որ մեծ թվով հայեր լքեն Եգիպտոսը⁴: Օսմանյան տիրապետության շրջանում հայերը Եգիպտոսում հիմնականում բնակվում էին Կահիրեում, իսկ որոշ հայ ընտանիքներ էլ՝ Ալեքսանդրիայում ու Եգիպտոսի այլ վայրերում: Եթե 16-րդ դարում Կահիրեում բնակվող հայերի թիվը 2000 էր, ապա 18-րդ դարում այն դարձավ 2700–3000⁵:

¹ , Արեգե 2011, մայիս, № 13, էջ 6–8 (արաբերեն):

² Նույն տեղում, էջ 6–12:

³ Զեյթյան Ս., նշվ. աշխ., էջ 52–54:

⁴ Ռիֆաթ ալ-Իմամ Մ., նշվ. աշխ., էջ 21 (արաբերեն):

⁵ , Արևե, 2008, № 127, էջ 5 (արաբերեն):

Հայերի արտագաղթը Եգիպտոսից դադարեց 17-րդ դարում, երբ հայ համայնքի ներսում որոշակի աշխուժություն նկատվեց: Այս շրջանում հայերը մեծապես նպաստեցին Եգիպտոսում առևտրի աշխուժացմանը: 17–18-րդ դարերում բազմաթիվ հայեր տարբեր պաշտոններ են զբաղեցրել երկրի վարչական ու զինվորական մարմիններում¹:

1798–1801 թթ. ֆրանսիական արշավանքի ընթացքում եգիպտահայ համայնքի դրությունը վատացավ, որը պայմանավորված էր հիմնականում երկու գործոնով: Նախ, ֆրանսիացիները չեղյալ հայտարարեցին հայ առևտրականներին տրված առևտրական առանձնաշնորհումները, ինչպես նաև միջկրոնական բախումներ հրահրեցին Եգիպտոսում: Մյուս կողմից, մուսուլմանները Եգիպտոսում բնակվող քրիստոնյաներին համարում էին ֆրանսիացիների դաշնակիցներ, հետևաբար, քիչ չէին դեպքերը, երբ հայերը եգիպտացիների կողմից ենթարկվում էին հարձակումների²:

Եգիպտահայ համայնքի դրությունը զգալիորեն բարելավվեց Եգիպտոսում Մուհամմադ Ալիի իշխանության գալուց հետո: 1805 թ. Օսմանյան կայսրության կողմից Եգիպտոսի վալի նշանակվեց Մուհամմադ Ալին, ում կառավարման տարիներին՝ 1805–1869 թթ., Եգիպտոսը տնտեսական, քաղաքական ու մշակութային զարթոնք ապրեց: Արաբերեն պարբերականը մեծապես արժևորում է Մուհամմադ Ալիի գործունեությունը, որը նոր էջ բացեց Եգիպտոսի նոր պատմության մեջ և եգիպտական Նահդայի (վերածննդի) հիմքը դրեց: Եգիպտոսի նոր կա-

¹. Արեգե, 2014 թ. հունվար, № 42, էջ 4:

². Արևե, 2001, № 37, էջ 8:

ռավարիչը վերափոխեց, արդիականացրեց երկրի կառավարման պետական ապարատը, զինված ուժերը բազմաթիվ տնտեսական, մշակութային և կրթական ծրագրեր իրականացրեցին, ինչի արդյունքում Եգիպտոսում տնտեսական մեծ առաջընթաց գրանցվեց 19-րդ դարի երկրորդ կեսին¹: Վերելք ապրեց նաև եգիպտահայ գաղութը, բարձրացավ նրա տնտեսական, հասարակական-քաղաքական և մշակութային կյանքի մակարդակը: Հայերն ակնառու դեր էին կատարում Եգիպտոսի արհեստագործության զարգացման, առևտրական կապերի ընդլայնման և ֆինանսների կազմակերպման գործում²:

1952 թ., Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխության 63-ամյակի կապակցությամբ, «Արեգ»-ը մանրամասն ներկայացնում է հեղափոխության պատճառները, ընթացքը՝ արժևորելով հեղափոխության դերը եգիպտական նորագույն պատմության ընթացքում: Հիրավի, 1952 թ. Եգիպտոսում տեղի ունեցած հեղափոխությունը, որի արդյունքում երկրում հաստատվեցին հանրապետական կարգեր, նոր խթան հանդիսացավ Եգիպտոսի քաղաքական, տնտեսական կյանքի զարգացման և ամրապնդման գործում: Հեղափոխությունից հետո՝ 1952 թ. նոյեմբերի 16-ին, Եգիպտոսի նախագահ Մուհամմադ Նագիբը այցելեց Կահիրեի հայ առաքելական եկեղեցի, որտեղ արքեպիսկոպոս Սիրունյանի ու հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամանակ հանդես եկավ ճառով՝ դրվատանքի խոսքեր հնչեցնելով Եգիպտոսի հայ համայնքի մասին³:

¹ . Արեգե, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 12–14:

² Թոփուզյան Հ.Խ., նշվ. աշխ., էջ 13:

³ . Արեգե, 2015 թ. հուլիս, № 59, էջ 1–6:

«Արեգ» պարբերականն իր ուշադրության կենտրոնում է պահել 2010–2015 թթ. եգիպտահայ համայնքի կազմակերպած մշակութային տարբեր միջոցառումների, գիտաժողովների լուսաբանումը:

2010 թ. ապրիլի 18-ին Կահիրեի հայկական մշակութային կենտրոնը Նուբար փաշայի «Հուշերի»-ի արաբերեն թարգմանության կապակցությամբ գրական երեկո էր կազմակերպել, որին ներկա էր Եգիպտոսում ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանը, եգիպտահայ մտավորականներ, մշակութային գործիչներ: «Արեգ» պարբերականը լայնորեն լուսաբանում է մշակութային միջոցառումը, որի ընթացքում ելույթ ունեցան դեսպան Մելքոնյանը, արաբ մտավորականներ, որոնք իրենց ելույթներում արժևորեցին Նուբար փաշայի գործունեությունն ու ներդրումը Եգիպտոսի պետականության կայացման գործում¹:

Հիշատակության է արժանի 2011 թ. սեպտեմբերի 27–29 համաշխարհային տպագրության պատմությանը նվիրված միջազգային գիտաժողովը Ալեքսանդրիայում, որի նիստերից երկուսը վերաբերում էին հայ տպագրության պատմությանն ու արդի վիճակին: Հայ տպագրությանը նվիրված նիստերում Հայաստանի և Եգիպտոսի ղեկույցների թեմաները վերաբերում էին մայր հայրենիքում, Օսմանյան կայսրությունում և Եգիպտոսում հայ տպագրության պատմությանը: Արաբերեն պարբերականը մանրամասն ներկայացնում է կոնֆերանսի մասնակիցների զեկուցումները՝ շեշտադրումը կատարելով «Եգիպտոսում հայ տպագրության պատմություն» թեմայի վրա, որով հանդես եկավ Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը: Բանախոսը իր զեկույ-

¹ , Արեգ, 2010, մայիս, № 2, էջ 22–26:

ցում նշեց, որ 19-րդ դարի վերջերին և 20-րդ դարի սկզբներին Եգիպտոսում հայերը 14 տպագրատուն են հիմնել: Առաջին տպարանը՝ «Արարատը», 1896 թ. հիմնել է Սարգիս Դարբինյանը Կահիրեում, իսկ Ալեքսանդրիայում հայկական առաջին տպարանը՝ Նազարեթյան տպագրատունը, հիմնվել է 1899 թ.: Այս երկու տպարաններից հետո հայերը Եգիպտոսում հիմնել են նաև բազմաթիվ այլ տպարաններ, որոնք կոչել են հիմնադիրների (Բերբերյան, Թուփալյան և այլն), հայկական աշխարհագրական տեղանունների (Սևան, Արաքս և այլն), նշանավոր հայերի (Սահակ, Մեսրոպ և այլն) և, պարզապես, հայկական սովորական անուններով (Արշալույս, Հուսաբեր և այլն): Հայերը մեծ դեր են խաղացել նաև եգիպտական մամուլի զարգացման գործում¹: 1865-2010 թթ. Եգիպտոսում հիմնադրվել են հայկական 165 թերթ և ամսագիր («Արմավենի», «Նեղոս», «Արշալույս», «Հուսաբեր» և այլն), որոնցից առաջինը՝ «Արմավենին»՝ 1865 թ.: Ներկայումս Եգիպտոսում լույս է տեսնում հայկական չորս թերթ և ամսագիր՝ «Հուսաբեր», «Արև», «Արեգ» և «Տեղեկատու»: Հայկական տպարաններում 125 տարվա ընթացքում շուրջ 1560 քաղաքական, կրոնական, մշակութային, սպորտային թեմաներով գիրք ու պատմվածք է լույս տեսել²: Եգիպտոսի հայ մամուլի պատմությանը նվիրված մեկ այլ զեկույցում գիտնական Սուրեն Բայրամյանն ընդգծեց, որ Եգիպտոսում հայկական հրապարակումների գազաթնակետը 20-րդ դարի 2030-ականներն էին³,

¹ Արեգե, 2011, սեպտեմբեր, № 16, էջ 19:

² Նույն տեղում, էջ 20:

³ 2013 թ. Կահիրեի հայ առաքելական եկեղեցու ջանքերով լույս տեսավ Սուրեն Բայրամյանի, Եգիպտոսի հայկական մամուլը գրքի արաբերեն տարբերակը, որտեղ հեղինակը ներկայացնում է եգիպտահայ մամուլի ցանկը 1865-2005 թթ.: Հայերեն առաջին պարբերականը Եգիպտոսում, Արմավենինե լույս է տեսել

երբ լույս տեսավ 594 տպագիր աշխատանք¹: Եգիպտոսում հայերը մեծ դեր են խաղացել նաև այլ լեզուներով տպագրվող թերթերում: Սուրեն Բայրամյանը հիշատակում է Արիստակես Թունյանին («Եգիպտական իրադարձություններ», արաբերեն), Ադիբ Իսհակին («Առևտուր», արաբերեն), Ալեքսան Սարաֆյանին, («Ժամանակ», արաբերեն), Տիգրան Քիլիմջյանին («Նոր գաղափար», թուրքերեն), Ալեքսանդր Սարուխանին («Քարավան», ֆրանսերեն) և այլոց²:

Եգիպտոսում լույս տեսած հայկական առաջին պարբերականի («Արմավենի») հիմնադրման 150-ամյակի կապակցությամբ Պերո Թերզյանը ներկայացնում է թերթի խմբագիր Աբրահամ Մուրադյանի կյանքն ու գործունեությունը, տեղեկություններ հաղորդում թերթի կարճատև կյանքի մասին (լույս է տեսել 4 անգամ)³:

Մերձավոր Արևելքում ամենամեծ ու հեղինակավոր՝ Կահիրեի համալսարանում 2007 թ. ապրիլին հայագիտական կենտրոնի ստեղծումը կարևոր քաղաքական և ռազմավարական նշանակություն ունեցավ Մերձավոր Արևելքի հայկական համայնքների քայքայման շարունակվող գործընթացի լույսի ներքո: Այս տարիների ընթացքում կենտրոնը բազմաթիվ միջազգային գիտաժողովներ, դասախոսություններ է կազմակերպել հայ-արաբական հարաբերությունների վերաբերյալ, ինչպես նաև տասնյակ գրքեր է տպագրել Հայաստանի և հայերի մասին, որոնց լուսաբանմանը անդրադառնում է նաև արաբերեն

1865 թ., 1865–2005 թթ. Եգիպտոսում լույս է տեսել 165 պարբերական, որից 43-ը ամսագիր, 32-ը շաբաթաթերթ: Տե՛ս , Արեգե, 2013 թ. մարտ, № 33 էջ 3–6:

¹ . Արեգե, 2011, սեպտեմբեր, № 16, էջ 21:

² Նույն տեղում, էջ 19–23:

³ Նույն տեղում, 2015, մարտ, № 55, էջ 3–5:

պարբերականը¹: «Արեգ»-ը վերոնշյալ գիտաժողովներից առանձնացնում է 2010 թ. մարտի 29-ին Կահիրեում տեղի ունեցած «Հայ-արաբական տնտեսական հարաբերությունները» խորագրով գիտաժողովը, որին մասնակցեցին անվանի հայ և արաբ գիտնականներ: Հոգվածագիր Շիմա Շուարաբին ընթերցողին ներկայացնում է գիտաժողովի ընթացքը, որի ժամանակ զեկուցողները ելույթներ ունեցան միջնադարում հայ-արաբական տնտեսական հարաբերությունների, պատմության ընթացքում Լիբանանի, Եգիպտոսի և Սիրիայի տնտեսական կյանքում կարևոր դերակատարում ունեցած հայազգի գործիչների մասին²: «Արեգ» պարբերականը մեծ հետաքրքրությամբ լուսաբանում է 2011 թ. նոյեմբերի 14–15-ին Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի կազմակերպած «Հայկական նկարագիրը արաբական և օտար աղբյուրներում» խորագրով միջազգային չորրորդ գիտաժողովը, որին մասնակցեցին 20 հետազոտողներ Հայաստանից, Եգիպտոսից, Լիբանանից, Սիրիայից և այլ երկրներից: «Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում» նիստի ընթացքում զեկուցողները նշեցին, որ արաբ հեղինակները Օսմանյան կայսրության՝ հայերի նկատմամբ վարած քաղաքականությանը վերաբերյալ հիմնականում չեզոք դիրքորոշում են որդեգրել՝ ներկայացնելով իրական պատկերը: Մոհամմադ Ռիֆաթ ալ-Իմամը նշում է, որ արաբ հետազոտողներ Մուատաֆա Քեմալի «Արևելյան հարցը», Մոհամմադ Ֆարիդի «Օսմանյան կայսրության պատմությունը», Ֆաիզ Ղուսեյնի «Հայկական կոտորածները» և այլ արաբ հետազոտողների աշխատանքներում այն տեսակետն է իշխում,

¹ Նույն տեղում, հունվար № 53 էջ 18:

² Արեգ, 2010, մայիս, № 2, էջ 22–24:

որ հայկական կոտորածներում կրոնական գործոնը անմեղունակ է: Իսկ ինչ վերաբերում է արաբական մամուլին, ապա հետազոտողներ Նարինե Երանոսյանը և Նորա Արիսյանը նշեցին, որ եգիպտական և սիրիական արաբալեզու մամուլը նույնպես հիմնականում չեզոք դիրքորոշում է ունեցել, և կարևոր աղբյուր է հանդիսանում Հայկական հարցի պատմության ուսումնասիրման համար¹: Գիտաժողովի ընթացքում հնչեցին զեկուցումներ նաև «Հայերը Եգիպտոսում» թեմայի շրջանակներում: Մասնավորապես, հայ հետազոտող Արթուր Իսրայելյանը հանդես եկավ «Մամուլյան բանակում ծառայած հայերը՝ ըստ արաբական աղբյուրների» զեկուցումով, Ջամալ Քամալ Մահմուդը՝ «Եգիպտոսի հայ զինվորականների կերպարը՝ ըստ օսմանյան աղբյուրների» զեկուցումով, որտեղ բանախոսը նշեց, որ Եգիպտոսում օսմանյան կառավարման շրջանում բազմաթիվ հայեր՝ հիմնականում իսլամ ընդունած, զբաղեցրել են զինվորական բարձր պաշտոններ: Մասնավորապես, հայազգի Ահմադ Աշան Եգիպտոսի 7 զինվորական շրջաններից մեկի հրամանատարն է եղել, Եգիպտոսի ռազմածովային ուժերում բարձր պաշտոններ են զբաղեցրել Ռամադան Աշան, Սուլեյման Բիքր, նրա որդի Օսման Ջալաբին և այլք²: Զեկուցումներից հիշատակության է արժանի նաև արաբ հետազոտող Մաջիդ Աջաթի «Հայ առևտրականների նկարագիրը Եգիպտոսի արխիվներում 19-րդ դարի ընթացքում» զեկույցը, որտեղ բանախոսը նշեց, որ Մուհամմադ Ալիի կառավարման տարիներին Եգիպտոսի պետական ապարատում հայերը զբաղեցնում էին բազմաթիվ պաշ-

¹ Արեգե, 2011, նոյեմբեր, № 18, էջ 7:

² Նույն տեղում, էջ 8:

տոններ և եգիպտոսում հայտնի էին «Առևտրային գործակալներ» մականվամբ¹:

2013 թ. փետրվարի 25-ին Կահիրեի համալսարանի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հայ տպագրության 500-ամյակի կապակցությամբ միջազգային գիտաժողով կազմակերպեց «Հայաստանը և քաղաքակրթությունների երկխոսությունը» խորագրով, որին մասնակցեցին բազմաթիվ գիտնականներ տարբեր երկրներից: Ձեկուցողների թեմաները վերաբերում էին պարսկերենից հայերեն փոխառություններին, Հայաստանի և Միջագետքի երկրների միջև շփումներին, հայ հնդկական պատմամշակութային առնչություններին, հայերի՝ եգիպտական մշակույթի և կրթության զարգացման գործում 1516–1798 թթ. ունեցած դերին և այլն²: Կահիրեի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնը հրատարակեց «Հայերի նկարագրերը արաբական և արտասահմանյան աղբյուրներում» աշխատությունը, որի 254 էջերում գետեղված արաբ և հայագի հեղինակների նյութերը վերաբերում են հետևյալ թեմաներին.

1. Հայկական հարցը արաբական և արտասահմանյան աղբյուրներում:

2. Եգիպտահայերը արաբական և արտասահմանյան աղբյուրներում:

3. Հայաստանը և հայերը միջին դարերի ընթացքում:

Նշենք, որ, ճիշտ է, արաբ հեղինակների՝ հայկական կոտորածների վերաբերյալ աշխատանքներում ընդունվում է կոտորածների փաստը, բայց ոչ բոլոր հեղինակներն են համաձայն,

¹ Արեգե, 2011, նույնքեր, № 18, էջ 6–11:

² Նույն տեղում, 2013, փետրվար, № 32 էջ 6–12:

որ այն պետական քաղաքականություն է եղել: Հայկական կոտորածներին անդրադարձել է նաև եգիպտական և սիրիական մամուլը:

Հայերի վերաբերյալ սիրիական մամուլի հրատարակումներին անդրադարձել է Նորա Արիսյանն իր ատենախոսությամբ, որն ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, որ Սիրիայի արաբալեզու մամուլը անդրադարձել է Հայկական հարցի տարբեր փուլերի, կոտորածների, գաղթի տեսարանների լուսաբանմանը: Հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի հրատարակած գրքում առանձին գլուխ է հատկացված «Հայերը եգիպտոսում» թեմատիկային, որի վերաբերյալ ներառված են Ամինա Ահմադ Իմամ, ալ Շուրուբշիի «Հայկական տարրը Ֆաթիմյան եգիպտոսում և նրա դերը քաղաքականության և քաղաքակրթության մեջ», Արթուր Իսրայելյանի «Մամլության բանակի հայ զինվորականները ըստ արաբական աղբյուրների», Զամալ Քեմալ Մահմուդի «Եգիպտոսի հայ զինվորականների նկարագիրը օսմանյան աղբյուրներում» աշխատանքները: Գրքի երրորդ գլխում արաբ հետազոտող Ահմադ ալ Մանամ ալ Ադաուին ներկայացնում է «Քաղաքական իրադրությունը Հայաստանի վելայեթում 684–749 թթ.», որը կարևոր աղբյուր է նշված ժամանակաշրջանի Հայաստանի պատմության ուսումնասիրման համար, երբ Հայաստանի համար պայքար էր սկսվել արաբների ու բյուզանդացիների միջև: Բացի այդ, սույն գրքում ներառված են արաբ հետազոտողներ Ադբ ալ Ազիզ ալ Դուրուբիի «Հայաստանը և հայ ազգի ձևավորումը», Մուհամմադ Ահմադ Իբրահիմի «Հայաստանը մուսուլմանական աշխարհագրական ձեռագրերում» աշխատանքները¹:

¹ Արեգե, 2013 թ. փետրվար, № 32, էջ 13–18:

Եգիպտոսի նախագահ ընտրվելուց հետո Արդել Ֆաթահ աս Սիսին 2014 թ. օգոստոսի 7-ին հանդիպում ունեցավ Եգիպտոսի քրիստոնեական համայնքների առաջնորդների, այդ թվում հայ կաթոլիկ և առաքելական եկեղեցիների առաջնորդների հետ, որի ընթացքում Եգիպտոսի նախագահը հավաստիացրեց, որ Եգիպտոսում քրիստոնյաների կյանքը վտանգված չէ և, նախկինի պես, մուսուլմանների հետ կողք-կողքի համերաշխ կշարունակեն ապրել և ստեղծագործել: Բացի այդ, հանդիպման ընթացքում Եգիպտոսի հայ կաթոլիկ եկեղեցու առաջնորդ Գրիգոր Քուսանը նախագահին նվիրեց Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամի հեղինակած «Հայերը Եգիպտոսում 1896–1961 թթ.» գիրքը, որում հեղինակը ներկայացնում է եգիպտահայ համայնքի պատմությունը նշված ժամանակահատվածում¹:

20-րդ դարի առաջին ցեղասպանությունը արաբ հասարակության շրջանում ճանաչելի դարձնելու համար Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ ստեղծված հանձնաժողովը 2015 թ. ընթացքում Կահիրեում մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, գիտաժողովներ իրականացրեց Եգիպտոսի տարբեր մշակութային հաստատություններում, որոնց ընթացքում ցուցադրվեցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ ֆիլմեր, փաստաթղթեր: Այս միջոցառումների շարքում կարևոր իրադարձություն էր Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամի կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ մի շարք գրքույկների տպագրումը, որոնք ունեն հետևյալ վերնագրերը՝ «Հայկական հարցը արաբական աղբյուրներում 1878–1923 թթ.», «Ալեքսանդրիայի հայերը և նրանց դերը Եգիպտոսի կյան-

¹ . Արեգե, 2014, սեպտեմբեր, № 49, էջ 11:

քում», «Հայկական հարցը միջազգային պայմանագրերում», «Հայոց ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում 1915–1916 թթ.», «Հայկական կոտորածները. Ֆաիզ Ղուսեյնի վկայությունները», «Հայոց ցեղասպանությունը 1915 թ. ամերիկյան և բրիտանական մամուլում» և «Հայոց ցեղասպանությունը գերմանացիների և ավստրիացիների հուշերում»¹: Նշենք, որ համիդյան կոտորածներից հետո Եգիպտոսն ապաստան է տվել 1000-ից ավելի հայ գաղթականների, 1909 թ. կիլիկիահայության կոտորածից հետո՝ մի քանի հարյուր գաղթականի, իսկ Մեծ Եղեռնի տարիներին Սուեզիայի 4200 հայ բնակիչ 45-օրյա պաշարից հետո տեղափոխվեց Եգիպտոս: Բացի այդ՝ 1920-ականներին այլ վայրերից Եգիպտոս տեղափոխվեցին մոտ 1000 հայ որբեր²:

«Արեգ» պարբերականն իր էջերում ներկայացնում է եգիպտահայ համայնքի պատմությունը՝ մեծապես արժևորելով հայ համայնքի ներդրումը Եգիպտոսի քաղաքական, տնտեսական, հասրակական կյանքի աշխուժացման գործում: 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը արաբ հասարակության շրջանում ճանաչելի դարձնելու համար 2015 թ. ընթացքում մի շարք միջոցառումներ՝ դասախոսություններ, գիտաժողովներ իրականացվեցին Եգիպտոսի տարբեր մշակութային հաստատություններում, որոնք չեն վրիպել արաբերեն պարբերականի ուշադրությունից: Բացի այդ, «Արեգ» պարբերականն իր ուշադրության կենտրոնում է պահել 2010–2015 թթ. եգիպտահայ համայնքի կազմակերպած մշակութային տարբեր միջոցառումների, գիտաժողովների լուսաբանումը:

¹ Արեգ, 2015 թ. մայիս, № 57, էջ 7–11:

² Նույն տեղում, էջ 13:

ԳԼՈՒԽ ԶՈՐՐՈՐԴ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ

Արաբերեն պարբերականի առանցքային ու հիմնական նպատակն է արաբախոս ընթերցողին և արաբերենին տիրապետող հայ սերունդներին ներկայացնել Հայոց ցեղասպանության հիմնահարցը, նրա միջազգային ճանաչման ուղղությամբ տարվող աշխատանքները, մերկացնել Թուրքիայի մերժողական քաղաքականությունը:

«Արեգ»-ը մեծ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի լուսաբանմանը: Պարբերականը մերկացնում է Աբդուլ Համիդ Երկրորդի վարած հայահալած քաղաքականությունը՝ ընթերցողին տեղեկություններ հաղորդելով 19-րդ դարի վերջերին հայ ազատագրական շարժման վերելքի, հայկական ազգային կուսակցությունների, 1894–1896 թթ. հայկական կոտորածների, 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի վերաբերյալ: Պարբերականն ընդգծում է, որ մեծ տեղությունները բարենորոգումների ծրագիրը ներկայացրեցին օսմանյան սուլթանին, սակայն հետամուտ չեղան, որպեսզի այն իրականություն դառնա¹:

1878/1923 թթ. Հայկական հարցի տարբեր փուլերի լուսաբանմանը անդրադարձել է նաև արաբական, այդ թվում, եգիպտական մամուլը: Մասնավորապես, «Ալ Զաման» թերթը անդրադարձել է հայկական ազատագրական պայքարի լուսաբան-

¹ , Արեգ, 2011, մայիս, № 13, էջ 1–5:

մանը, «Ալ Ահրամը», «Ալ Մուկարամը», «Ալ Ռայ ալ Ամը», «Ալ Մուշիրը», «Ալ Ասիման» և այլ եգիպտական թերթեր անդրադարձել են համիդյան կոտորածների լուսաբանմանը, «Ալ Մարաբու ալ Ախլուալը» Բեռլինի կոնֆերանսի լուսաբանմանն է անդրադարձել: 1894–1896 թ. հայկական կոտորածների մասին խոսելիս «Ալ Ռայ ալ Ամ» թերթը գրում է, որ թուրքերը բնաջնջեցին հայ ժողովրդին՝ օրեկան կոտորելով հազարավոր մարդկանց, իսկ կոտորածներից խուսափածներին էլ կոտորեց ցուրտն ու սովը¹: Երիտթուրքերի ժամանակաշրջանի վերաբերյալ Եգիպտոսի «Ալ Ադլ» շաբաթաթերթը 1917 թ. դեկտեմբերին լույս տեսած համարում հրատարակեց «Հայաստանի շուրջ» հոդվածը, որտեղ ներկայացված են օսմանյան բանակի արաբ զինվորականի հուշերը, որը 1915–1917 թթ. եղել է Արևմտյան Հայաստանում: Արաբ զինվորականը հաղորդում է, որ այն, ինչ գրվել է հայկական կոտորածների մասին, դա ծովի մի կաթիլն է: Բացի այդ², զինվորականը հավելում է, որ հայերին կոտորելու գործում իթթիհատականներին օգնել են գերմանացիները²:

Կիլիկիահայության 1909 թ. կոտորածի մասին խոսելիս «Արեգ»-ը անդրադառնում է 1919 թ. Եգիպտոսում ծավալված ազգային շարժման առաջնորդներից Մուհամմադ Ֆարիդի՝ Կահիրեի «Ալ Լուա» թերթի 1909 թ. ապրիլի 24-ի համարում տեղ գտած հայտարարությանը, որում եգիպտացի նշանավոր հասարակական-քաղաքական գործիչը նշել է, որ օսմանյան իշխանությունների վարած քաղաքականությունը կոտորածների

¹ Արեգ, 2011, հոկտեմբեր, № 17, էջ 2:

² Նույն տեղում, էջ 1–5:

գլխավոր պատճառ դարձավ, և կոտորածի զոհերին բնութագրել էր որպես «սահմանադրության նահատակներ»¹:

Արաբերեն պարբերականը նկատում է, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքերը, թուրքացման քաղաքականության շրջանակներում, պետական մակարդակով հայերին ցեղասպանության ենթարկեցին՝ կոտորելով և աքսորելով մայր հայրենիքից: Արդեն 1915 թ. մայիսին Անտանտի երկրները համատեղ հայտարարություն տարածեցին, որտեղ ընդգծում էին, որ հայերի նկատմամբ կոտորածներ է տեղի ունեցել և կոչ էին անում օսմանյան իշխանություններին պատժել մեղավորներին: Հետագայում, Փարիզում տեղի ունեցած Խաղաղության վեհաժողովի շրջանակներում, հանձնաժողով ստեղծվեց հայկական կոտորածները ուսումնասիրելու համար, և վերջինս եկավ այն եզրակացության, որ իրոք տեղի են ունեցել զանգվածային կոտորածներ, ու մեղավորները պետք է պատժվեն: Արաբերեն պարբերականն ընթերցողին հաղորդում է, որ Սևրի պայմանագրից 3 տարի հետո Արևմուտքը քաղաքական գործարքի մեջ մտավ քեմալական Թուրքիայի հետ և 1923 թ. Լոնդոնում նոր պայմանագիր ստորագրեց, որտեղ որևէ կետ չկար հայկական կոտորածների մասին²:

Հայոց ցեղասպանության տարիներին թուրքական իշխանությունները բռնի ուժով կրոնափոխ արեցին հազարավոր հայ որբերի՝ ամբողջացնելով իրենց որդեգրած քաղաքականությունը: «Արեգ»-ը հաղորդում է, որ Տրապիզոնի նահանգապետ Ջեմալ Ազման մոտ 450 հայ աղջիկների առևանգեց ու կրոնա-

¹ Արեգ, 2014, դեկտեմբեր, № 52, էջ 22–25:

² Նույն տեղում, 2011, սեպտեմբեր, № 16, էջ 7–13:

փոխ արեց՝ հետագայում կնության տալով թուրքերին¹։ Նույն կերպ վարվեց Էնվեր փաշան, ով Սիրիայի անապատներ աքսորված հայերից 4-15 տարեկան հարյուրավոր հայ աղջիկների և տղաների կրոնափոխ արեց՝ նրանց անվանակոչելով թուրքական անուններով²։ 1915-1916 թթ. օսմանյան իշխանությունները հավաքեցին մոտ 6.000 երեխա Էրզրումից և տեղափոխեցին օսմանյան բանակի ուսումնական կենտրոններ, որտեղ աստիճանաբար, տարիների ընթացքում, նրանց մոտ ձևավորվեց թուրքական ինքնություն։ Այս թրջացած հայերից շատերը հետագայում բարձր դիրքեր գրավեցին թուրքական բանակում և ակտիվ մասնակցություն ունեցան 1960 թ. Թուրքիայում տեղի ունեցած ռազմական հեղաշրջմանը³։

Արաբերեն պարբերականը տեղեկացնում է, որ հայկական կոտորածները ուղեկցվում էին նաև հայ որբերի «առքուվաճառքով», որոնց որպես ստրուկ թուրքերը վաճառում էին քաղաքային շուկաներում։ 5-8 տարեկան հայ տղաների համար սահմանված գինը 20, 14-15 տարեկան հայ աղջիկների՝ 50 սենտա էր։ Եթե հայ երեխան նշանավոր ընտանիքից էր սերում, ապա նրա գինը ավելի բարձր էր։ Պարբերականը հաղորդում է, որ կրոնափոխության ճանապարհով 300.000 հայեր փրկվեցին կոտորածներից, և ներկայումս մոտ երկու միլիոն հայկական արմատներով Թուրքիայի քաղաքացի կա⁴։ Հավելենք, որ այսօր Թուրքիայում ապրող հազարավոր հայեր թաքցնում են իրենց ինքնությունը, վախենալով հալածանքներից, ուստի,

¹ Արեգե, 2013, մայիս, № 35, էջ 2:

² Նույն տեղում, էջ 2:

³ Նույն տեղում, էջ 3:

⁴ Նույն տեղում, էջ 1-5:

դժվար է Թուրքիայում ապրող հայերի կոնկրետ թվաքանակ նշել:

Հայկական կոտորածներին անդրադարձավ նաև համաշխարհային մամուլը: «Հայոց ցեղասպանությունը արևմտյան մամուլում» հոդվածում պարբերականը հաղորդում է, որ 1915 թ. հունվարի 9-ին Լոնդոնի «Դեյլի Թեյեզրաֆը» հոդված հրատարակեց, որում ասվում էր, միջազգային հանրությունը վախենում է, որ ի պատասխան Անտանտի երկրների կողմից իրականացվելիք Դարդանեյի ռազմական գործողությունների, Կ. Պոլսում հնարավոր էր Օսմանյան կայսրության քրիստոնյաների նկատմամբ իրականացվեն զանգվածային կոտորածներ: 1915 թ. 13-րդ համարում «Նյու Յորք Թայմսը» զգուշացնում էր, որ քրիստոնյաները վտանգի մեջ են՝ հրապարակելով Օսմանյան կայսրությունում ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի հայտարարություններն առ այն, որ Թուրքիան միայն թուրքերի համար է, և քրիստոնյաները, հատկապես, հայերը ու հույները, տեղ չունեն այնտեղ: Այս կապակցությամբ արաբերեն պարբերականը հիշեցնում է, որ երիտթուրքերը, գալով իշխանության, որդեգրեցին պանթուրքիզմի քաղաքականությունը, որի նպատակը թուրքական պետություն ստեղծելն էր, որտեղ պետք է գերիշխեն թուրքերը: Սա նշանակում էր, որ Օսմանյան կայսրությունը պետք է ամեն գնով ազատվեր ոչ թուրքական տարրից՝ հույներից, քրդերից, արաբներից և այլ էթնիկ զանգվածներից¹: Իսկ 1915 թ. մարտի 20-ին «Նյու Յորք Թայմս»-ը տեղեկություն տարածեց, որտեղ ասվում էր, որ Ալաշկերտի հովտից ռուսական զորքերի նահանջից հետո քրդերը հայերին մեկու-

¹ , Արեգե, 2015, հունվար, № 53, էջ 14:

սացրել են մզկիթներում և կոտորել¹: Իր հերթին, մարտի 22-ին բրիտանական «Դեյլի Նյուսը» հաղորդում էր, որ լուրեր են ստացել Իզմիրի հյուսիսում քրիստոնյաների կոտորածի մասին²:

1915 թ. նոյեմբերի 4-ին կանադական «Հալիֆաքս հերալդը» տեղեկատվություն տարածեց, որտեղ ասվում էր, որ հայկական կրոնական, կրթական բոլոր հաստատությունները ավերվեցին թուրքերի կողմից³: Իսկ 1915 թ. նոյեմբերի 27-ի համարում կանադական թերթը հաղորդում է, որ Անատոլիայի հյուսիսից և արևելքից հայերի տեղահանությունը ուղեկցվում է վայրագ գործողություններով: «Վանի, Մուշի, Սասունի հայերին, որոնց մեծ մասը երեխաներ են, կտտանքների են ենթարկում: Որոշ տեղերում հայերը փորձում են դիմադրել, սակայն թուրքական հրանոթները, գերմանացիների ղեկավարությամբ, ռմբակոծում են հայկական դիրքերը և կոտորում ողջ բնակչությանը, թուրքական հրանոթների դեմ հայերը կռվում են դանակներով, եղաններով ու քարերով⁴»:

Մուսա լեռան գոյամարտի մասին արաբերեն պարբերականը, հղում անելով ամերիկյան պարբերական «Աուտլուկ»-ի 1915 թ. դեկտեմբերի 18-ի, «Նյու Յորք Թայմս»-ի 1915 թ. դեկտեմբերի 12-ի և անգլիական «Ինդեփենդենթ»-ի 1915 թ. դեկտեմբերի 13-ի համարներին, ներկայացնում է արևմտյան մամուլի արձագանքը Մուսա լեռան գոյամարտի և հայ գաղթականների խնդրին: Վերոնշյալ պարբերականները, ներկայացնելով Մուսա լեռան գոյամարտի ընթացքը և հայ գաղթականների Պորտ Սա-

¹ Արեգե, 2015, մարտ, № 55, էջ 22:

² Նույն տեղում, էջ 22:

³ Նույն տեղում, 2014, նոյեմբեր, № 51, էջ 8:

⁴ Նույն տեղում, էջ 8:

յիդում հաստատվելու գործընթացը, ընդգծում էին, որ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական կոտորածները նախօրոք ծրագրված են եղել¹:

«Հայի հուշեր. Հալեպի գաղթականների ճամբարի նկարագրությունը» հոդվածում պարբերականը ներկայացնում է լիբանանահայ ֆոտոլրագրող Վարդան Տիրունյանի 1920–1947 թթ. արված լուսանկարները Հալեպի գաղթականների ճամբարի վերաբերյալ, որի ամբողջական հավաքածուն ներկայումս գտնվում է Թեքեյան մշակութային կենտրոնում: Վարդան Տիրունյանը ծնվել է 1888 թ. Արաբկիրում, երիտթուրքական հեղաշրջումից հետո ընտանիքի հետ հաստատվել է Բեյրութում: Երկար տարիներ ապրելով Հալեպում՝ հայազգի լուսանկարիչը հազարավոր նկարներ է լուսանկարել Հալեպի հայ գաղթականների ճամբարում, որոնցում արտացոլված են ճամբարի ծանր պայմանները, հայ գաղթականների առօրյան, նրանց ծանր սոցիալական և հոգեբանական վիճակը և այլն²:

«Արեգ»-ը հաղորդում է, որ թուրք պատմաբանները նշում են, թե կոտորածներ տեղի չեն ունեցել, այլ ընդհակառակը, հայ զինված խմբերը սպանել են հազարավոր թուրքերի 1915–1916 թթ.: Դրան ի պատասխան, արաբերեն պարբերականը նշում է, որ այդ ժամանակ Արևմտյան Հայաստանում 1, 500.000 հայ էր ապրում, հետևաբար, առնվազն 300.000-ը կարող էր զենք կրել: , Երբ տասնյակ հազարավոր հայ կանայք և երեխաներ աքսորվել էին դեպի անապատներ, ո՞ր էին այն 300.000 հայերը, արդյո՞ք նրանք չէին ցանկանա փախչել օսմանյան բանակից և փրկել նրանց, իհարկե, այդպես կվարվեին,– նկատում է

¹ , Արեգ, 2014, դեկտեմբեր, № 52, էջ 13:

² Եռյն տեղում, 2013, մայիս, № 35, էջ 15:

պարբերականը: Թուրքերը ցեղասպանության սկզբնական շրջանում օսմանյան բանակում ծառայող հայ զինվորականներին զինաթափեցին և տեղափոխելով թիկունք՝ խմբերով սպանեցին¹»: Արաբերեն պարբերականը ցեղասպանության պատճառներից առաջնային է համարում նաև տնտեսական գործունեությունը, նշելով, որ Արևմտյան Հայաստանում հայերի մեծ մասը բավականին անշարժ և շարժական գույք ուներ: Բացի այդ, պարբերականը նկատում է, որ եթե ցեղասպանություն տեղի չի ունեցել, ապա ինչո՞ւ են փակ այդ տարիների օսմանյան արխիվները²: Այդ արխիվները փակ են, քանի որ դրանց հրապարակումը չի բխում թուրքերի շահերից: Արաբերեն պարբերականը նշում է, որ «Նոր Թուրքիա» կառուցելու համար պետք է բացվեն ներքին գործերի նախարարության 1915–1916 թթ. արխիվները, եթե, իհարկե, դրանց մեծ մասը չեն ոչնչացվել ժամանակի ընթացքում³:

Հայոց ցեղասպանության 96-րդ տարեկիցի կապակցությամբ «Արեգ»-ը նշում է, որ չնայած 22 երկիր և բազմաթիվ միջազգային կազմակերպությունների ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, Թուրքիան 96 տարի անց չի ընդունում այն և շարունակում է ժխտողական վարքագիծ դրսևորել: Հոդվածագիր Պերճ Թերզյանն ընդգծում է, որ 2010 թ. վերջերից Հայաստանում, հայկական սփյուռքում սկսվել է Հայոց ցեղասպանության հիմնահարցը իրավական դաշտ տեղափոխելու գործընթաց՝ առաջ քաշելով հատուցման հարցը⁴: Չնայած տարեցտարի

¹ Արեգ, 2012, ապրիլ, № 23, էջ 6:

² Նույն տեղում, էջ 6–7:

³ Նույն տեղում, էջ 7:

⁴ Նույն տեղում, 2011, ապրիլ, № 12, էջ 1:

ավելանում է ցեղասպանության փաստն ընդունող թուրք մտավորականների թիվը, սակայն թուրքական իշխանությունները դեռևս չեն ճանաչում այն, քանի որ նման պարագայում Թուրքիան ստիպված է լինելու հատուցել: Արաբերեն պարբերականը նշում է, որ համայն հայությունն աշխատում է միջազգային իրավունքի դրույթների մեջ ամրացնել հայրենագրկում տեմինը, քանի որ Հայոց ցեղասպանության ընթացքում հայ ժողովուրդը ոչ միայն ունեցրկվել, վիթխարի մարդկային կորուստներ է տվել, այլ նաև հայրենագրկվել է¹:

Արաբերեն պարբերականը Հայոց ցեղասպանության 97-ամյակի կապակցությամբ ներկայացնում է Թուրքիայի զինվորական ատյանի 1919 թ. հուլիսի 5-ի որոշումը, որտեղ դատարանը հաստատեց, որ հայերի աքսորի ժամանակ կատարված ոճիրները տարբեր վայրերում և ժամանակներում «Միություն և Առաջադիմություն» կոմիտեի կողմից նախապես ծրագրված են եղել ու տեղային բնույթ չեն կրել: Փաստորեն, սա Հայոց ցեղասպանության ճանաչումն էր պաշտոնական Թուրքիայի կողմից: 1919 թ. հուլիսի 5-ին Թուրքիայի զինվորական ատյանը հեռակա կարգով մահվան դատապարտեց ներքին գործերի նախարար Թալեաթ փաշային, ռազմական նախարար Էնվեր փաշային, ծովային նախարար Ահմեդ Ջեմալ փաշային, հասարակական կրթության նախարար Նազըմին՝ Թուրքիան պատերազմի մեջ ներքաշելու և հայ ժողովրդի բռնագաղթն ու զանգվածային ջարդերը կազմակերպելու համար²:

«Արեգ»-ը Թուրքիայի ժխտողական կեցվածքը պայմանավորում է մի քանի հանգամանքով: Գլխավոր պատճառը նախևա-

¹ Արեգի 2011, ապրիլ, № 12, էջ 1-2:

² Նույն տեղում, 2012, ապրիլ, № 23, էջ 20-33:

նաջ հատուցման խնդիրն է, քանի որ Թուրքիան ստիպված է լինելու նաև հայկական հողերը վերադարձնել: Ընդունելով ցեղասպանության փաստը՝ ակներև կդառնա, որ թուրքական իշխանությունները տասնամյակներ շարունակ սեփական և միջազգային հանրությանը խաբել են, ինչը կհանգեցնի Թուրքիայի միջազգային հեղինակության խաթարմանը¹: Հոդվածագիր Արա Աշճյանը ավելացնում է, որ, ճիշտ է, ցեղասպանությունը հիմնականում իրականացվել է Օսմանյան կայսրության գոյության տարիներին, սակայն Թուրքիայի հանրապետության հիմնադիրների մեծ մասը, այդ թվում Մուստաֆա Բեմալը, ևս մասնակցել են այդ գործընթացին: Այս հանգամանքը կարող է խարխլել Թուրքիայի հանրապետության ստեղծման իրավական հիմքերը²: Նշենք, որ Թուրքիայի հասարակության մեծ մասը մակերեսային տեղեկություններ ունի 1915–1927 թթ. մասին, քանի որ 1928 թ. Թուրքիայում բարենորոգումների շրջանակներում նախկին արաբատառ այբուբենի փոխանեն նոր լատինատառ այբուբեն շրջանառության մեջ մտնվեց: Եվ այսօր Թուրքիայի հասարակության մեծ մասը չի կարողանում անցյալի պառնակական փաստաթղթերը կարդալ, իսկ թուրքական իշխանությունների կողմից ստեղծած կրթական ծրագրերը, դպրոցական դասագրքերը խեղաթյուրված են ներկայացնում 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների Թուրքիայի պատմությունը:

Արաբերեն պարբերականը, հղում անելով «Ալ Ահրամ»-ի 2013 թ. հոկտեմբերի 20-ի համարում տպագրված հոդվածին, նշում է, որ Հայոց ցեղասպանությունը փաստող միլիոնավոր փաստաթղթեր կան, որոնք Կ. Պոլսի եվրոպացի դիվանագետ-

¹ Արեգե, 2011, ապրիլ, № 12, էջ 3:

² Նույն տեղում, էջ 3–4:

ները ուղարկել են իրենց երկրների արտգործնախարարներին: «Հայերի նկատմամբ իրականացրած վայրագությունների ծավալը հասկանալու համար բավական է բերել «Ալ Ահրամ»-ի 1876–1923 թթ. համարները¹», - նկատում է հոդվածագիր Մուհամմադ ալ Լիսին: Թուրքիայի մերժողական քաղաքականության մասին խոսելիս հոդվածագիրն ընդգծում է, որ չնայած 1919 թ. օսմանյան իշխանությունները ճանաչել են երիտթուրքերի իրականացրած հայերի բնաջնջման քաղաքականությունը, թուրքական իշխանությունները ջանքեր են թափում ցեղասպան քաղաքականության հետևանքները քողարկելու համար, ինչի կապակցությամբ թուրքական իշխանությունները մի շարք օրենքներ ընդունեցին թրքացման և հայերին բնաջնջելու քաղաքականությունը օրինականացնելու համար²:

Թուրքիայի ժխտողական քաղաքականության մասին խոսելիս արաբերեն պարբերականը նկատում է, որ չնայած Էրդողանը մշտապես հայտարարում է, որ Թուրքիան ոչինչ չի թաքցնում, և օսմանյան արխիվները բաց են, սակայն իրականում դա այդպես չէ, արխիվները փակ են հետազոտողների առջև: Այդ արխիվների մի մասը 1918 թ. իրենց հետ երկրից դուրս են հանել երիտթուրք պարագլուխները, մի մասը՝ ոչնչացրել 1918–1919 թթ.: Բացառված չէ, որ հետագա տարիների ընթացքում թուրքական իշխանությունները աստիճանաբար ոչնչացրել են դրանք: Օսմանյան արխիվներից անչափ արժեքավոր են 1915–1916 թթ. հայերի բնաջնջումը և աքսորն իրականացրած հանձնաժողովների մատյանների վերաբերյալ 33 փաստաթղթային ֆոնդերը, որոնք կազմվել են Արևմտյան Անատոլիայի տարբեր

¹ Արեգե, 2013, նոյեմբեր, № 40, էջ 27:

² Նույն տեղում, էջ 25–28:

վայրերում: Թուրքիայի ժխտողական քաղաքականությանը փորձեց վերջակետ դնել Թուրքիայի նախկին վարչապետ Թուրգութ Օզալը, որը 1990-ականների սկզբներին հայտարարեց, որ արխիվները կբացվեն օտար ուսումնասիրողների առջև և հատուցում կտրվի օսմանյան կայսրությունից տեղահանված հայերին: Սակայն Թուրքիայի վարչապետը այս ուղղությամբ լուրջ քայլեր չիրականացրեց. արխիվները բացվեցին մասնակի, որոնք շատ շուտով կրկին փակվեցին օտար հետազոտողների համար¹:

2010 թ. մայիսին, երբ Թուրքիայի վարչապետ Էրդողանը տարածաշրջանային այցով գտնվում էր Լատինական Ամերիկայում, Արգենտինա նախօրոք նախատեսված այցը չեղարկեց՝ որպես բողոքի նշան այն բանի, որ Բուենոս Այրեսի քաղաքային իշխանությունները չեղարկեցին նախօրոք կայացված որոշումը՝ Արգենտինայի մայրաքաղաքում տեղադրել Թուրքիայի հանրապետության հիմնադիր Մուստաֆա Քեմալի արձանը: Պերճ Թերզյանը մատնանշում է, որ այս չեղարկման գործում կարևոր դեր ունեցավ Արգենտինայի հայ համայնքը, հայկական կազմակերպությունները՝ ընդգծելով, որ հենց Մուստաֆա Քեմալի օրոք երկրի իշխանությունները որդեգրեցին Հայոց ցեղասպանության ժխտման պետական քաղաքականությունը²:

2012 թ. դեկտեմբերին Թուրքիայի մեջլիսի անդամ քուրդ Սաբահաթ Թունջելը Թուրքիայի խորհրդարանում առաջարկեց, որ վարչապետ Էրդողանը ճանաչի և ներողություն խնդրի Հայոց ցեղասպանության, Դերսիմի կոտորածների, 1980 թ. սեպտեմբերի 12-ին ռազմական հեղաշրջումից հետո երկրում

¹ Արեգե, 2014, հունվար, № 42, էջ 1–5:

² Նույն տեղում, 2010, հուլիս, № 4, էջ 1–3:

ժողովրդի նկատմամբ իրականացրած վայրագ գործողությունների համար: Թուրքիայի մեջլիսը մերժեց պատգամավորի առաջարկը և, նույնիսկ, արգելեց դրա շուրջ քննարկումներ ծավալել: Այս կապակցությամբ արաբերեն պարբերականը նկատում է, որ Էրդողանի վարչակարգը վախենում է իրականության հետ առերեսվել, ուստի այն մոտակա տարիներին չի ճանաչի Հայոց ցեղասպանությունը¹:

2015 թ. հունվարի 12-ին Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիբ Էրդողանը Պաղեստինի ինքնավարության առաջնորդ Մուհամմադ Աբբասի հետ հանդիպման ժամանակ գովերգեց օսմանյան բանակի զինվորականներին: Այս առնչությամբ «Արեգ»-ը հրապարակեց Եգիպտոսի մշակույթի նախարար Մուհամմադ Սաբեր Արաբի հոդվածը: Եգիպտոսի նախկին պաշտոնյան, հղում անելով 1917 թ. Սիրիայի արաբ մտավորական Ֆահիդ Ղուայնեի «Հայկական կոտորածները» աշխատանքին, որում արաբ մտավորականը ականատեսի աչքերով ներկայացնում էր հայ երեխաների, կանանց նկատմամբ օսմանյան բանակի իրականացրած վայրագությունները, նկատում է, որ հայերի նկատմամբ իրականացրած կոտորածների չընդունումը միջազգային հանրության կողմից լուրջ խոչընդոտ է մարդկության հետագա զարգացման ճանապարհին²:

2009 թ. սեպտեմբերին Հայկազյան համալսարանը «Հայոց ցեղասպանությունը և միջազգային իրավունքը» խորագրով միջազգային գիտաժողով էր կազմակերպել, որի լուսաբանմանը նույնպես անդրադառնում է պարբերականը՝ ընթերցողին տեղեկություններ հաղորդելով գիտաժողովի մասնակիցների և

¹ Արեգ, 2014, դեկտեմբեր, № 42, էջ 3:

² Նույն տեղում, 2015, փետրվար, № 54, էջ 8–9:

նրանց զեկուցումների մասին: Բոլոր զեկույցները դատապարտեցին թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունը, ինչպես նաև ընդգծեցին, որ Թուրքիայի մամուլը նույնպես ժխտողական կեցվածք է որդեգրել: Մասնավորապես, երբ որևէ երկիր ճանաչում է Հայոց ցեղասպանությունը, թուրքական մամուլն անմիջապես ողողվում է տվյալ երկրի դեմ քննադատական հոդվածներով՝ նշելով, որ նման կերպ առանձին երկրներ փորձ են անում միջամտել երկրի ներքին գործերին և քաղաքական ու տնտեսական օգուտներ կորզել: Իսկ ինչ վերաբերում է արաբական մամուլին, ապա Մուհամմադ Ռիֆաթ ֆաթալ Իմամը նկատեց, որ Հայոց ցեղասպանության թեմային արաբական մամուլն անդրադառնում է ոչ միանշանակ: Դրանց մի մասը դատապարտում է Թուրքիայի ժխտողական կեցվածքը, իսկ արաբական մամուլի մի հատվածն էլ Հայոց ցեղասպանության թեման դիտարկում է քրիստոնեություն – իսլամ հակազդեցության տիրույթում, ուստի, արաբական մամուլում հանդիպում են տարբեր տեղեկություններ ու կարծիքներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ¹:

Պարբերականի ուշադրությունից չի վրիպել նաև 2010 թ. դեկտեմբերի 14–15-ին Երևանում տեղի ունեցավ ցեղասպանությունների կանխարգելմանը վերաբերող միջազգային գիտաժողովը, որին մասնակցեց 23 հետազոտող տարբեր երկրներից՝ այդ թվում Եգիպտոսից: Զեկուցողների թեմաները վերաբերում էին 1948 թ. ՄԱԿ-ի «Ցեղասպանությունների կանխարգելման և նրանց պատժի մասին» կոնվենցիայի ստեղծման դրդապատճառներին, նոր ցեղասպանությունների կանխարգել-

¹ Արեգե, 2010. հուլիս, № 4, էջ 20–22:

մանը, պատժի չափի սահմանմանը: «Արեգ»-ը լայնորեն լուսաբանում է կոնֆերանսի ընթացքը՝ ընթերցողին ներկայացնելով 23 զեկուցողների թեմաները¹:

Արաբերեն պարբերականը մեծ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի լուսաբանմանը: 2010–2015 թթ. այս ուղղությամբ դրական տեղաշարժեր նկատվեցին: 2010 թ. մարտին Շվեդիայի խորհրդարանը ընդունեց բանաձև, որով ճանաչում էր Օսմանյան կայսրության կողմից հայերի, ասորիների և հույների նկատմամբ իրականացված ցեղասպանությունները: Բացի այդ, այս բանաձևը կոչ էր անում Շվեդիայի իշխանություններին համատեղ աշխատել Եվրամիության, ՄԱԿ-ի հետ վերոնշյալ ցեղասպանությունները միջազգային հանրության կողմից ճանաչվելու ուղղությամբ:

2010 թ. մարտին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ ևս մեկ քայլ կատարվեց: ԱՄՆ-ի կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովը որոշում ընդունեց, որը դատապարտում էր Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայկական կոտորածները: «Արեգ» պարբերականը վերհիշում և արաբախոս ընթերցողին է ներկայացնում 1915 թ. հետո ԱՄՆ կոնգրեսի և սենատի Հայոց ցեղասպանության վերաբերյալ ընդունած որոշումներն ու բանաձևերը²: «Արեգ»-ը նկատում է, որ ԱՄՆ-ի օրենսդիր և գործադիր մարմինները երեք անգամ ճանաչել են Հայոց ցեղասպանությունը: Առաջին անգամ դա տեղի է ունեցել հեռավոր 1951 թ., երբ Միացյալ Նահանգների կառավարությունը փաստաթղթեր է ներկա-

¹ Արեգ, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 7–9:

² Նույն տեղում, ապրիլ, № 1, էջ 11–13:

յացրել Միջազգային քրեական դատարան, որում այլ ցեղասպանությունների հետ մեկտեղ հիշատակում էր նաև Հայոց ցեղասպանությունը: Երկրորդ անգամ դա տեղի է ունեցել 1981 թ. ապրիլի 22-ին, երբ ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանն իր ելույթում նշել էր, որ «մարդկությունը երբեք չպետք է մոռանա Հոլոքոստի, Հայոց ցեղասպանության դասերը»: Բացի այդ¹, ԱՄՆ Կոնգրեսի 1975 թ., 1985 թ. ապրիլի 24-ին ընդունած որոշումներում նշվում էր, որ «այսօր հայ զոհերի հիշատակման օր է, որոնք 1915–1923 թթ. ցեղասպանության ենթարկվեցին Թուրքիայում՝ տալով մեկ ու կես միլիոն զոհ»²: «100-ամյակը և Միացյալ Նահանգները» հորվածում «Արեգ»-ը նկատում է, որ չնայած Կ. Պոլսում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն Հայոց ցեղասպանության ամենահայտնի ականատեսներից է, առ այսօր ԱՄՆ պետական մակարդակով չի ճանաչել Հայոց ցեղասպանությունը, այլ բավարարվել է ցեղասպանության վերաբերյալ Կոնգրեսի մի քանի որոշումներով և նախագահների ելույթներով³:

Շվեդիայի խորհրդարանի, ԱՄՆ Կոնգրեսի որոշումներից հետո Թուրքիայի վարչապետը հայտարարությամբ հանդես եկավ, որում մեղադրեց սփյուռքահայությանը, որ իրենց գործունեությամբ վերջիններս խոչընդոտում են, որպեսզի Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները բարելավվեն: «Արեգ» պարբերականը նկատում է, որ Թուրքիայի իշխանությունները այս հայտարարությամբ փորձում են վիժեցնել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը և մերկացնում է թույլքական իշխանությունների մերժողական քաղաքականությ-

¹ Արեգ, 2012, հուլիս, № 26, էջ 6–7:

² Նույն տեղում, 2015, ապրիլ, № 57, էջ 11:

յունը¹: Հոդվածագիր արաբ մտավորական Խայիդ ալ Հուրուբը հույս է հայտնում, որ միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը վերջիվերջո կստիպի թուրքական իշխանություններին առերեսվել սեփական պատմության հետ²:

2010 թ. ԱՄՆ կոնգրեսի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում 252-րդ բանաձևի նախագծի ընդունումից հետո, որն առաջարկում էր կոնգրեսին Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի նկատմամբ իրականացված ջարդերը որակել որպես ցեղասպանություն, Թուրքիայի և թուրքական համայնքների կողմից մեծ հակահայկական արշավ սկսվեց՝ տապալելու 252-րդ բանաձևի ընդունումը: Մինչև բանաձևի նախագծի ներկայացնելը 2010 թ. մարտի 4-ին Թուրքիայի ամերիկյան լոբբիստական կազմակերպությունների՝ «Թուրք-ամերիկյան ասոցիացիաների ասամբլեայի»-ի, «Թուրք-ամերիկյան ասոցիացիաների ֆեդերացիայի»-ի ղեկավարները համատեղ ուղերձ հղեցին նախագծի համահեղինակ ԱՄՆ նշանավոր կանգրեսական Ադամ Շիֆին, որտեղ կոչ էին անում հրաժարվել նախագիծը ներկայացնելուց: Մասնավորապես, ուղերձում ասվում էր, որ 2009 թ. Թուրքիայի և Հայաստանի միջև հարաբերությունների կարգավորման վերաբերյալ համաձայնագիր է ստորագրվել, որի դրույթներից մեկի համաձայն պետք է ստեղծվի պատմաբանների համատեղ հանձնաժողով՝ 1915 թ. , դեպքերը ուսումնասիրելու համար: Բացի այդ,՝ թուրքական լոբբիստական կազմակերպությունների ղեկավարները նշում էին, որ պետք է ուսումնասիրվեն 1885–1919 թթ. հայկական

¹ , Արեգե, 2010, մայիս, № 2, էջ 19–20:

² Նույն տեղում, էջ 19–21:

ապստամբությունները, որոնց ընթացքում սպանվեցին 1,1 միլիոն մուսուլման և հրեա¹: Պարբերականը նկատում է, որ այս ուղերձով փորձ է արվում ԱՄՆ-ի հրեական լոբբիստական կազմակերպությունների օգնությամբ տապալել նախագծի ընդունումը: Հոդվածագիր Պերն Թերզյանը ընթերցողին հայտնում է, որ կան բազմաթիվ փաստեր, արխիվային նյութեր, այդ թվում ամերիկյան, որոնք հավաստում են, որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում տեղի են ունեցել հայկական զանգվածային կոտորածներ: Ի պատասխան վերոնշյալ ուղերձի՝ Ադամ Շիֆը ելույթով է հանդես գալիս, որի արաբերեն թարգմանությունը «Արեգ» պարբերականը ներկայացնում է ընթերցողին: Իր ելույթում Ադամ Շիֆը, տարաբնույթ փաստերի հիման վրա, համառոտ ներկայացնում է հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության վարած ցեղասպան քաղաքականությունը 1894–1923 թթ. ու դատապարտում Թուրքիայի ներկայիս իշխանությունների ժխտողական կեցվածքը²:

Ֆրանսիայի խորհրդարանը 2011 թ. դեկտեմբերի 22-ին ընդունեց ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրինագիծ, որը մեկ ամիս անց հավանության արժանացավ Ֆրանսիայի Սենատի կողմից³: Այս կապակցությամբ «Արեգ»-ը ընթերցողին ներկայացնում է ֆրանսիական իշխանությունների՝ Հայոց ցեղասպանությանը վերաբերող ընդունված բանաձևերը և դրանց նկատմամբ Թուրքիայի արձագանքները: 2011 թ. ևս վերոնշյալ բանաձևի ընդունումը մեծ դժգոհության ալիք բարձ-

¹ Արեգ, 2010, հունիս, № 3, էջ 1–2:

² Նույն տեղում, էջ 1–3:

³ Ֆրանսիայի սահմանադրական խորհուրդը բանաձևին դեմ քվեարկեց՝ համարելով այն հակասահմանադրական:

րացրեց Անկարայում, հետ կանչվեց Ֆրանսիայում Թուրքիայի դեսպանը, որոշակի վատթարացան երկկողմ քաղաքական, տնտեսական հարաբերությունները: Արաբերեն պարբերականը նաև ներկայացնում է բանաձևի ընդունման արձագանքները թուրքական, հայկական մամուլում¹:

Մեկ այլ հոդվածում, խոսելով Ֆրանսիայի խորհրդարանի կողմից ընդունված բանաձևի մասին, արաբերեն պարբերականը ընդգծում է, որ եթե անձը հերքում է Հոլոքոստի փաստը, ապա հրեական ընկերություններն ու իսրայելամետ իշխանությունները նրանց հետ աշխատանքային պայմանագրեր չեն կնքում: «Արեգ»-ը ողջունում է բանաձևի ընդունումը՝ հույս հայտնելով, որ նման բանաձևեր կընդունվեն բազմաթիվ երկրների կողմից²:

Ֆրանսիայի խորհրդարանի ընդունած բանաձևի վերաբերյալ մեկ այլ հոդվածում արաբերեն պարբերականը ներկայացնում է քուրդ նշանավոր պատմաբան Քամալ Մազհայի «Քուրդիստան» լրատվական ծառայությանը տված հարցազրույցը, որում քուրդ պատմաբանը նշել է, որ Ֆրանսիայի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության հարցում շատ ողջունելի է, քանի որ ինչ տեղի է ունեցել հայերի հետ 20-րդ դարի սկզբներին ցեղասպանություն է, որը ներկայումս իրականացվում է քուրդ ժողովրդի նկատմամբ³: Նշենք, որ Ֆրանսիայի նախագահ Ժակ Շիրակը Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը ստորագրել է 2001 թ. հունվարի 29-ին: Դեռևս 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի երկրները համատեղ հայտարարությամբ հանդես եկան, որ-

¹ Արեգե, 2012, հունվար, № 20, էջ 1-5:

² Նույն տեղում, էջ 11-14:

³ Նույն տեղում, էջ 19-20:

տեղ Օսմանյան կայսրությունում երիտթուրքերի կողմից հայերի նկատմամբ իրականացրած գործողությունները որակվեցին որպես մարդկության դեմ հանցագործություն: Հետևաբար, կարող ենք փաստել, որ Ֆրանսիան առաջին երկրներից էր, որ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, ուստի, ֆրանսիական արխիվները կարևոր աղբյուր են Հայոց ցեղասպանության մանրամասներ բացահայտելու համար: «Արեգ»-ը պատիվ ունի ներկայացնելու ընթերցողին ցեղասպանությունը փաստող ֆրանսիական որոշ արխիվների բովանդակությունը: 1915 թ. հունիսի 19-ին Կ. Պոլսում Ֆրանսիայի դեսպանատան թարգման Լյուդովիկոսը նամակ է ուղարկում արտգործնախարարին, որում նշում էր, որ թուրքական իշխանությունները Հնչակյան կուսակցության 20 հայ անդամների ձերբակալել են՝ մեղադրելով Հիջազի էմիր շերիֆ Հուսեյնի հետ Թալեաթ, Էնվեր փաշաների նկատմամբ դավադրություն կազմակերպելու համար¹: Իսկ 1915 թ. օգոստոսի 18-ին Սալոնիկում Ֆրանսիայի հյուպատոսի՝ երկրի արտգործնախարարին ուղարկած նամակում ասվում էր, որ Կ. Պոլսում և Օսմանյան կայսրության բազմաթիվ քաղաքներում հայերի նկատմամբ համատարած բռնաճնշումներ են իրականացվում, զոհերի թիվը արդեն գերազանցել է 200.000-ը²: 1915 թ. օգոստոսի 20-ին Բրիտանիայի հատուկ ծառայությունները Ֆրանսիայի պաշտպանության նախարարությանը տեղեկացրեցին, որ «Հայերի վիճակը օրհասական է, թուրքերը նրանց արտաքսում են Անատոլիայի ողջ տարածքից»³: 1915–1916 թթ. ֆրանսիական արխիվներում բազմաթիվ տեղեկություններ կան Մու-

¹ Արեգ, 2015, սեպտեմբեր, № 60, էջ 1:

² Նույն տեղում, էջ 2:

³ Նույն տեղում, էջ 3:

սա լեռան գոյամարտի մասին: Արաբերեն պարբերականը ներկայացնում է դրանցից մի քանիսը, որոնք ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, թե ինչպես ֆրանսիական ռազմանավերը հայ զբոսաշրջիկներին տեղափոխեցին Պորտ Սայիդ: Արխիվներից ակնհայտ է դառնում, որ ֆրանսիական իշխանությունները 1915 թ. սեպտեմբերին ակտիվ շփումների մեջ են եղել բրիտանացի գործընկերների հետ, որոնք սկզբնական շրջանում հրաժարվեցին հայերին ապաստան տալ Պորտ Սայիդում, քանի որ չէին կարող ապահովել նրանց անվտանգությունը: Երկարատև դիվանագիտական շփումներից հետո վերջիվերջո ֆրանսիացիները ստացան թույլտվություն հայ գաղթականներին տեղափոխելու Պորտ Սայիդ: Չնայած Եգիպտոսն այդ շրջանում ծանր օրեր էր ապրում, եգիպտացիները մեծ օգնություն ցուցաբերեցին հայ գաղթականների ճամբարին: Ճամբարում ՀԲԸՄ-ի հովանու ներքո ստեղծվեց Սիսվան դպրոցը՝ մանուկներին կրթելու համար¹: Պորտ Սայիդի ճամբարի կազմավորման 100-ամյակի կապակցությամբ պարբերականը ներկայացնում է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպի դրույթները, կենսագրական տեղեկություններ հաղորդում հեղինակի մասին²: Ֆրանսիական աղբյուրները նաև տեղեկություններ են հաղորդում Հայկական լեգեոնի կազմավորման մասին, որում ընդգրկվեց Պորտ Սայիդի ճամբար տեղափոխված հայերի մեծ մասը³: Նշենք, որ Հայկական լեգեոնը կազմավորվեց 1916 թ. և Անտանտի երկրների զորքերի կազմում մեծ ներդրում ունեցավ Օսմանյան կայսրության ջախջախման գործում:

¹ Արեգե, 2015, սեպտեմբեր, № 60, էջ 6–10:

² Նույն տեղում, էջ 11–15:

³ Նույն տեղում, էջ 1–5:

«Հայոց ցեղասպանության հարցում Միացյալ Թագավորությունը փոխում է իր քաղաքականությունը» հոդվածում Հարութ Սասունյանը նշում է, որ 2009 թ. և 2014 թ. միջազգային իրավունքի բրիտանացի մասնագետ Ջոֆրի Ռոբերտսոնը, ուսումնասիրելով բրիտանական արտգործնախարարության գաղտնի փաստաթղթերը, երկու գիրք է հրատարակում, որից հետո բրիտանական կառավարությունը աստիճանաբար փոխում է իր քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցում՝ հրաժարվելով ժխտողական քաղաքականությունից: «Գրքերում ներկայացված են արխիվային փաստաթղթեր, որոնք ուսումնասիրելուց հետո ոչ մեկի մոտ կասկած չի մնում, թե իրականում ինչ է եղել»¹,- նկատում է հոդվածագիրը: Բացի այդ, Ռոբերտսոնը 1999 թ. Բրիտանիայի արտաքին գործերի նախարարությանը ներկայացրած գաղտնի հուշագրում կոչ էր անում Մեծ Բրիտանիայի իշխանություններին չփոխել դիրքորոշումը Հայոց ցեղասպանության վերաբերյալ՝ նկատի ունենալով Թուրքիայի հետ ունեցած առևտրատնտեսական, քաղաքական, ռազմավարական հարաբերությունները, ինչպես նաև չցանկանալով խոչընդոտել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին²:

Հրանտ Դինքի սպանության 5-րդ տարեյիցի կապակցությամբ 2010 հունիսի 20-ին Ստամբուլում 20.000 Թուրքիայի քաղաքացիներ բողոքի ակցիա կազմակերպեցին, որի լուսաբանմանը, ինչպես նաև Հրանտ Դինքի կենսագրության և սպանության մանրամասների լուսաբանմանն անդրադարձել է նաև

¹ Արեգե, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 1-2:

² Նույն տեղում, էջ 1:

«Արեգ»-ը¹: Հրանտ Դինքի մասին մեկ այլ համարում պարբերականը ներկայացնում է սպանության հետաքննության ընթացքը, դատավարությունները: «Արեգ»-ն ընդգծում է, որ քաղաքական սպանությունները նոր երևույթ չեն Թուրքիայում՝ ընթերցողին ծանոթացնելով 1978 թ. մինչ 2002 թ. Թուրքիայում կատարված քաղաքական սպանություններին, որոնց ընթացքում զոհվել են Թուրքիայի տարբեր քաղաքացիներ՝ դասախոսներ, լրագրողներ, քաղաքական գործիչներ և այլք: Արաբ մտավորական Ռահիգ Հերմանի կարծիքով Հրանտ Դինքը, ով կյանքի ընթացքում երկու անգամ բանտարկվել է Թուրքիայում թուրք ազգի նկատմամբ «ոչ բարյացկամ» արտահայտվելու համար², սպանվեց իր մասնագիտական գործունեության համար, որի ընթացքում պարբերաբար արժարժում էր Հայոց ցեղասպանության թեման՝ այդ կերպ փորձելով թուրք հասարակությանն աստիճանաբար նախապատրաստել այն ճանաչելուն³:

Արաբերեն պարբերականը իր համարներում պարբերաբար անդրադառնում է Հայկական հարցի վերաբերյալ եզրակացությունների թեկնածուական ատենախոսությունների, հրատարակած գրքերի լուսաբանմանը: 2011 թ. Կահիրեում Նիկոլայ Հովհաննիսյանի «Արաբական պատմական աղբյուրները Հայոց ցեղասպանության վերաբերյալ» գրքի հրատարակման կապակցությամբ ընթերցողին ներկայացնում է գրքի հիմնական դրույթները, որոնցում անվանի գիտնականը ներկայացնում է Հայոց ցեղասպանության պատճառները, ցեղասպանության

¹ Արեգ, 2012, հունվար, № 20, էջ 17–18:

² Մասնավորապես, 2002 թ. հեռուստատեսային հաղորդումներից մեկի ընթացքում Հրանտ Դինքը ասել էր. «Ես թուրք չեմ, ես Թուրքիայի հայազգի քաղաքացի եմ»:

³ Արեգ, 2012, հուլիս, № 26, էջ 1–5:

հիմնահարցի ուսումնասիրության պատմությունը, ինչպես նաև ներկայացնում է արաբական աղբյուրները Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հայոց ցեղասպանության մասին արաբական աղբյուրները, որոնց մեծ մասի հեղինակները արաբներ են, հերքում են թուրքական պատմագիտության այն մտայնությունը, թե հայկական ջարդերը պայմանավորված են եղել կրոնական գործոնով, իսլամ-քրիստոնեություն հակազդեցության համատեքստում: Արաբական աղբյուրները արդարացի են համարել արևմտահայերի՝ իրենց հայրենիքում Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավարություն ունենալու պահանջը: Բացի այդ,¹ արաբական աղբյուրները հերքում են թուրքական պատմագիտության այն խեղաթյուրումները, ըստ որոնց՝ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հայերը ապստամբել են Վանում և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքներում, որից հետո, հայերին «հնազանդեցնելու» ընթացքում, տեղի են ունեցել ջարդեր¹:

Հայկական հարցի հետազոտման համար արժեքավոր աղբյուր է արաբ հետազոտող Ղադա Խամիս Մուսայի «Հայկական հարցը և Միացյալ Նահանգները 1915–1923 թթ.» ատենախոսությունը, որտեղ հեղինակը նախ ներկայացնում է ամերիկյան միսիոներական առաքելությունները Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և շփումները տեղի հայերի հետ, ապա անդրադառնում հայկական կոտորածների, ամերիկյան տարբեր կազմակերպությունների կողմից հայ որբերին ու գաղթականներին ցուցաբերած օգնության, Հենրի Մորգենթաուի հուշերի լուսաբանմանը: Բացի այդ, արաբ ուսումնասիրողը ներկա-

¹ Արեգե, 2011, դեկտեմբեր, № 19, էջ 10–13:

յացնում է Հայաստանի մանդատի ստանձման կապակցությամբ ուղարկված ամերիկյան առաքելությունների գործունեությունը, Սևրի պայմանագրի դրույթները և Վուդրո Վիլսոնի իրավարար վճիռը¹:

Հալեպում 2012 թ. լույս տեսած «Հայոց ցեղասպանության զոհ դարձած հայ մարզիկները» գրքի կապակցությամբ պարբերականը տեղեկություններ է հաղորդում 20-րդ դարի սկզբին արևմտահայության սպորտային կյանքի մասին: Երիտթուրքերի հեղաշրջումից հետո Օսմանյան կայսրությունում որակական տեղաշարժեր նկատվեցին նաև սպորտի ոլորտում: Մասնավորապես, Կ. Պոլսում, Իզմիրում և այլ հայաշատ քաղաքներում ստեղծվեցին ֆուտբոլային ակումբներ, ինչպես նաև հիմնադրվեցին «Բաֆֆի», «Արաքս», «Արտավազդ», «Վահագն» և այլ սպորտային միություններ, Կ. Պոլսից մինչև Վան ստեղծվեցին մարտական բազմաթիվ խմբակներ, որոնք կարևոր դեր խաղացին ոչ միայն արևմտահայության, այլև ամբողջ Օսմանյան կայսրության հասարակական կյանքում: 1911–1914 թթ. ընթացքում տեղի ունեցան 4 հայկական օլիմպիական խաղեր, որոնց ընթացքում հայտնի դարձած հայ մարզիկներն իրենց անունը թողեցին Օսմանյան կայսրության և քեմալական Թուրքիայի սպորտի պատմության մեջ: Այդ խաղերն իրենց հերթին մեծապես նպաստեցին 1911–1915 թթ. հայկական մշակութային և հասարակական զարթոնքին: Հայ նշանավոր մարզիկ, գրող, լրագրող Շավարշ Քրիսյանը Օսմանյան կայսրությունում հրատարակեց առաջին մարզական ամսագիրը՝ «Մարմնամարզը», որը տպագրվեց 1911–1914 թթ.: Հայ մարզիկներ Վահրամ Փափագ-

¹ Արեգե, 2014, սեպտեմբեր, № 49, էջ 16–23:

յանը ու Մկրտիչ Մաջրիյանը Օսմանյան կայսրության հավաքականի կազմում մասնակցեցին 1912 թ. Ստոկհոլմում տեղի ունեցած համաշխարհային հինգերորդ օլիմպիական խաղերին, որին մասնակցեց 22 երկրի 2541 մարզիկ: Պարբերականը հաղորդում է, որ օլիմպիական խաղերի ընթացքում Օսմանյան կայսրության դրոշը չբարձրացվեց կիլիկիահայության 1909 թ. կոտորածի պատճառով¹: Հայ մարզիկների, հայկական մարզական խմբակների գործունեությունն ու ցուցաբերած հաջողությունները առաջացրեցին երիտթուրքական իշխանությունների դժգոհությունը, որոնք էլ 1913–1914 թթ. փակեցին հայկական սպորտային խմբակները: 1914 թ. սկսած հայկական կոտորածներից անմասն չմնացին նաև հայ մարզիկները, որոնք միջազգային հարթակներում բարձր էին պահել Օսմանյան կայսրության պատիվը: 1915–1920 թթ. հազարավոր հայ մարզիկներ ենթարկվեցին ճնշումների, հալածանքների, որոնց մեծագույն մասը, արևմտահայության մեծագույն մասի նման, սպանվեց²:

Պարբերականը ընթերցողին տեղեկություններ է հաղորդում հայկական ինքնապաշտպանական մարտերին մասնակցած ու ցեղասպանության զոհ դարձած հայ նշանավոր մարզիկներ Շավարշ Քրիսյանի, Հայկ Գուլույանի, Մելքոնի, Երվանդ Նիշանյանի, Ավետիս Այգյանի, Հովհաննես Կորյանի, Վարդավառ Աբաջյանի, Ղազարոս Քիյամջյանի, Զարմամիր Պողոս Այգյանի, Գևորգ Քիրխարիզյանի, Պողոս Զեյնանյանի, Գևորգ Թարջիմանյանի մարտական գործունեության և կենսագրության վերաբերյալ³:

¹ Արեգե, 2015, հոկտեմբեր, № 61, էջ 3:

² Նույն տեղում, էջ 3–4:

³ Նույն տեղում, էջ 1–8:

2012 Լիբանանում լույս տեսավ անգլիացի նշանավոր գրող, լրագրող Ռոբերտ Ֆիսքի «Ռոբերտ Ֆիսք. հողվածների ընտրանի» արաբերեն գիրքը, որտեղ ամփոփված են «Ինդեփենդենտ» պարբերականում տպագրված հեղինակի 100 նշանավոր հողվածները, որի երկրորդ գլուխը ամբողջությամբ վերաբերում է Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը: 2000-ականներին տպագրած Հայոց ցեղասպանությանը վերաբերող հողվածներում անգլիացի լրագրողը ընդգծում է, որ «1915 թ. պետական մակարդակով կազմակերպված Հայոց ցեղասպանությունը 20-րդ դարի արհավիրքներից մեկն էր, որին զոհ գնաց 1,5 միլիոն հայ»¹: Բացի այդ, Ռոբերտ Ֆիսքը անդրադառնում է ցեղասպանության ընթացքում հայերի կրած մարդկային և նյութական վնասներին, դատապարտում Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը: Ռոբերտ Ֆիսքը աշխարհի ժամանակակից նշանավոր լրագրողներից է, որն արժեքավոր հողվածներ է գրում Մերձավոր Արևելքի մասին: Արաբերենի, տարածաշրջանի պատմության փայլուն իմացությունը թույլ է տալիս հանգամանակից անդրադառնալ Մերձավոր Արևելքի առանցքային վիճահարույց հիմնախնդիրների համակողմանի լուսաբանմանը:

«Մեծ Բրիտանիան և Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում 1878–1896 թթ.» հողվածում արաբերեն պարբերականը անդրադառնում է վերոհիշյալ թեմայով արաբ հետազոտող Ալի Սաբիթ Սաբրայի ատենախոսության հիմնական դրույթների լուսաբանմանը: Նշենք, որ 19-րդ դարի երկրորդ կեսից մեծ տեղությունների միջև սուր պայքար սկսվեց Օսմանյան կայսրության վրա իրենց ազդեցությունը տարածելու համար:

¹ , Արեգե, 2012, նոյեմբեր, № 29, էջ 1–5:

1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի արդյունքում ամրապնդվեցին Ռուսաստանի դիրքերը տարածաշրջանում, ինչը մեծ դժգոհություններ առաջացրեց Անգլիայում: Անգլիայի ջանքերով գումարվեց Բեռլինի կոնֆերանսը, որտեղ վերանայվեցին պատերազմի արդյունքները՝ ի վնաս Ռուսաստանի և հայ ժողովրդի: Արաբ հեղինակը իր աշխատանքում մանրամասն անդրադառնում է Սան Ստեֆանոյի, Բեռլինի պայմանագրերի,¹ հատկապես, հայերին վերաբերող հոդվածներին (16, 61), 1895 թ. մայիսյան բարենորոգումների ծրագրի լուսաբանմանը: Աշխատանքի վերջում արաբ հետազոտողը իրավացիորեն փաստում է, որ մեծ տերությունները օգտագործեցին օսմանախառակ ժողովուրդների՝ այդ թվում հայերի ազապագրական պայքարը՝ Օսմանյան կայսրությունը իրենց ազդեցության գոտի դարձնելու համար: Իր հերթին Աբդուլ Համիդ Երկրորդը, օգտագործելով մեծ տերությունների միջև եղած տարածայնությունները, 1794–1796 թթ. իրականացրեց հայկական կոտորածները, և մեծ պետությունները չկանխեցին այն¹:

2013 թ. ընթացքում Սիրիայում շարունակվող մարտերի ընթացքում պայթեցվեց Դեր Էզ Զորի հայկական եկեղեցին, մեծ վնասներ կրեցին Հալեպի հայկական եկեղեցիներն ու շինությունները: Այս կապակցությամբ «Արեգ»-ը մեջբերում է «Ինդեփենդենտ» պարբերականում տպագրված լրագրող Ռոբերտ Ֆիսքի հոդվածը, որում անգլիացի լրագրողը նշում է, որ «1915 թ. նահատակված հայերը մեկ անգամ ևս սպանվեցին Սիրիայում»²: Դեր Էզ Զորի հայկական եկեղեցու բակում թաղված են 1915 թ. հայոց ցեղասպանության ընթացքում նահատակված

¹ Արեգ, 2012, նոյեմբեր, № 29, էջ 6–9:

² Նույն տեղում, 2013 թ. նոյեմբեր, № 40, էջ 1–2:

հազարավոր հայերի մասունքները, որոնց զգալի մասը, փաստորեն, եկեղեցու և հարակից տարածքների պայթեցման սարդյունքում ոչնչացվեցին:

Հայկական հարցի պատմության ուսումնասիրման և այն արաբական հանրությանը ներկայացնելու գործում անգնահատելի ներդրում ունի «Արեգ»-ի խմբագիր Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը, որը յուրաքանչյուր պատեհ առիթ օգտագործելով՝ արաբական հասարակությանը ներկայացնում է Հայկական հարցի պատմությունն ու բովանդակությունը: 2013 թ. նոյեմբերին Կահիրեում արաբ պատմաբանների ասոցիացիայի կազմակերպած «Արաբական հայրենիքի պատմությունը դարերի ընթացքում» խորագրով կոնֆերանսի շրջանակներում Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը հանդես եկավ «Արաբների հիշատակումները օսմանյան հայերի մասին 1878–1923 թթ.» զեկույցով, որի ընթացքում հեղինակը ներկայացրեց նշված ժամանակահատվածում հայերի մասին հիշատակումները արաբ հեղինակների աշխատանքներում, արաբական մամուլում: Հայկական հարցի պատմությունը ներկայացնելիս բանախոսը մեջբերումներ արեց Հիջազի «Ալ Կաբլա», Սիրիայի «Ալ Ասիմա» և «Ալ Թակադդում», Եգիպտոսի «Ալ Ադիբ» և «Ալ Ահրամ» պարբերականներից¹: 2014 թ. դեկտեմբերին Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը Ալեքսանդրիայի համալսարանում հանդես է գալիս «1915–1916 թթ. Հայոց ցեղասպանության ընթացքում հայերի կրած գաղափարական և մշակութային կորուստները» թեմայով², իսկ սույն թվականի դեկտեմբերի 20-ին Եգիպտոսի Այն Շամս համալսարանում՝ «Հայկական հարցի զարգացումները

¹ Արեգ, 2013, նոյեմբեր, № 40, էջ 16–18:

² Նույն տեղում, 2014, դեկտեմբեր, № 52, էջ 18–19:

Օսմանյան կայսրությունում» թեմայով, որի ընթացքում բանախոսը մանրամասն ներկայացնում է Հայկական հարցի պատմությունը թուրքական երեք վարչակարգերի կառավարման տարիներին¹:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի աշխատանքները համակարգելու միջոցառումների ընթացակարգը մշակելու համար ստեղծված հանձնաժողովի աշխատանքները պարբերաբար եղել են արաբերեն պարբերականի ուշադրության կենտրոնում: «Մասնագետները հավաքվել են Երևանում 100-ամյակի միջոցառումների ցանկը կազմելու» հոգվածում Հարութ Սասունյանը անդրադառնում է 2013 թ. մարտի 22–23-ին Երևանում տեղի ունեցած կոնֆերանսի լուսաբանմանը, որի ընթացքում ելույթ ունեցավ նաև ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը: «Արեգ»-ը ընթերցողին ներկայացնում է բոլոր ելույթները՝ առանձնահատուկ ուշադրություն դարձնելով հրեա ցեղասպանագետ Յասիր Աուրունի ելույթին, որտեղ հետազոտողը նշեց, որ չնայած իսրայելական իշխանությունները չեն ճանաչել Հայոց ցեղասպանությունը, Իսրայելի հասարակության մի ստվար զանգված ճանաչում է այն²:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի շրջանակներում 2015 թ. մարտի 20-ին Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը Լիբանանի Անդրանիկ մշակութային միությունում հանդես եկավ դասախոսությամբ՝ «Հայոց ցեղասպանությունն ու օսմանյան բռնաճնշումները արաբական Մաշրիկում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» թեմայով: Բանախոսը մեկ ժամվա ընթացքում ներկայացրեց Հայոց ցեղասպանության

¹ Արեգ, 2014, դեկտեմբեր, № 52, էջ 13–17:

² Նույն տեղում, 2013, մարտ, № 33 էջ 1–2:

փոփոխությունները համիդեական, երիտթուրքական և քեմալական վարչակարգերի կառավարման տարիներին, ինչպես նաև ներկաներին տեղեկություններ հաղորդեց 1915–1916 թթ. Սիրիայում և Լիբանանում Ջեմալ փաշայի կողմից արաբների նկատմամբ իրականացված ջարդերի մասին: Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամը դասախոսության վերջում նշեց, որ եթե Ջեմալ փաշան արաբների շրջանում հայտնի է որպես կոտորածների խորհրդանիշ, ապա հայերի շրջանում այդ «տիտղոսը» կրում են էնվեր և Թալեաթ փաշաները¹:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ 2015 թ. ապրիլի 24-ին երևանում տեղի ունեցան պաշտոնական միջոցառումներ, որոնց ներկա էին 65 երկրների պատվիրակություններ² այդ թվում Ռուսաստանի, Ֆրանսիայի, Կիպրոսի և Սերբիայի նախագահները: Արաբերեն պարբերականը լայնորեն լուսաբանում է այդ միջոցառումները³: Բացի այդ, 2015 թ. ապրիլի 24-ին Գերմանիայի խորհրդարանը ձայների մեծամասնությամբ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Սա շատ կարևոր իրադարձություն էր, քանի որ Գերմանիան Օսմանյան կայսրության դաշնակիցն է եղել Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, ինչպես նաև Թուրքիայի ամենամեծ առևտրային գործընկերն է եվրոպայում: Այս կապակցությամբ պարբերականը նկատում է, որ վերջապես, մեկ դար հետո, Գերմանիան ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը³: Գերմանիայի խորհրդարանի ընդունած որոշումից հետո թուրքական մամուլը ողորկվեց հակագերմանական հրապարակումներ

¹ , Արեգե, 2015, մարտ, № 55, էջ 6–13:

² Նույն տեղում, ապրիլ, № էջ 6–8:

³ Նույն տեղում, № էջ 1:

րով: Մասնավորապես, 2015 թ. ապրիլի 26-ին Անատոլիա լրատվական գործակալությանը տված հարցազրույցում Աթաթուրքի համալսարանի պատմության ֆակուլտետի դեկան Սալամի Կալիջը նշեց, որ նույն գերմանական արխիվներում բազմաթիվ փաստեր կան, որոնք հաստատում են, որ հազարավոր թուրքեր կոտորածների են ենթարկվել հայ զինված խմբավորումների կողմից: Այս կապակցությամբ «Արեգ»-ը ներկայացնում է բազմաթիվ գերմանացի զինվորականների և դիվանագետների հուշեր, որոնք հաստատում են թուրքերի կողմից իրականացրած հայկական կոտորածների փաստը¹: «Հայկական հարցը գերմանացիների հուշերում» հոդվածում «Արեգ» պարբերականը ներկայացնում է Գերմանիայի քաղաքացու հուշերը, որը 1916 թ. հոկտեմբերի 10–11-ը եղել է Թուրքիայի հարավային շրջաններում: Ականատեսը ցավով վերհիշում է, որ ամեն քայլափոխի սովալլուկ հայեր էին, որոնք, աքսորից հետո հաստատվելով տարբեր բնակավայրերում, գոյատևելու համար կատարում էին տարբեր տաժանակիր աշխատանք²: Այս առնչությամբ պարբերականը նշում է, որ Հայոց ցեղասպանության մեջ մեղքի իր բաժինն ունի նաև Գերմանիան, որն Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում Օսմանյան կայսրության դաշնակիցն էր³: Մեկ այլ հոդվածում արաբերեն պարբերականն ընթերցողին ներկայացնում է Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հոֆենհոլցի 1915 թ. օգոստոսի 12-ին Գերմանիայի արտգործնախարարություն ուղարկած նամակի բովանդակությունը, որում դեսպանը հաղորդում էր, որ «թուրքական իշխա-

¹ Արեգ, 2015, ապրիլ, № էջ 2–5:

² Նույն տեղում, 2010, օգոստոս, № 5, էջ 18–19:

³ Նույն տեղում, էջ 19:

նությունների նպատակն է ազատվել քրիստոնյա տարրից: Հայկական զանգվածային կազմակերպված կոտորածները այս քաղաքականության մեջ են տեղավորվում: Չնայած թուրքերը փորձում են արդարացնել իրենց գործողությունները, սակայն պետք է փաստել, որ թուրքական գործողությունների նպատակը հայերին բնաջնջելն է¹:

«Հայոց ցեղասպանությունը գերմանացիների և ավստրիացիների հուշերում» հոդվածում արաբերեն պարբերականը, հենվելով գերմանացի և ավստրիացի հյուպատոսների ու դեսպանների, Օսմանյան կայսրության բանակում աշխատող գերմանացի բժիշկների և զինվորականների հաղորդագրությունների և վկայությունների վրա, նկատում է, որ Օսմանյան կայսրության դաշնակիցներ Գերմանիան և Ավստրիան տեղյակ են եղել թուրքերի՝ հայերին ցեղասպանության ենթարկելու և աքսորելու մտադրության մասին²:

2015 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ ևս մեկ դրական տեղաշարժ նկատվեց: 2015 թ. ապրիլի 22-ին Ավստրիայի խորհրդարանը մեկ րոպե լուրջամբ հարգեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը, որի ընթացքում Ավստրիայի խորհրդարանի նախագահը հայտարարեց, որ այն ինչ տեղի է ունեցել 1915 թ. ապրիլի 24-ին, դա ցեղասպանություն է: Բացի այդ, այդ նիստի ընթացքում պատգամավորների մի մասը նույնանման հայտարարություն արեց: Ճիշտ է, այդ հայտարարությունը չդրվեց քվեարկության, սակայն առաջին կարևոր քայլն էր Ավստրիայի կողմից, որը Օսմանյան կայսրության դաշնակից էր Առաջին համաշխարհային պատերազմի

¹ Արեգե, 2011, ապրիլ, № 12, էջ 19:

² Նույն տեղում, 2015, հունվար, № 53 էջ 6:

ընթացքում: Պաշտոնական Երևանը ողջունեց այդ քայլը, իսկ Անկարան քննադատության ենթարկեց՝ հետ կանչելով Ավստրիայում իր դեսպանին¹:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի շրջանակներում տեղի ունեցած կարևոր իրադարձություններից էր 2015 թ. ապրիլի 12-ին Վատիկանում Հռոմի պապ Ֆրանցիսկ Առաջինի կողմից հայ զոհերի հիշատակին մատուցված պատարագը, որի ընթացքում Հռոմի պապը Հայոց ցեղասպանությունը որակեց որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն²: Անշուշտ, սա շատ կարևոր իրադարձություն էր, հաշվի առնելով Հռոմի պապի հեղինակությունը կաթոլիկ երկրների հասարակական-քաղաքական կյանքում:

Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառումներից անմասն չմնաց նաև արաբական աշխարհը՝ հանձինս Եգիպտոսի ու Սիրիայի: Եգիպտոսում այդ կապակցությամբ անցկացվեցին տարբեր մշակութային միջոցառումներ, դասախոսություններ, երկրի հեղինակավոր թերթերը հրապարակեցին բազմաթիվ հրապարակումներ Հայոց ցեղասպանության մասին: Բացի այդ, 55 հոգուց բաղկացած պատվիրակություն մեկնեց Երևան՝ մասնակցելու միջոցառումներին: Պատվիրակության անդամ արաբ հետազոտող Սաբիթ Սաբրան Հայոց ցեղասպանության թանգարանին նվիրաբերեց բազմաթիվ փաստաթղթեր Պորտ Սայդի հայ գաղթականների ճամբարի վերաբերյալ³: 2015 թ. ապրիլի 7-ին Մերձավոր Արևելքի հետազոտությունների կենտրոնը, Եգիպտոսի Այն Շամս համալսարա-

¹ Արեգե, 2015, ապրիլ, № 57, էջ 12:

² Նույն տեղում, էջ 14:

³ Նույն տեղում, էջ 15-16:

նի՝ ռեկտոր Հուսեյն Այսիի բարձր հովանու ներքո, Հայոց ցեղասպանության 100-ամյակին նվիրված գիտաժողով կազմակերպեց, որին ներկա էին արաբ մտավորականներ, պաշտոնյաներ, Կահիրեում ՀՀ դեսպանը: Իր խոսքում կենտրոնի տնօրեն Զամալ Չակրանը դատապարտեց Հայոց ցեղասպանությունը և մերկացրեց Թուրքիայի ժխտողական կեցվածքը: Ծավալուն ելույթով հանդես եկավ ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանը, որը ներկայացրեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը: Հիշարժան է նաև Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամի զեկուցումը, որի ընթացքում բանախոսը անդրադարձավ Հայկական հարցի պատմության լուսաբանմանը: Իսկ կոնֆերանսի մեկ այլ զեկուցող՝ արաբ մտավորական Մահմուդ Հալաֆը Սիրիայում և Իրաքում «Իսլամական պետության» գրոհայինների ոճրագործությունները նույնացրեց թուրքերի՝ հայերի նկատմամբ իրականացրած գործողությունների հետ՝ Սիրիայում և Իրաքում գործող գրոհայիններին անվանելով օսմանցի թուրքերի «զարգացած հետևորդներ»¹:

Չնայած Սիրիայում տիրող դժնդակ պայմաններին, ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված այստեղ ևս մի շարք միջոցառումներ անցկացվեցին: Դամասկոսի հրապարակներից մեկը անվանվեց «Հայ նահատակների» պատվին, ինչպես նաև Դամասկոսի նահանգապետը ազդարարեց Դամասկոսի կենտրոնում Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրի կառուցման մեկնարկի մասին²: Իրենց հերթին, մուսուլմանական աշխարհի բազմաթիվ հոգևոր առաջնորդներ Հայոց ցեղասպանության վերաբերյալ սոցցանցերում հայտա-

¹ , Արեգե, 2015, հունիս, № 58, էջ 12–17:

² Նույն տեղում, ապրիլ, № 57, էջ 17–19:

րարություններ տարածեցին, որոնցում վերջիններս ընդունում և դատապարտում էին ցեղասպանությունը: Դրան ի հակառակ որոշ մուսուլման առաջնորդներ պաշտպանեցին Թուրքիային: Մասնավորապես, սուննի մուսուլմանների շրջանում մեծ հեղինակություն ունեցող Յուսուֆ Կարդաուին 2015 թ. ապրիլի 24-ին հայտարարությամբ հանդես եկավ, որտեղ իր աջակցությունը հայտնեց Թուրքիային՝ նշելով, որ «հայերի հետ տեղի ունեցածը միջազգային հանրության որդեգրած քաղաքականության հետևանք է»: Բացի այդ, մուսուլման հոգևոր առաջնորդը Արևմուտքին հիշեցրեց Անդալուսիայում, խաչակրաց արշավանքների ժամանակ հազարավոր մուսուլմանների կոտորածների մասին¹:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի կապակցությամբ միջոցառումներ տեղի ունեցան նաև հայկական սփյուռքում՝ Իրաքում, Իրաքյան Քրդստանում, Լոնդոնում, Երուսաղեմում, Լոս Անջելոսում, Ստամբուլում, Լիբանանում, Իսրայելում, որոնց լուսաբանմանը նույնպես անդրադարձել է արաբերեն պարբերականը²: «Իսրայելը և Հայոց ցեղասպանությունը» հոդվածում պարբերականը նկատում է, որ Իսրայելը պաշտոնապես չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը, քանի որ «ընդհանուր շահ ունեն Անկարան և Թել Ավիվը»³: Նշենք, որ ապրիլի 24-ին Երևան ժամանեց և միջոցառումներին մասնակցեց նաև Իսրայելի պատվիրակությունը: Իսկ նախօրեին Երուսաղեմում հայ համայնքի ներկայացուցիչների հետ հանդիպեց և իր կարեկցանքը հայտնեց Իսրայելի նախագահը:

¹ Արեգե, 2015, ապրիլ, № 57, էջ 25–26:

² Նույն տեղում, էջ 20–22:

³ Նույն տեղում, էջ 23–24:

«Հայոց ցեղասպանությունը կինոհուշերում» հոդվածում «Արեգ»-ը ընդգծում է, որ չնայած Հայոց ցեղասպանությունը 100 տարվա պատմություն ունի, և որ այն փաստող բազմաթիվ վկայություններ, փաստաթղթեր, Հայոց ցեղասպանության վերաբերյալ ֆիլմերը այդքան էլ շատ չեն: Սույն հոդվածում պարբերականը տեղեկություններ է հաղորդում Հայոց ցեղասպանության վերաբերյալ նկարահանված ֆիլմերի («Ամերիկա, Ամերիկա», «Մայրիկ», «Արարատ» և այլն) մասին¹:

«Արեգ»-ը ընթերցողին մանրամասն տեղեկություններ է հաղորդում 100-ամյակի կապակցությամբ արաբական աշխարհում Հայոց ցեղասպանության վերաբերյալ լույս տեսած գրքերի մասին: Պարբերականն անչափ կարևորում է Լիբանանում 2015 թ. լույս տեսած արաբ հետազոտող Նազի Նասմանի «Հարյուր. ցեղասպանությունը շարունակվում է» աշխատությունը, որում հեղինակը հավաքել և գրի է առել Հայոց ցեղասպանության վերաբերյալ արաբ հետազոտողների, քաղաքական գործիչների աշխատություններն ու ելույթները²: Արաբերեն պարբերականը բարձր է գնահատում նաև 2015 թ. լույս տեսած Քուվեյթում բնակվող սիրիահայ հետազոտող Կիրակոս Կիյումջյանի Հայոց ցեղասպանության մասին գիրքը, ուր ամփոփված են հեղինակի՝ անգլերեն, արաբերեն և հայերեն պարբերականներում ցեղասպանության մասին տպագրված հոդվածները³:

Հիշատակության են արժանի նաև 2015 թ. սեպտեմբերի 4-ին եգիպտական «Ալ Ահրամ» պարբերականի հրապարակումները 2013 թ. հրատարակված ֆրանսիացի լրագրողներ՝ Լուի

¹ Արեգ, 2015, ապրիլ, № էջ 51–54:

² Նույն տեղում, էջ 27–50:

³ Նույն տեղում, հուլիս, № 59, էջ 9–11:

Մառշանի և Ջիյում Բիուիի «Թուրքիան և Հայկական հարցը. ճանապարհ դեպի ցեղասպանություն» գրքի մասին, ինչի կապակցությամբ արաբերեն պարբերականը ներկայացնում է գրքի հիմնական բովանդակությունը: Գրքի առաջաբանի հեղինակ հայտնի թուրք գրող Թաներ Աքչամը նշում է, որ հեղինակները այս գրքում փորձում են տալ այն հարցի պատասխանը, թե ինչու են թուրքերը շարունակում ժխտել ցեղասպանության փաստը: Գրքում նկարագրված են այն վայրագությունները, որոնք իրականացրել են թուրքերը հայերի նկատմամբ՝ համադրված ցեղասպանությունը փաստող նկարներով: Գիրքը ոչ միայն 20-րդ դարանկզքի՝ հայաբնակ գյուղերի և քաղաքների մասին մշակութային և պատմական տեղեկագիր է, այլ նաև տեղեկություններ է հաղորդում Ֆրանսիայում հաստատված հայ գաղթականների մասին: Ֆրանսիացի լրագրողները նշում են, որ թուրքերի իրականացրած վայրագ գործողությունների արդյունքում, եթե 1914 թ. Օսմանյան կայսրությունում հայերի թիվը 1.914.620 էր, 2011 թ. Թուրքիայի հայերի թիվը դարձավ 60.000, եկեղեցիների ու վանքերի թիվը 538-ից դարձավ 34: Բացի այդ, հեղինակները անդրադառնում են հայ գաղթականներին Ֆրանսիացիների ցուցաբերած օգնությանը, հայկական կոտորածների գործում քրդական դիրքորոշման լուսաբանմանը¹:

Այսպիսով, «Արեգ» արաբերեն պարբերականն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Հայոց ցեղասպանության հիմնահարցը, վերջինիս միջազգային ճանաչման գործընթացը 2010–2015 թթ, ինչպես նաև դատապարտում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ճանաչման

¹, Արեգ, 2015, սեպտեմբեր, № 60, էջ 16–20:

գործում: «Արեգ»-ը մեծ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի լուսաբանմանը՝ տեղեկություններ հաղորդելով ցեղասպանության վերաբերյալ համաշխարհային և արաբական, մասնավորապես, եգիպտական մամուլի հրապարակումների մասին: Պարբերականի ուշադրությունից չի վրիպել ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ 2010–2015 թթ. միջազգային տարբեր գիտաժողովների լուսաբանումը: Արաբերեն պարբերականը պարբերաբար իր համարներում անդրադառնում է Հայկական հարցի վերաբերյալ եգիպտացի հետազոտողների թեկնածուական ատենախոսությունների, արաբական աշխարհում հրատարակված գրքերի լուսաբանմանը: «Արեգ»-ը ընթերցողին մանրամասն տեղեկություններ է հաղորդում 100-ամյակի կապակցությամբ Հայաստանում և արաբական աշխարհում տեղի ունեցած միջոցառումների մասին: Բացի այդ, «Արեգ»-ը պատիվ ունի ներկայացնելու ընթերցողին ցեղասպանությունը փաստող ֆրանսիական որոշ արխիվների ու գերմանացի ու ավստրիացի ականատեսների հուշերի բովանդակությունը:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԻՐԱՔԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ՀԲԸՄ-ն արաբերեն պարբերականի օգնությամբ ցանկանում է խորացնել հայ և արաբ ժողովուրդների միջև մշակութային կապերը: «Արեգ» պարբերականը արժեքավոր տեղեկություններ է հաղորդում իրաքահայ համայնքի պատմության մասին:

Ներկայացնելով իրաքահայ համայնքի պատմությունը՝ «Արեգ»-ը միշտ դրվատանքով է խոսում հայ համայնքի մասին: Իրաքի հայ համայնքը ձևավորվել է վաղ ժամանակներում: Իրաքահայ համայնքը որոշ չափով ստվարանում է մոնղոլական արշավանքների ընթացքում, սակայն շուտով այստեղի հայերի մի մասը հեռանում է: 16-րդ դարի վերջերին հայերի թվաքանակը Իրաքում բավականին փոքր էր: Եվ միայն 17-րդ դարի ընթացքում Շահ Աբասի կողմից 1604 թ. իրականացրած բռնագաղթի, ջալալիականների հալածանքների հետևանքով զգալի թվով հայ բնակչություն գաղթում է Իրաք: 18-րդ դարում իրաքահայ համայնքի մասին տեղեկությունները շատ սուղ են: Իրաքահայ համայնքը զգալիորեն ստվարանում է համիդյան կոտորածների, երիտթուրքերի իրականացրած ցեղասպան քաղաքականության հետևանքով, երբ հազարավոր հայեր գաղթում են Իրաք: Ըստ տարբեր աղբյուրների՝ 1924 թ. իրաքահայերի թիվը գերազանցում էր 20.000-ը¹:

¹ , Արեգ, 2015, դեկտեմբեր, № 63, էջ 19:

Արևելքը դարեր շարունակ գրավել է արևմտյան ճանապարհորդների ուշադրությունը, որոնք բազմիցս ճանապարհորդել են Արևելք՝ տեղի մշակույթի, կրոնների, ազգագրական կազմի, այնտեղ աճող բույսերի, կենդանիների մասին տեղեկություններ հավաքագրելու համար: Ճանապարհորդների հաղորդած տեղեկություններում բազմիցս հիշատակվել է հայերի մասին, որոնց վերաբերյալ «Արեգ»-ը հաղորդում է արաբախոս ընթերցողին: Առաջին ճանապարհորդներից էր իտալացի առևտրական Ֆիդիրիչին, ով 1563 թ. մեկնել է Արևելք և Իրաքում եղած ժամանակահատվածում ականատես է եղել, թե ինչպես են հայերը կազմակերպել և իրականացրել առևտուրը Հալեպի և Բաղդադի միջև¹: 1574 թ. Հոլանդիայից Արևելք ճանապարհորդության մեկնեց Լեոնարդ Ուլուֆը՝ տարածաշրջանում աճող դեղաբույսերը ուսումնասիրելու, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրներում՝ մասնավորապես Սիրիայում և Իրաքում ապրող ժողովուրդների, նրանց ավանդույթների մասին տեղեկություններ հավաքելու նպատակով: Երեք տարի տևած ճանապարհորդության ընթացքում հավաքագրած տեղեկություններում Լ. Ուլուֆը հիշատակում է նաև հայերին ու համարում տարածաշրջանի բնիկ ժողովուրդներից մեկը²: Ֆրանսիայից նավով հասնելով Լիբանան՝ եվրոպացի ճանապարհորդը ուղևորվում է Հալեպ, այնուհետև Բաղդադ, ապա քրդաբնակ շրջաններով մեկնում Դիարբեքիր ու վերադառնում Հալեպ, այնտեղից էլ՝ Եվրոպա: Լ. Ուլուֆը հաղորդում է, որ Սիրիայից Իրաք ուղևորվելիս ամենուրեք հանդիպել է հայերի, որոնք հիմնականում հմուտ առևտրականներ էին և իրենց ձեռքն էին կենտրոնացրել

¹ Արեգե, 2011, նոյեմբեր, № 18, էջ 20:

² Նույն տեղում, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 20–21:

Հալեպի և Բաղդադի միջև տեղի ունեցող քարավանային առևտրի զգալի մասը: Ճանապարհորդը դրվատանքով է խոսում հայ առևտրականների մասին, որոնք բազմիցս օգնել են իրեն դեպի Բաղդադ ուղևորվելիս: Բաղդադի վալիի հետ հանդիպման ժամանակ ևս հանդիպել է հայի, ով Բաղդադի վալիի թարգմանիչն է եղել¹: Բացի այդ, Լեոնարդ Ուլուֆը հավելում է, որ հայ առևտրականները մի քանի լեզու գիտեին: Բաղդադից Հալեպ վերադառնալիս ճանապարհորդը անցնում է քրդաբնակ շրջաններով, հասնում էրբիլ, որտեղից ուղևորվում է Դիարբեքիր: Քրդաբնակ շրջաններով անցնելիս Ուլուֆը նշում է, որ այստեղ ևս հայեր կային, սակայն հիմնականում քրդեր էին, որոնք ավագակային հարձակումներ էին գործում առևտրական քարավանների վրա: Եվրոպացի ճանապարհորդը հաղորդում է, որ էրբիլից դեպի Դիարբեքիր ճանապարհին՝ Մոսուլից մոտ 33 կիլոմետր արևելք, մի քաղաք կար, որին արաբները անվանում էին «Սև թռչուն»: Այն բնակեցված էր գլխավորապես հայերով, որոնք Հալեպի հայերի նման իրենց լեզվին և ավանդույթներին հավատարիմ էին²: Դիարբեքիրից Հալեպ ընկած ճանապարհին ճանապարհորդը հիշատակում է հայերով բնակեցված բնակավայրերի մասին, որտեղ հայերը հիմնականում առևտրով էին զբաղվում: Լեոնարդ Ուլուֆը հայերի մասին խոսելիս միշտ դրվատանքի խոսքեր է ասում՝ ընդգծելով վերջիններիս շատ ազնիվ, վստահելի և խելացի լինելու փաստը³:

Հալեպ և Բաղդադ քաղաքների միջև իրականացվող առևտրի մեջ հայերի ունեցած մեծ դերի մասին վկայում է նաև

¹ Արեգե, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 21–22:

² Նույն տեղում, էջ 23–24:

³ Նույն տեղում, № 8, էջ 24–25:

ճանապարհորդ Ալ Ֆիլիպ ալ Քարամլին, որն այցելել է Իրաք 1629 թ.: Ճանապարհորդը նշում է, որ Բաղդադից Բասրա մեկնելիս հանգրվանել է Բաբիլ քաղաքում, որտեղ բավականին հայեր էին բնակվում և մեծ հարգանք էին վայելում տեղացիների շրջանում: Ճանապարհորդը հավելում է, որ հայ առևտրականները բազմիցս ուղեկցել են իրեն Իրաքի տարածքում ճանապարհորդության ընթացքում¹:

Իրաքահայերի մասին վկայություններ հանդիպում են նաև հայտնի ճանապարհորդ Քարարեն Նիպուռի հիշատակություններում: 1760 թ. դեկտեմբերի 15-ին Դանիայի թագավոր Ֆրիդրիխ 5-րդը հրամայեց գիտական արշավախումբ ուղարկել Մերձավոր Արևելք՝ տարածաշրջանի վերաբերյալ տարբեր բնույթի գիտական տվյալներ ձեռք բերելու համար: Գիտական արշավախումբը բաղկացած էր 6 անդամից՝ Պետր Ֆորակ՝ շվեդ գիտնական, որը պետք է ուսումնասիրեր տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհը, լեզվաբան Ֆրիդրիխ Քրիստիան Ֆոն Հավեն, որը պետք է ուսումնասիրեր արևելյան լեզուների այբուբենները, ձեռագրերը, քարտեզագիր Քարարեն Նիպուռը, որը պետք է տեղեկություններ հավաքեր տարածաշրջանի բնակավայրերի մասին՝ կազմելով համապատասխան քարտեզներ, բժիշկ Քրիստիան Կառլ Կամեր, որը պետք է բժշկության վերաբերյալ ուսումնասիրություն կատարեր, արվեստագետ Ջորջ Վիլհելմ Բաուրենֆելդ, որը պետք է տեղեկություն հավաքեր հազվագյուտ կենդանիների և բույսերի մասին և շվեդ գինվորական Բևրգրեն, որը պետք է ապահովեր արշավախմբի անվտանգությունը: Արշավախումբը 1761 թ. դեկ-

¹ , Արեգե, 2011, նոյեմբեր, № 18, էջ 21:

տեմբերի 4-ին մեկնեց Ստամբուլ, այնուհետև Ալեքսանդրիա, Կահիրե ու Կարմիր ծովով հասավ Եմեն, որտեղ արշավախմբի անդամները մնացին 20 ամիս¹:

Եմենում արշավախմբի երկու անդամները մահացան, որից հետո խմբի մյուս 4 անդամները մեկնեցին Բոմբեյ: Ճանապարհին խմբի ևս 2 անդամներ մահացան, իսկ Բոմբեյում՝ հինգերորդ անդամը: Խմբի ողջ մնացած միակ անդամ Քարարեն Նիպուռը ավարտին հասցրեց արշավախմբի աշխատանքները՝ Բոմբեյից մեկնելով Օման, Իրան, այնուհետև Իրաք, Սիրիա և 1767 թ. նոյեմբերի 20-ին վերադարձավ Կոպենհագեն: Քարտեզագիր Քարարեն Նիպուռը կարողացավ տարաբնույթ տեղեկություններ հավաքել տարածաշրջանի վերաբերյալ: Նիպուռի հաղորդած տեղեկություններում որոշ տվյալներ կան նաև հայերի, հայկական բնակավայրերի մասին²: Նիպուռը հաղորդում է, որ երբ ինքը առևտրական քարավանի կազմում Մոսուլից մեկնել է Հալեպ, այնուհետև Մարդին, ճանապարհին տեսել է բազմաթիվ քրիստոնեական, այդ թվում հայկական եկեղեցիներ: Նիպուռի հաղորդած տվյալների համաձայն այդ ժամանակ Մարդին քաղաքում 3.000 տուն կար, որից 2.000-ը մուսուլմանական, մնացածը պատկանում էին քրիստոնյաներին՝ հիմնականում հայերին³:

1767 թ., Մարդինից Դիարբեքի մեկնելիս, քարտեզագիրը հայտնաբերում է մի մատուռ (Ռաբար մատուռ), որն ուներ մի քանի դուռ: Նիպուռը բազմաթիվ տեղեկություններ է հաղորդում Դիարբեքի քաղաքի մասին՝ համեմատելով Կ. Պոլսի, Բաղդա-

¹ Նույն տեղում, 2010, մայիս, № 2, էջ 13-15:

² Արեգե, 2010, մայիս, № 2, էջ 16:

³ Նույն տեղում, էջ 17:

դի, Դամասկոսի և տարածաշրջանի այլ մեծ քաղաքների հետ: Դիարբեքիրում այդ ժամանակ հաշվվում էր 16.000 տուն, որից մեկ քառորդը պատկանում էր քրիստոնյաներին, այդ թվում, հայերին: Դիարբեքիրից Հալեպ ուղևորվելիս մայիսի 23-ին Նիպուռը ժամանում է Սույեթը փոքր քաղաքը, որի բնակչությունը 2.000 էր, որից 150-ը հայ: Մինչև Եվրոպա ուղևորվելը քարտեզագիրը լինում է նաև Ուրֆա քաղաքում, որտեղ կար մոտ 500 հայկական տուն, մի քանի եկեղեցի¹: Քարարեն Նիպուռը իր ճանապարհորդության ընթացքում կարևոր տեղեկություններ է հավաքել Իրաքի հյուսիսում, Սիրիայի արևելյան շրջանների, Օսմանյան կայսրության հարավ-արևելյան, այդ թվում, Արևմտյան Հայաստանի որոշ շրջանների գյուղերի, քաղաքների, բնակավայրերի վերաբերյալ, որը կարևոր աղբյուր է հանդիսանում տարածաշրջանի պատմության գիտական ուսումնասիրման համար²:

1791 թ. Իրաք այցելած ֆրանսիացի ճանապարհորդ Գ. Օլիկերը հաղորդում է, որ Բաղդադի բնակչությունը մոտ 100.000 էր, որի քրիստոնյա հատվածում մեծ թիվ էին կազմում հայերը³: Իրաքի հասարակական-քաղաքական կյանքում հայերի ունեցած դերի մասին վկայություններ կան նաև անգլիացի ճանապարհորդ Ժ. Բուկինգամի «Ճանապարհորդությունները դեպի Միջագետք» աշխատության մեջ, որը գրի է առել 19-րդ դարի սկզբներին Իրաք կատարած ճանապարհորդությունից հետո: Անգլիացի ճանապարհորդը նշում է, որ իրաքահայերի մեծ մասը առևտրով էր զբաղվում և հիմնականում նրանց միջոցով էր

¹ Արեգե, 2010, մայիս, № 2, էջ 17:

² Նույն տեղում, էջ 13–18:

³ Արեգե, 2015, դեկտեմբեր, № 63, էջ 21:

իրականացվում Իրաքի և Հնդկաստանի միջև առևտուրը¹: Հայերի մասին վկայություններ կան նաև ամերիկացի գրոսաշրջիկ Ուիլիամ Պերի Ֆոզի հուշերում, որտեղ նշվում է, որ իրաքահայերը տարբերվում էին Իրաքի բնակչության մնացած հատվածից իրենց ավանդույթներով, կենսակերպով և հագուստով²:

Մեկ այլ անգլիացի ճանապարհորդ Ջաքսոնը, ով 1797 թ. եղել է Բաղդադում, հաղորդում է, որ Բաղդադում եվրոպացի առևտրականները քիչ էին և, քանի որ Բրիտանիան չունեի Բաղդադում հյուպատոս, ուստի նրանց (անգլիացիների) գործերը համակարգում էր Միքայել անունով հայ առևտրական, որը հարգված մարդ էր Բաղդադում³:

Իրաքի Բասրա քաղաքի հայ առևտրականների մասին տեղեկություններ հաղորդում է նաև Իրաքում Բրիտանիայի հյուպատոս (1821–1842 թթ.) Ռոբերտ Թայլորը, որը նշում է, որ Բասրան 19-րդ դարի առաջին կեսին խոշոր առևտրային կենտրոն էր շնորհիվ հայ առևտրականների, որոնք Հնդկաստանից, Պարսկաստանից տարբեր տեսակի ապրանքներ էին ներմուծում Բասրա, իսկ այստեղից Եվրոպա արտահանում, ինչի արդյունքում Բասրան տարեցտարի տնտեսապես հարստանում էր⁴:

Իրաքի հյուսիսային շրջանների հայերի մասին հիշատակում է նաև բրիտանացի աշխարհագրագետ, ճանապարհորդ Ջոն Աշարը, որը բրիտանական արշավախմբի կազմում 1864 թ. մեկնել է Իրան տեղեկություններ հավաքելու Իրանի տեսարժան վայրերի⁵, մասնավորապես, Պերսեպոլիսի ավերակների մա-

¹ Նույն տեղում, էջ 22:

² , Արեգե, 2015, դեկտեմբեր, № 63, էջ 19–22:

³ Նույն տեղում, 2011, մարտ, № 17, էջ 3–4:

⁴ Նույն տեղում, նոյեմբեր, № 18, էջ 22:

սին: Եվրոպայից անցելով Օսմանյան կայսրության տարածք՝ արշավախումբը հանգրվանել է Դիարբեքիրում, ապա այնտեղից մեկնել Զախո քաղաք, այնուհետև՝ Մոսուլ: Ճանապարհորդը հաղորդում է, որ Դիարբեքիրում իջևանել է հայ առևտրական խոջա Բադուլի տանը, որը շատ հայտնի մարդ էր քաղաքում: Ջոն Աշարը ավելացնում է, որ Զախոյում քրդերից բացի մեծ թվով հայեր էին ապրում, որոնց պատկանում էր քաղաքի առևտրային տաղավարների, կրպակների մեծ մասը: «Նույն պատկերը Մոսուլում էր», - նկատում է ճանապարհորդը՝ ընդգծելով, որ քրիստոնյա հայերը բավականին լայն իրավունքներ ունեին Իրաքում¹:

Բասրայի հայերի մասին հիշատակում է նաև հոլանդացի ճանապարհորդ Տինգո Մարտինուս Լըբլամա Անիջեհոլտը, որը 1865 թ. այցելել է Իրան, Իրաք, Սիրիա: Վերջինս նույնպես փաստում է, որ Բաղդադում հայ առևտրականները իշխող դիրք ունեին²:

Իրաքի քրդաբնակ շրջաններում հայերի վերաբերյալ որոշ կցկտուր տեղեկություններ կան ֆրանսիացի զբոսաշրջիկ Ղուլիամ Լեժենի ուղեգրությունում, ով որը 1866 թ. այցելել է Իրաք: Ֆրանսիացի զբոսաշրջիկը հաղորդում է, որ Իրաքի հյուսիսային շրջաններում քրդերի, եզդիների հետ մեկտեղ ապրում են քրիստոնյա հայեր, որոնք զբաղվում են հիմնականում առևտրով³:

Արաբերեն պարբերականը տեղեկություններ է հաղորդում 20-րդ դարի Իրաքի հայ համայնքի նշանավոր ներկայացուցիչների մասին: Պարբերականը նախևառաջ հիշատակում է Օս-

¹ . Արեգե, 2011, նոյեմբեր, № 18, էջ 23:

² Նույն տեղում, էջ 24:

³ Նույն տեղում:

մանյան կայսրության փոստատարության նախագահ Ոսկան Մարադիքյանին, Բաղդադի ֆինանսական վարչության ղեկավար պաշտոններ զբաղեցրած Սերոբ Իսքանդարյանին, Սրապիոն Սիվիյանին, Բաղդադի երկաթուղիների կայարանների խորհրդի քարտուղար Տիգրան Իքմաքչյանին, Բաղդադի, Բասրայի երկաթուղային կայարաններում բարձր պաշտոններ զբաղեցրած Աբգար Հովհաննիսյանին, Գրիգոր Քուլոնյանին և Ասքանազ Վարդանյանին: Իրաքի նշանավոր հայերից է Ստեփան Մարգարյանը, որը որպես քրիստոնյաների ներկայացուցիչ 1947 թ. Բաղդադից պատգամավոր ընտրվեց¹:

Պարբերականը 20-րդ դարի իրաքահայ համայնքի ամենանշանավոր ներկայացուցիչ է համարում Գալուստ Գյուլբենկյանին, որին պատկանել է Իրաքի նավթային ընկերության 5% բաժնեմասը, ինչի պատճառով ստացել է պարոն 5% մականունը: Վերջինս ստեղծեց «Գյուլբենկյան» հիմնադրամը, որ մշակութային, կրթական տարբեր ծրագրեր է իրականացրել աշխարհի տարբեր երկրներում: Իրաքի տարածքում հիմնադրամը 1962 թ. Բաղդադում, 1969 թ. Ջախոյում հայկական դպրոցներ է կառուցել, Քիրքուքում՝ խաղահրապարակներ²: 1954–1958 թթ. հիմնադրամի ֆինանսավորմամբ Բաղդադում կառուցվել է հայկական առաքելական եկեղեցի:

Իրաքի նշանավոր հայ ընտանիքներից պարբերականը առանձնացնում է Մոսուլում բնակվող Չաքմաքչյան ընտանիքը, որի հիմնադիր զինագործ Հունա Չաքմաքչյանը մեծ օգնություն է ցուցաբերել Մոսուլի վալի Հուսեյն փաշային Նադիր շահի գործերի կողմից 1741–1744 թթ. Մոսուլի շրջափակման ժամանակ:

¹ . Արեգե 2011, մարտ, № 17, էջ 3–4:

² Նույն տեղում, էջ 5:

Շրջափակման ավարտից հետո, փաշայի խնդրանքով, Հունան մնում է Մոսուլում: Հետագայում նրա ընտանիքի ներկայացուցիչները դառնում են հայտնի գորգագործներ, հմուտ առևտրականներ: Չաքմաքչյան ընտանիքը մեծ հարգանք է վայելում Մոսուլի բնակիչների շրջանում: Ընտանիքի անդամներից Սարգիսը, որն առևտրով էր զբաղվում, մեծ օգնություն է ցուցաբերել 1915 թ. Մեծ Եղեռնի ընթացքում աքսորված հայերին՝ նրանց մի մասին Մոսուլում ապաստան տրամադրելով:

Արաբերեն պարբերականը արժևորում է իրաքահայ նշանավոր բժիշկներ Հովհաններ Մուրադյանին, Աննա Սաթիյանին, Գրիգոր Աստարջյանին, Գառնիկ Հովհաննիսյանին և այլ հայազգի բժիշկների ներդրումը Իրաքում բժշկության զարգացման գործում: Նշանավոր հայազգի արվեստագետներից «Արեգ»-ը տեղեկություններ է հաղորդում կինոռեժիսոր Միսաք Գևորգյանի, թերթերի նկարիչ Սեյիմ Լուսինյանի, լուսանկարիչներ Արշակ և Ջոն Մարգարյանների, ճարտարապետ Արտաշես Քաքավյանի, դերասան Իշխան Ավերիսի, երգչուհի Սեդա Հակոբյանի, երաժիշտներ Գրիգոր Պարսամյանի, Արամ Բոբոխյանի, Նուբար Բաշտիքյանի, դաշնակահարուհի Բիատրիս Օհանյանի, գրողներ Հակոբ Սարգիսի, Լևոն Քարամյանի մասին¹:

Հայերը մեծ ներդրում են ունեցել Իրաքի տնտեսության, արդյունաբերության, առևտրի զարգացման, ճարտարապետական նոր ոճի շենքերի կառուցման գործում: Արաբերեն պարբերականը իրաքահայ ճարտարապետներից առանձնացնում է Մարտիրոս Քավաքչյանին, որի նախագծով 1941–1946 թթ. Մոսուլում բազմաթիվ ճարտարապետական շենքեր են կառուցվել:

¹ Արեգ, 2011, մարտ, № 17, էջ 6–8:

Բացի այդ՝ «Արեգ»-ը ընթերցողին տեղեկություններ է հաղորդում իրաքահայ հայտնի 5 մարզիկների մասին¹:

Ներկայումս Իրաքում հայերի մեծ մասը ապրում է Բաղդադում, Բասրայում, Քիրքուքում, Մոսուլում: Ոչ մեծ թվով հայեր ապրում են Իրաքի քրդաբնակ շրջաններում: Իրաքահայ համայնքը քաղաքականության մեջ ներգրավված չէ, չեզոք դիրքորոշում է ունեցել Իրաքում տեղի ունեցած ներքաղաքական պայքարում: 1980–1988 թթ. իրանա-իրաքյան պատերազմի, 1991 թ., 2003 թ. Ծոցի պատերազմների արդյունքում Իրաքի հայկական համայնքի մի զգալի հատված հեռացավ Իրաքից: 2003 թ. հետո երկրում սկսված քաղաքացիական պատերազմի արդյունքում հայ համայնքը ևս ունեցավ մարդկային և նյութական կորուստներ, ինչի հետևանքով առ այսօր իրաքահայերի արտագաղթը շարունակվում է: Արաբերեն պարբերականը նշում է, որ արդի շրջանում ևս իրաքահայ համայնքը մեծ հարգանք է վայելում Իրաքի ողջ բնակչության շրջանում²:

Այսպիսով, «Արեգ» արաբերեն պարբերականն իր էջերում ներկայացնում է իրաքահայ համայնքը՝ մեծապես արժեվորելով հայ համայնքի ներդրումը Իրաքի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքում: Իրաքահայերի մասին բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Իրաք այցելած օտարազգի ճանապարհորդները, որոնք մեկ անգամ ևս հաստատում են այն իրողությունը, որ իրաքահայ համայնքը միշտ կարևոր դերակատարում է ունեցել Իրաքի տնտեսական կյանքում, մասնավորապես, առևտրի ոլորտում: «Արեգ»-ի հրապարակումներն արժե-

¹ Նույն տեղում, էջ 8–9:

² , Արեգ, 2011, ապրիլ, № 12, էջ 20–23:

քավոր են նրանով, որ դրանցում նորանոր փաստեր են երևան գալիս իրաքահայ համայնքի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅ-ԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

«Արեգ»՝ արաբերեն պարբերականը մեծ տեղ է հատկացրել նաև հայ-արաբական հարաբերությունների լուսաբանմանը: «Արեգ»-ը լայնորեն լուսաբանում է 2010 թ. մարտի 29-ին Կահիրեի համալսարանի հայագիտության ուսումնասիրությունների կենտրոնում տեղի ունեցած «Հայ-արաբական տնտեսական հարաբերություններ» խորագրով գիտաժողովը, որին մասնակցում էին եգիպտացի բարձրաստիճան պաշտոնյաներ, օտար դիվանագետներ, բազմաթիվ գիտնականներ Հայաստանից ու մի շարք արաբական երկրներից: Զեկուցողներն արժնորեցին երկկողմ մշակութային դարավոր կապերը և կարևորեցին հայկական համայնքների ներդրումը արաբական երկրների տնտեսության բարգավաճման գործում¹: Իսկ 54-րդ համարում արաբերեն պարբերականը ներկայացնում է եգիպտոսում ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանի հետ աչցկացրած հարցազրույցը, որում ՀՀ դեսպանը ներկայացնում է հայ-եգիպտական մշակութային, տնտեսական հարաբերությունների զարգացման ընթացքը, Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումները, ինչպես նաև անդրադառնում է Կահիրեի հայագիտական ուսումնասիրությունների կենտրոնի գործունեությանը²: Նշենք,

¹ . Արեգ, 2010, ապրիլ, № 1, էջ 2:

² Նույն տեղում, 2015, փետրվար, № 54, էջ 10–12:

որ Հայաստանն ու Եգիպտոսը պատմության ընթացքում ամուր կապերով կապված են եղել: Ֆաթիմյան դարաշրջանից սկսած հայերը կարևոր դեր են խաղացել Եգիպտոսի հասարակական—քաղաքական կյանքում: Հայկական կոտորածների ընթացքում Եգիպտոսը ապաստան տվեց հազարավոր հայ գաղթականների: 1991 թ. անկախության հռչակումից հետո Եգիպտոսը առաջին երկրներից էր, որ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հայաստանի Հանրապետության հետ: Երկկողմ հարաբերությունների զարգացման գործում նշանակալից դեր է ունեցել 1997 թ. ՀՀ և Եգիպտոսի արտգործնախարարներ Ալեքսանդր Արզումանյանի և Ամր Մուսայի՝ մշակույթի, կրթության և գիտության ոլորտներում համագործակցության վերաբերյալ ստորագրած համաձայնագիրը, որի ամբողջական տեքստը արաբերեն պարբերականը ներկայացնում է ընթերցողին¹: Իսկ 50-րդ համարում ներկայացվում է ՀՀ Սիյուտի նախարար Հրանուշ Հակոբյանի արաբական թերթերից մեկին տված հարցազրույցը, որտեղ նախարարը անդրադարձել է հայկական սիյուտի առջև ծառացած խնդիրներին, Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների, հայ-եգիպտական հարաբերությունների լուսաբանմանը²:

Հայ-արաբական հարաբերությունների ամրապնդման գործում բեկումնային էր 2010 թ.: Մասնավորապես, հայ-եգիպտական հարաբերություններում 2010 թ. հունիսին տեղի ունեցան մի քանի նշանակալից իրադարձություններ: Նախ, ամսվա սկզբին Եգիպտոս այցելեց Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի գլխավորած պատվիրակությունը, որը հանդիպում—

¹ Արեգե, 2015, փետրվար, № 54, էջ 16—19:

² Նույն տեղում, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 3—7:

ներ ունեցավ երկրի վարչապետի, Եգիպտոսի գործարար շրջանակների հետ, որոնց ընթացքում պայմանավորվածություններ ձեռք բերվեցին երկկողմ տնտեսական հարաբերությունները աշխուժացնելու համար¹: Իսկ հունիսի 14-ին Եգիպտոս այցելեց ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, որը հանդիպեց Եգիպտոսի արտգործնախարար Ահմադ Աբու ալ Ղայթի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը գոհունակություն հայտնեցին երկկողմ հարաբերությունների առկա մակարդակի վերաբերյալ և խոստացան աշխատանքները շարունակել հայ-եգիպտական հարաբերությունների մակարդակն ավելի բարձրացնելու ուղղությամբ: Բացի այդ², Հրանուշ Հակոբյանը այցելեց Եգիպտոսի հայ կաթոլիկ և առաքելական եկեղեցիներ, հայկական մշակութային հաստատություններ, հանդիպումներ ունեցավ եգիպտահայ համայնքի ներկայացուցիչների հետ²:

2010 թ. հունիսի 12-ին Ալեքսանդրիայի գրադարանը գրական երեկոյթ էր կազմակերպել «Նուբար փաշայի հուշերը» արաբերեն թարգմանությամբ գրքի տպագրման կապակցությամբ: Նշենք, որ Նուբար փաշան իր հուշերը գրի է առել դեռևս 19-րդ դարի 90-ականներին ֆրանսերեն, որը հրատարակվել է 1983 թ. Բեյրութում: Միջոցառման ընթացքում ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանը նշեց, որ «Նուբար փաշայի հուշերը» կարևոր աղբյուր է հանդիսանում 19-րդ դարի երկրորդ կեսի հայ-արաբական հարաբերությունները գնահատելու, տվյալ ժամանակաշրջանի Եգիպտոսի նորագույն պատմության առանցքային կողմերը բացահայտելու գործում: Միջոցառման ընթացքում ելույթ ունեցան նաև արաբ նշանավոր մտավորականներ, որոնք

¹ Արեգե, 2010, հուլիս, № 4, էջ 3:

² Նույն տեղում, էջ 6:

արժևորեցին հայազգի գործչի ներդրումն ազգային ինքնության կերտման գործում¹: Նշենք, որ Նուբար փաշան 19-րդ 2-րդ կեսի Եգիպտոսի պետական ապարատի ամենավառ քրիստոնյա ներկայացուցիչն է եղել, ով վերոնշյալ ժամանակահատվածում լիազորված է եղել զբաղվել Եգիպտոսի համար բախտորոշ առանցքային հարցերում: Բացի այդ, Նուբար փաշան առաջին քրիստոնյա ներկայացուցիչն է, որ Եգիպտոսի պատմության մեջ արժանացել է փաշայի տիտղոսի:

Հայ-եգիպտական եղբայրական հարաբերությունների զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան 2010 թ. սեպտեմբերի 17–22-ին Եգիպտոսում «Հայկական մշակութային օրեր»-ի շրջանակներում տեղի ունեցած միջոցառումները, որոնք լայնորեն լուսաբանեց արաբերեն պարբերականը: Կահիրեի պետական թատրոնի շենքում տեղի ունեցավ հայ միջնադարյան ճարտարապետությանը նվիրված ցուցահանդես, զրտեղ ներկայացված էին հայ նշանավոր արվեստագետ Զավեն Սարգսյանի աշխատանքները: Արաբերեն պարբերականը ընթերցողին ներկայացնում է հայազգի արվեստագետի կյանքն ու գործունեությունը, համառոտ տեղեկություններ հաղորդում ցուցադրված աշխատանքների մասին: «Հայկական մշակութային օրեր»-ի շրջանակներում Կահիրեի գլխավոր օպերայի շենքում բավականին հագեցած ծրագրով հանդես եկավ Թաթուլ Ալթունյանի անվան ազգային երգի ու պարի համույթը, ինչի կապակցությամբ պարբերականը ներկայացնում է խմբի ստեղծման աատմությունը, ինչպես նաև տեղեկություններ է հաղոր-

¹ Արեգե, 2010, հուլիս, № 4, էջ 12–13:

դում ծրագրով նախատեսված հայկական ազգային երգերի ու պարերի մասին¹:

Ուսումնասիրվող ժամանակահատվածում հայ-սիրիական հարաբերությունների սերտացման գործում մեծ նշանակություն ունեցավ ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի 2010 թ. մարտի 22-ի Սիրիա կատարած պաշտոնական այցը, որի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպումներ ունեցավ Սիրիայի նախագահ Բաշար ալ Ասադի, բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Եռօրյա այցի ընթացքում ՀՀ նախագահը հանդիպում ունեցավ նաև Հալեպի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, այցելեց Դեր էզ Ջոր, որտեղ Հայոց ցեղասպանության վերաբերյալ ելույթով հանդես եկավ²:

Հայ-արաբական հարաբերությունների ամրապնդման շրջանակներում 2010 թ. ապրիլի 11-ին եռօրյա այցով Լիբանան մեկնեց ՀՀ Ազգային ժողովի նախագահ Հովիկ Աբրահամյանը, որը հանդիպումներ ունեցավ Լիբանանի նախագահի, խորհրդարանի նախագահի, հայ համայնքի ներկայացուցիչների հետ: Լիբանանի խորհրդարանի նախագահի հետ հանդիպման ընթացքում կողմերը նշեցին, որ երկու երկրների միջև ձևավորվել են եղբայրական հարաբերություններ, որոնց կայացման գործում կարևոր դեր է խաղում Լիբանանի հայ համայնքը³: Չնայած երկու երկրների միջև ստորագրվել է տարբեր բնույթի 19 համաձայնագիր, այնուհանդերձ, երկկողմ տնտեսական հարա-

¹ Նույն տեղում, հոկտեմբեր, № 6, էջ 8–10:

² Հանդիպման ընթացքում Սիրիայի նախագահը մեծապես կարևորեց Սիրիայի հայ համայնքի դերը հայ-սիրական հարաբերությունների ամրապնդման գործում: Տե՛ս . Արեգե, 2010, ապրիլ, № 1, էջ 3:

³ Նույն տեղում, մայիս, № 1, էջ 3–5:

բերությունները զգալիորեն զիջում են քաղաքական հարաբերությունների մակարդակին:

«Արաբները և Հայաստանը» հոդվածում պարբերականը տեղեկություններ է հաղորդում 2010 թ. վերջերին տեղի ունեցած հայ-արաբական դիվանագիտական հարաբերությունների մասին: Մասնավորապես, նշված ժամանակահատվածում Էդվարդ Նալբանդյանը հյուրընկալեց ԱՄԷ արտգործնախարար Լաբնա Կասիմին, որի հետ քննարկեցին երկկողմ հարաբերությունների ամրապնդմանը ուղղված բազմաթիվ հարցեր: 2010 թ. նոյեմբերի 3-ին Իրաքում Հայաստանի նորանշանակ դեսպան Մուրադ Մուրադյանն իր հավատարմագրերը հանձնեց Իրաքի արտգործնախարար Հուշիատ Խիբարիին, որը ողջունեց ՀՀ իշխանությունների քայլը՝ վերաբացել Իրաքի դեսպանատունը: Այս նույն ժամանակահատվածում Սիրիայում ՀՀ դեսպան Արշակ Փոլադյանը մի շարք հանդիպումներ ունեցավ Սիրիայի առողջապահության, գյուղատնտեսության նախարարների, Հալեպի նահանգապետերի հետ¹: 2010 թ. հունիսի 25-ին Հայաստան այցելեց Քուվեյթի ֆինանսների նախարարը, որը հանդիպում ունեցավ ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի հետ: Արաբերեն պարբերականը լուսաբանում է հանդիպումը, որի ընթացքում կողմերը պայմանավորվեցին երկու եղբայրական երկրների միջև ակտիվացնել տնտեսական հարաբերությունները²: Նշենք, որ Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը մի շարք արաբական երկրների հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց, որոնք տարեցտարի զարգանում են:

¹ Արեգե, 2010, նոյեմբեր, № 7, էջ 16–17:

² Նույն տեղում, հուլիս, № 4, էջ 13:

Պարբերականի ուշադրությունից չի վրիպել Սիրիայում, հատկապես, Հալեպում տեղի ունեցող իրադարձությունները, որոնց արդյունքում քաղաքի արևելյան մասն անցավ իսլամիստների իշխանության տակ: «Իմ սիրելի Հալեպը» հոդվածում Կիրակոս Կիյումջանը ցավով ու ափսոսանքով է խոսում Հալեպի մասին, որտեղ ցեղասպանությունից հետո ապաստանեցին հազարավոր հայեր: Հոդվածագիրը հիացմունքով վերհիշում է Հալեպում ապրած երջանիկ տարիները՝ նշելով, որ «Հալեպի վիճակն օրեցօր վատթարանում է և, հավանաբար, այլևս նախկին Հալեպը չի լինի»¹:

Արաբերեն պարբերականը մեծ տեղ է հատկացրել արաբական երկրներում լույս տեսած հայազգի հեղինակների աշխատությունների լուսաբանմանն ու դրանց մասին տեղեկությունների հաղորդմանը արաբախոս ընթերցողին: Մասնավորապես, «Արեգ»-ը ընթերցողին ծանոթացնում է 2010 թ. վերջերին Սիրիայում սիրիահայ թարգմանիչ, հետազոտող Միհրան Մինասյանի հեղինակած «Ժամանակակից հայ գրողների ընտրանին» գրքի հետ, որի 224 էջերում ընդգրկված են 20-րդ դարի բազմաթիվ հայ նշանավոր գրողների (Համո Սահյան և ուրիշներ) լավագույն ստեղծագործությունները²:

«Արեգ»-ը Դամասկոսում սիրիահայ ուսումնասիրող Նորա Արիսյանի «Սիրայի խորհրդարանի հայ պատգամավորները 1928–2011 թթ.» գրքի հրատարակման կապակցությամբ ներկայացնում է Սիրիայի խորհրդարանի հայազգի 21 պատգամավորներին, նրանց կենսագրությունները: Հոդվածագիր Նորա Արիսյանը հաղորդում է, որ հայազգի պատգամավորները ակտիվ-

¹ , Արեգ, 2012, սեպտեմբեր, № 27, էջ 31–32:

² Նույն տեղում, 2011, օգոստոս, № 15, էջ 6–10:

րեն մասնակցել են խորհրդարանի աշխատանքներին, Սիրիայի սահմանադրության դրույթների մշակման աշխատանքներին՝ հանդես գալով տարաբնույթ ելույթներով: 1928–2011 թթ. Սիրիայի խորհրդարանի հայազգի պատգամավորներն են եղել Միհրան Բուզանթյանը, Ֆաթալլահ Ասոյանը, Ջանջի Ջանջուրյանը, Մովսես Գալուստյանը, Հենրի Բալաբանյանը, Հրաչ Փափազյանը, Հրանտ Սալահյանը, Պետրոս Միլթիբաշյանը, Արտաշես Պողոսյանը, Նազարեթ Յակոբյանը, Մովսես Սալարյանը, Տիգրան Ժիրաջյանը, Լուսի Բալաբանյանը, Աբդալլահ Ֆաթալը, Ֆարիդ Արսալանյանը, Գրիգոր Ապիշաթյանը, Արամ Կարամանուկյանը, Ռուբեն Դիրարյանը, Լևոն Ղազարը, Սիմոն Լիբարյանն ու Սունբուլ Սունբուկյանը¹: Սիրիահայ պատգամավորներից երկուսը զբաղեցրել են նաև նախարարի պաշտոն սիրիական կառավարության կազմում: Նրանցից առաջինը՝ Հենրի Բալաբանյանն էր, ով 1934–1936 թթ. եղել է Սիրիայի ֆինանսների նախարարը, իսկ Ֆաթալլահ Ասոյանը 1946–1961 թթ. զբաղեցրել է մի քանի նախարարական պաշտոններ՝ ընդհանուր գործերի, պետնախարարի, կապի, առողջապահության, հասարակական աշխատանքների և արդյունաբերության²:

Սիրիահայ ժամանակակից հետազոտողներից պարբերականն արժևորում է սիրիահայ հետազոտող, թարգմանիչ Նորա Արիսյանի կյանքն և գիտական գործունեությունը³: Նշենք, որ սիրիահայ հետազոտողը 1993–2006 թթ. աշխատել է Հայաստանում Սիրիայի դեսպանատանը, ապա Արևելագիտության ինստիտուտում պաշտպանել է ատենախոսություն: Սիրիա վե-

¹ Արեգե, 2011, դեկտեմբեր, № 19, էջ 14–23:

² Նույն տեղում, 2012, հուլիս, № 26, էջ 18–19:

³ Նույն տեղում, 2011, դեկտեմբեր, № 19, էջ 14–15:

րադառնալուց հետո հիմնականում զբաղվել է գիտական գործունեությամբ և թարգմանչական գործով: Հավելենք, որ Նորա Արիսյանը թղթակցում է «Արեգ» պարբերականին՝ կատարելով թարգմանչական գործի մի մասը և առ այսօր կարևոր հոդվածներ է գրում պարբերականի համար:

«Արեգ»-ը բարձր է գնահատում սիրիահայ մտավորական Ռիզկալլահ Հասունի ստեղծագործական կյանքը, որի ընթացքում հայազգի բանաստեղծը 1853 թ. Կ. Պոլսում հիմնադրեց առաջին ոչ պաշտոնական արաբական պարբերականը՝ «Իրադարձությունների հայելին»: Արաբերեն պարբերականը ընթերցողին է ներկայացնում Ռիզկալլահ Հասունի մի քանի նշանավոր ստեղծագործություններ¹: Արաբական քաղաքական միտքը և հայերը» հոդվածում պարբերականը ընթերցողին ներկայացնում է հալեպահայ մտավորական Ադիբ Իսհակի կյանքն ու գործունեությունը, քաղաքական հայացքները²: Ինչպես հայտնի է, արաբական երկրներում ապաստան գտած հայերը մեծ ներդրում են ունեցել արաբական աշխարհի քաղաքական, տնտեսական, հասարակական, մշակութային կյանքի աշխուժացման գործում: Այս կապակցությամբ նշանակալից է հալեպահայ Ռիզկալլահ Հասունի և Ադիբ Իսհակի ավանդը, որոնք արաբական հասարակական-քաղաքական մտքին նոր որակ հաղորդեցին:

2012 թ. Կահիրեում Հայկական բարեգործական ընդհանուր միության կողմից հրատարակվեց ամերիկահայ պատմաբան Ջորջ Բուռնաթյանի «Հայ ժողովրդի համառոտ պատմություն հին դարերից մինչև մեր օրերը» գրքի արաբերեն թարգմանությունը, ինչի կապակցությամբ «Արեգ»-ը ընթերցողին ներկայաց-

¹ Արեգե 2011, մայիս, № 13, էջ 23–25:

² Նույն տեղում, 2012, նոյեմբեր, № 29, էջ 26–33:

նում է 478 էջանոց գրքի գլխավոր դրույթները, որոնցում հեղինակը անդրադարձել է հայ ժողովրդի կազմավորման գործընթացին և հայոց պատմության այլ վիճահարույց հարցերի՝ շարադրանքը հասցնելով մինչև 2010 թ.¹:

2012 թ. լույս տեսած ժողովածուներից արաբերեն պարբերականն առանձնացնում է Քուվեյթում լույս տեսած հետազոտող Կիրակոս Կիյումջյանի «Պատմության և քաղաքականության վերաբերյալ հոդվածներ»-ի ժողովածուն, որտեղ ամփոփված են հեղինակի հայ-արաբական հարաբերությունների, Հայկական հարցի, հայկական ժառանգության վերաբերյալ տարբեր տարիների ընթացքում գրված հոդվածները²:

Այսպիսով, «Արեգ» արաբերեն պարբերականն իր էջերում լուսաբանում է 2010–2015 թթ. հայ-արաբական հարաբերությունների զարգացման դինամիկան, ինչպես նաև արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում Մերձավոր Արևելքի ժամանակակից հայազգի ուսումնասիրողների 2010–2015 թթ. հրատարակած աշխատանքների մասին: «Արեգ» պարբերականն իր նշանակալից ավանդն ունեցավ հայ-արաբական հարաբերությունների զարգացման գործում՝ նպաստելով երկու երկրների քաղաքական, մշակութային շփումներին և իր լուսաբանումներով տալով հայ և եգիպտական ժողովուրդների հոգևոր ու քաղաքական մերձեցումների առարկայական օրինակները:

¹ , Արեգ, 2012, մարտ, № 22, էջ 5–9:

² Նույն տեղում, սեպտեմբեր, № 27, էջ 7–8:

ԳԼՈՒԽ ՅՈՒԹԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ

ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Արաբերեն պարբերականի էջերում մեծ տեղ են գրավում նաև հայ գրականության, մշակույթի, ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի պատմության մասին հրապարակումները:

«Արեգ» պարբերականը ընթերցողին Հայաստանի վերաբերյալ տեղեկություններ հայտնելիս անընդհատ շեշտում է, որ այն աշխարհի հնագույն երկրներից է, որը ապացուցվել է Հայաստանի տարբեր տարածքներում կատարված պեղումների արդյունքում հայտնաբերված նյութերով: Մասնավորապես, պարբերականը մատնանշում է 2005 թ. Հայաստանի հարավային մասում հայտնաբերված կոշիկները, որոնք ունեն ավելի քան 5.000 տարվա պատմություն¹:

Արաբ հետազոտող Ինջի Հուանի Հուսեյնը, ներկայացնելով իր «Հայաստանի դերը Պարսկաստանի և Հռոմի միջև ուժգին պայքարում» աշխատությունը, որտեղ հեղինակը ընթերցողին տեղեկություններ է հաղորդում հայկական առաջին երեք դինաստիաների մասին, անդրադառնում է ք.ա. 4-րդ դարից մինչև 3-րդ դարի վերջերը ընկած ժամանակահատվածում տարածաշրջանում տեղի ունեցած պատմական իրադարձություն-

¹ , Արեգ, 2010, հուլիս, № 4, էջ 7:

ների լուսաբանմանը¹: «Բրիտանիան և Հայկական հարցը» հոդվածում արաբ ուսումնասիրող Սահիդ Հուսեյնը տեղեկություններ է հաղորդում Հայկական հարցի պատմության միջազգայնացման շրջանի մասին՝ ընդգծելով, որ 1878 թ. Բեռլինի կոնֆերանսից հետո եվրոպական երկրները, այդ թվում, Մեծ Բրիտանիան, Հայկական հարցը սկսեցին օգտագործել որպես լծակ Օսմանյան կայսրության վրա-ճնշում գործադրելու համար²:

Արաբերեն պարբերականը մեծապես կարևորել է 2010–2015 թթ. ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության լուսաբանումը: «Արեգ» պարբերականը լայնորեն լուսաբանում է 2010 թ. փետրվարին Սերժ Սպրդյանի Միացյալ Թագավորություն կատարած այցը, որի ընթացքում հանդիպումներ ունեցավ Մեծ Բրիտանիայի վարչապետի, թագուհու, բարձրաստիճան պաշտոնյաների հետ, քննարկվեցին հայ-բրիտանական հարաբերությունների ամրապնդման, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի կարգավորման, հայ-թուրքական հարաբերությունների, եվրոպական կառույցներին Հայաստանի ինտեգրման հետ կապված բազմաթիվ հարցեր³: Մեկ այլ համարում լուսաբանվում է 2011 թ. հոկտեմբերի 6–7-ին Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի Հարավային Կովկաս կատարած այցը, որի շրջանակներում նա այցելեց Հայաստան, Ադրբեջան և Վրաստան: Ֆրանսիայի նախագահի այցը Հայաստան ամենաերկարատևն էր, ինչը պարբերականը պայմանավորում է ֆրան-

¹ . Արեգ, 2010, հունիս, № 3, էջ 18–20:

² Նույն տեղում, էջ 21:

³ Նույն տեղում, ապրիլ, № 1, էջ 11:

սահայ համայնքի՝ երկրի քաղաքական-կյանքում խաղացած դերով՝

2010 թ. ապրիլի 13-14 ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնական այցով մեկնեց Իրան, որտեղ հանդիպումներ ունեցավ Իրանի նախագահի, հոգևոր առաջնորդի, խորհրդարանի նախագահի հետ, որոնց ընթացքում քննարկվեցին երկու երկրներին առնչվող տարաբնույթ հարցեր: Բացի այդ, ՀՀ նախագահը հանդիպեց Թեհրանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի լուսաբանմանը նաև անդրադարձել է պարբերականը²: «Արեգ»-ը ընթերցողին մանրամասն ներկայացնում է ՀՀ նախագահի ելույթը, որի ընթացքում խոսել է Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման մասին³:

Արաբերեն պարբերականը լայնորեն լուսաբանում է Եգիպտոսում ՀՀ դեսպան Արմեն Մելքոնյանի՝ 2012 թ. հունվարի 11-ին «Արաբական հայրենիք» թերթին տված հարցազրույցը, որտեղ դեսպանը անդրադարձել է հայ-թուրքական հարաբերություններին, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումներին և այլն: ՀՀ դեսպանը, խոսելով հայ-թուրքական հարաբերությունների մասին, դրանք բարձր է որակել՝ հույս հայտնելով, որ երկու երկրների միջև անմիջական թռիչքներ կիրականացվեն, կավելանա երկկողմ գրո-

¹, Արեգե 2011, նոյեմբեր, № 18, էջ 1-5:

² Իրանի քաղաքական բարձրագույն ղեկավարության հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման խնդիրը, երկկողմ տնտեսական մի շարք ծրագրերի, մասնավորապես Արաբս գետի վրա համատեղ ՀԷԿ-ի կառուցման մասին:

³, Արեգե, 2010, մայիս, № 2, էջ 9-12:

սաշրջիկների թիվը, կընդլայնվեն հայ-եգիպտական տնտեսական հարաբերությունները¹:

2010 թ. օգոստոսի 20-ին Երևանում ստորագրվեց նոր համաձայնագիր հայ-ռուսական ռազմավարական համագործակցության վերաբերյալ, որով երկարացվում էին 1995 թ. ռազմավարական համագործակցության վերաբերյալ ստորագրված պայմանագրի դրույթները: Նոր համաձայնագիրը մեծ արձագանք գտավ մամուլում՝ այդ թվում «Արեգ»-ի էջերում: Այս կապակցությամբ պարբերականը ընթերցողին ներկայացնում է պայմանագրի կետերը, անդրադառնում է հայկական իշխանությունների, վրացական, ադրբեջանական կողմերի արտահայտած դիրքորոշումներին²: Բացի այդ, հոդվածագիր Պերճ Թերզյանը նկատում է, որ այս համաձայնագրում Ռուսաստանը ձգտում է ամրացնել իր ռազմական ներկայությունը Նախկին Խորհրդային Միության տարածքում: Նշենք, որ վերոնշյալ համաձայնագիրը Հայաստանում ընդունվեց ոչ միանշանակ: Եթե իշխող, Հանրաապետականե կուսակցությունը ողջունեց ստորագրված համաձայնագիրը, ապա ընդդիմության, մասնավորապես, «Ժառանգություն» կուսակցության կողմից սուր քննադատության արժանացավ:

2010 թ. դեկտեմբերի սկզբներին Աստանայում տեղի ունեցավ ԵԱՀԿ-ի 7-րդ գագաթնաժողովը, որին մասնակցում էր 56 երկրի շուրջ 5.000 ներկայացուցիչ: Գագաթնաժողովին մասնակցում էր նաև հայկական պատվիրակությունը նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ: Գագաթնաժողովի առանցքային հարցերից էր Լեռնային Ղարաբաղի հակամարտության

¹ , Արեգ, 2012, հունվար, № 20, էջ 6–10, № 21, էջ 6–10:

² Նույն տեղում, 2010, հոկտեմբեր, № 6, էջ 1–3:

կարգավորման խնդիրը, որի կապակցությամբ արաբերեն պարբերականը լայնորեն լուսաբանում է այն՝ ընթերցողին ներկայացնելով հակամարտության խաղաղ կարգավորման բանակցային գործընթացը: Բացի այդ, պարբերականը ներկայացնում է գազաթնաժողովի ընթացքում ՀՀ նախագահի ունեցած ելույթի տեքստը, Մինսկի խմբի համանախագահող երկրների ղեկավարների համատեղ հայտարարությունը հակամարտության կարգավորման վերաբերյալ, որում կոչ էին անում հակամարտող կողմերին զերծ մնալ ռազմական ուժի կիրառումից և խնդիրը լուծել միմիայն խաղաղ բանակցությունների ճանապարհով¹:

2011 թ. շախմատի Հայաստանի ազգային հավաքականը փայլուն հաղթանակ տարավ աշխարհի առաջնությունում: Այդ կապակցությամբ «Արեգ»-ը, դրվատանքի խոսքեր ուղղելով հայ շախմատիստներին, ընթերցողին ներկայացնում է հայ նշանավոր շախմատիստներին և հավելում, որ Հայաստանը միշտ շախմատային երկիր է եղել և լուրջ մրցակից աշխարհի հզոր երկրների համար²:

ՀՀ անկախության 20-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը ընթերցողին տեղեկություններ է հաղորդում Հայաստանի հանրապետության մասին՝ շեշտադրումը անելով ՀՀ 20 տարիներին ունեցած ձեռքբերումների վրա: Հոդվածագիր Պերճ Թերզյանը մանրամասն ներկայացնում է ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության առանցքային ուղղությունները, ազգային տոները, տեղեկություններ հաղորդում աշխարհագրական դիրքի և այլ պետությունների, այդ թվում, արաբական երկրների հետ

¹ Արեգ, 2010, դեկտեմբեր, № 8, էջ 1-5:

² Նույն տեղում, 2011, օգոստոս, № 15, էջ 25:

հաստատած դիվանագիտական հարաբերությունների մակարդակի մասին¹:

2012 թ. Յունեսկոյի կողմից Երևանը ընտրվեց տպագրության մայրաքաղաք, ինչը չի վրիպել պարբերականի ուշադրությունից: Նշենք, որ Երևանը դարձավ աշխարհի 12-րդ քաղաքը, որ արժանացավ տվյալ պատվին: Պարբերականը նշում է, որ առաջին հայկական գիրքը լույս է տեսել հեռավոր 1512 թ. Վենետիկում՝ Հակոբ Մեղապարտի կողմից, և 2012 թ. լրանում է նույն տպագրության 500-ամյակը²:

«Արեգ» պարբերականին մտահոգել է նաև հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակը: 2009 թ. հոկտեմբերի 10-ին Ցյուրիխում ստորագրված համաձայնագրով նոր էջ բացվեց երկկողմ հարաբերություններում: Սակայն, ինչպես ժամանակը ցույց տվեց, թուրքական իշխանությունները մտադիր չէին համաձայնագիրը կյանքի կոչելու: Պարբերականը լայնորեն անդրադառնում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին՝ նկատելով, որ թուրքական կողմը, ի տարբերություն հայկական կողմի, նախապայմաններ է առաջ քաշում երկկողմ հարաբերությունների կարգավորման համար³: Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ընթացքի վերաբերյալ մեկ այլ հոդվածում արաբերեն պարբերականը մեջբերում է ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի խոսքը, որը 2010 թ. թերթերից մեկին տված հարցազրույցներից մեկում նշել է, որ «Մենք Թուրքիայի հետ ստորագրեցինք համաձայնագրեր երկկողմ հարաբերությունների կարգավորման

¹ Արեգ, 2011, սեպտեմբեր, № 16, էջ 17:

² Նույն տեղում, 2010, օգոստոս, № 5, էջ 4:

³ Նույն տեղում, մայիս, № 1, էջ 2-3:

վերաբերյալ առանց նախապայմանների: Սակայն Թուրքիան չի կատարում պայմանագրով ստանձնած պարտավորությունները և չի վավերացնում այն: Բացի այդ, թուրքական կողմը պայմանագրի իրագործումը անմիջականորեն փորձում է կապել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հետ»¹:

Բեյրութում ամերիկահայ խմբագիր Հարութ Սասունյանի «Արձանագրություններ Հայաստանի և Թուրքիայի միջև, իրականություն, թե պատրանք» գրքի արաբերեն թարգմանության լույս ընծայման կապակցությամբ «Արեգ»-ը ընթերցողին ներկայացնում է գրքի հիմնական դրույթները, որտեղ ամփոփված են Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրված արձանագրությունների վերաբերյալ ամերիկահայ խմբագրի 2008–2010 թվականներին տպագրված հոդվածները: Հարութ Սասունյանն իր հոդվածներում մանրամասն ներկայացնում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացը՝ հենց սկզբից կանխատեսելով դրա ձախողումը, քանի որ Թուրքիան նախապայմաններ էր առաջ քաշում հայ-թուրքական սահմանը քացելու համար: Հարութ Սասունյանը դեմ էր նաև Հայոց ցեղասպանությունը ուսումնասիրելու համար համատեղ հանձնաժողով ստեղծելու գաղափարին, քանի որ այն, Հայոց ցեղասպանության փաստը կասկածի տակ դնելուց զատ, խոչընդոտելու էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացին²:

Հղում անելով «Հուրիյե դեյլի նյուզ»-ին՝ պարբերականը հարյուրդում է, որ հայ նշանավոր կինոռեժիսոր Ատոմ Էգոյանը ցանկանում է նոր ֆիլմ նկարահանել Թուրքիայում՝ կոչ անելով

¹ , Արեգ, 2010, հոկտեմբեր, № 6, էջ 4–5:

² Նույն տեղում, 2012, հունվար, № 20, էջ 21–22

հայ և թուրք ժողովուրդներին երկխոսության մեջ մտնել: «Արեգ»-ը ընթերցողին ներկայացնում է Ատոմ Էգոյանի կյանքն ու գործունեությունը, տեղեկություններ հաղորդում 1915 թ. կոտորածներին նվիրված «Արարատ» ֆիլմի (2002 թ.) մասին, որը ժամանակին մեծ բողոքի ալիք էր բարձրացրել թուրք հասարակության շրջանում¹:

Պարբերականին հետաքրքրել է նաև հայ-ղազախական հարաբերությունները, ինչի կապակցությամբ ընթերցողին տեղեկություններ է հաղորդում դրանց ձևավորման ընթացքի, հարաբերությունների արդի վիճակի մասին ²: Նշենք, որ հայ-ղազախական դիվանագիտական հարաբերությունները հաստատվեցին Խորհրդային Միության փլուզումից հետո՝ 1993 թ. հունվարի 11-ին: 1998 թ. սեպտեմբերին Ղազախստան այցելեց ՀՀ նախագահ Ռոբերտ Բոչարյանը, իսկ 2001 թ. մայիսին Հայաստան այցելեց Ղազախստանի նախագահը: Այս այցերի ընթացքում ստորագրվեցին բազմաթիվ պայմանագրեր տնտեսական, քաղաքական, մշակութային ոլորտներում երկկողմ հարաբերությունները խորացնելու նպատակով: Հավելենք, որ երկկողմ հարաբերությունների վրա բացասական ազդեցություն է ունենում Լեռնային Ղարաբաղի հնկամարտության չկարգավորված լինելը, Հայաստանի մեկուսացումը տարածաշրջանային տնտեսական ծրագրերից:

Արաբերեն պարբերականը իր ուշադրության կենտրոնում է պահել Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուսաբանումը: Մասնավորապես, հիմնախնդրի պատմությունը ներկայացնելիս արաբերեն պարբերականը հաղորդում է, որ այն երբեք Ադրբե-

¹ , Արեգ, 2010, օգոստոս, № 5, էջ 8-9:

² Նույն տեղում, դեկտեմբեր, № 5, էջ 10-12:

ջանի մաս չի կազմել և միայն 1921 թ. Ստալինի որոշմամբ հանձնվել է Ադրբեջանին: 1988 թ.-ին սկսված շարժման արդյունքում 1991 թ. սեպտեմբերի 2-ին ստեղծվեց Արցախի հանրապետությունը, որին հաջորդեց հայ-ադրբեջանական պատերազմը: «Արեգ»-ը ընդգծում է, որ Ադրբեջանը փորձում է Արցախյան հիմնախնդրին տալ կրոնական բնույթ՝ ակնկալելով մոսուլմանական աշխարհի օգնությունը¹: Սակայն նշենք, որ Հայաստանը ջերմ հարաբերություններ է պահպանում արաբական, մոսուլմանական շատ երկրների հետ և, երբ որ Ադրբեջանը փորձում է ԻԿԿ-ի շրջանակներում հակահայկական բանաձև առաջ քաշել, ապա դրա քվեարկման ընթացքում Հայաստանի հետ ջերմ հարաբերություններ ունեցող մոսուլմանական երկրները չեն մասնակցում քվեարկությանը, կամ ձեռնպահ են մնում:

Լեռնային Ղարաբաղի անկախացումից հետո ադրբեջանական իշխանությունները պետական մակարդակով տեղեկատվական, պետական արշավ սկսեցին՝ փորձելով պատմությունը խեղաթյուրելով «ապացուցել», որ հայերը Ղարաբաղում երբևէ մեծամասնություն չեն կազմել և միայն 1991–1994 թթ. պատերազմի արդյունքում բնիկ ադրբեջանցիներին արտաքսելուց հետո զավթեցին վերջիններիս հողերը: Այս կապակցությամբ արաբերեն պարբերականը նշում է, որ Ղարաբաղը հայկական տարածք է, և դարեր ի վեր հայերը մեծամասնություն են կազմել: Բացի այդ. պարբերականը ներկայացնում է Ջորջ Բուռնայանի՝ Ղարաբաղի բնակչության դեմոգրաֆիական կազմի վերաբերյալ ռուսական առաջին աղբյուրներից արված թարգ-

¹ Արեգ, 2012, ապրիլ, № 23, էջ 18–19:

մանությունները, որոնք ուսումնասիրելուց հետո պարզ է դառնում, որ 1805 թ. Ղարաբաղը Ռուսաստանին միանալուց հետո հայերը մշտապես մեծամասնություն են կազմել (մոտ 90%), իսկ ադրբեջանցիների նախնիները՝ թաթարները, թվաքանակով զգալիորեն զիջել են հայերին¹:

Մեկ այլ համարում Պերճ Թերզյանն ընթերցողին ներկայացնում է 2004 թ. Հունգարիայում ադրբեջանցի զինվորական Ռամիլ Սաֆարովի կողմից հայազգի զինվորական Գուրգեն Մարգարյանի կացնահարման դեպքի հետ կապված դատավարությունների պատմությունը, որոնց արդյունքում Հունգարիան արտահանձնեց Սաֆարովին Ադրբեջանին, որտեղ նրան հերոսի կոչում շնորհեցին²:

2010 թ. հուլիսի 22 ՄԱԿ-ի միջազգային դատարանը հայտնեց, որ Կոսովոյի անկախությունը (2008 թ.) չի հակասում միջազգային իրավունքի նորմերին: Այս կապակցությամբ «Արեգ» պարբերականը ընթերցողին ծանոթացնում է Կոսովոյի հիմնախնդրի հետ՝ զուգահեռներ անցկացնելով Լեռնային Ղարաբաղի և Կոսովոյի հիմնախնդիրների միջև: Հոդվածագիր Պերճ Թերզյանը նկատում է, որ Կոսովոյի անկախությունը կայացավ, քանի որ ԱՄՆ ճանաչեց այն, որից հետո մի քանի տասնյակ երկրներ ճանաչեցին Կոսովոյի անկախությունը: Իսկ Լեռնային-Ղարաբաղը, ի տարբերություն Սերբիայի անքակտելի մաս հանդիսացող Կոսովոյի, երբեք Ադրբեջանի մաս չի կազմել: Հեղինակը իրավացիորեն Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչումը միջազգային հանրության կողմից պայմանավորում

¹ , Արեգ, 2013 թ. փետրվար, № 32, էջ 1-5:

² Նույն տեղում, 2012, սեպտեմբեր, № 27, էջ 1-6:

է մեծ տերությունների հետապնդած շահերով, որոնք հակասում են Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչմանը: Բացի այդ, Պերճ Թերզյանը ընթերցողին համառոտ ներկայացնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության բանակցային գործընթացը՝ ընդգծելով, որ հայերը միշտ էլ Լեռնային Ղարաբաղում մեծամասնություն են կազմել, հետևեաբար, այն չի կարող լինել Ադրբեջանի կազմում¹:

Ստեփանակերտի օդանավակայանի վերակառուցման ավարտի կապակցությամբ Պերճ Թերզյանը անդրադառնում է ՀՀ նախագահի, ադրբեջանական իշխանությունների, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների հայտարարություններին²: Նշենք, որ դեռևս 2011 թ. Ստեփանակերտի օդանավակայանից պետք է տեղի ունենար առաջին թռիչքը, սակայն Ադրբեջանի հնչեցրած սպառնալիքների և այլ պատճառներով Ստեփանակերտի օդանավակայանից թռիչքներ չեն իրականացվում: Պարբերականը ընթերցողին որոշ տեղեկություններ է հաղորդում օդանավակայանի վերականգնման, վերջինիս շուրջ ստեղծված միջազգային հանրության կարծիքի մասին: Պերճ Թերզյանը նկատում էր, որ Հայաստանի օդային տարածքով Ադրբեջանից Նախիջևան իրականացրած թռիչքների նկատմամբ Հայաստանը որևէ խոչընդոտ չի դնում, այնինչ Ադրբեջանը կտրուկ դեմ է հանդես գալիս Ստեփանակերտի օդանավակայանի շահագործմանը և սպառնում է խոցել քաղաքացիկան ինքնաթիռները: Հոդվածագիրը հույս է հայտնում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կլուծվի, խաղաղություն կհաս-

¹ , Արեգե, 2010, օգոստոս, № 5, էջ 1-4:

² Նույն տեղում, 2011, մարտ № 17, էջ 1-2:

տատվի երկու երկրների միջև և Ստեփանակերտի օդանավակայանը կիրականացնի ինչպես տեղական այնպես էլ միջազգային թռիչքներ:

Արաբերեն պարբերականը շարունակաբար արաբախոս ընթերցողին տեղեկացնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի առկա իրավիճակի մասին: Հակամարտության կառավարման գործընթացում կարևոր էր Կազանում 2011 թ. հունիսի 24-ին ստորագրված փաստաթուղթը, որով հակամարտող կողմերը համաձայնության եկան մի քանի առանցքային հարցերի շուրջ և պարտավորվեցին շարունակել բանակցային գործընթացը՝ բացառելով ուժի կիրառումը: «Արեգ»-ը ներկայացնում է հայ, ռուս և ադրբեջանցի քաղաքական վերլուծաբանների և պաշտոնյաների արտահայտած կարծիքները Կազանի փաստաթղթի վերաբերյալ: Հոդվածագիր Պերո Թերզյանը նշում է, որ Ադրբեջանը դեմ է, որ հիմնախնդիրը լուծվի միջազգային հովանու ներքո անցկացվող հանրաքվեի միջոցով, քանի որ Արցախի բնակչության գերակշիռ մեծամասնությունը հայ են, որոնք չեն ուզենա Ադրբեջանի հետ ապրել մեկ հարկի տակ: Այդ պատճառով Ադրբեջանում ավելի շատ հակված են խնդիրը լուծել ռազմական ճանապարհով:

Պարբերականը տեղեկություններ է հաղորդում նաև հայկական որոշ համայնքների վերաբերյալ: Մասնավորապես, 7-րդ համարում արաբերեն պարբերականը տեղեկություններ է հաղորդում Ավստրալիայի հայ համայնքի մասին, որի ամենահայտնի ներկայացուցիչը, ըստ պարբերականի, Արթին Իթ-

¹ , Արեգ, 2011, օգոստոս, № 15, էջ 1-4:

մաքջանն է, որը 2010 թ. Սիդնեյի մերձակա Ռադիո քաղաքի - քաղաքապետն է եղել: Պարբերականը հաղորդում է, որ Արթին Իթմաքջանը մեծ հարգանք է վայելում Ռադիո քաղաքի բնակչության շրջանում¹ և իր ղեկավարման տարիներին բազմաթիվ ծրագրեր է իրականացրել քաղաքում: Նշենք, որ Ավստրալիայի հայկական համայնքը սփյուռքի կարևոր համայնքներից է² ու, լիարժեք ներգրավված լինելով Ավստրալիայի հասարակության մեջ, պահպանում է հայկական ավանդույթները: Մեկ այլ համարում պարբերականը ներկայացնում է միջազգային իրավունքի մասնագետ Սևան Կարապետյանի հայկական թերթերից մեկին տված հարցազրույցի արաբերեն թարգմանությունը, որտեղ հայազգի հետազոտողը խոսում է իր՝ «Մարդկության դեմ հանցագործությունները միջազգային իրավունքի ժամանակակից սկզբունքների տեսանկյունից» գրքի մասին: Բացի այդ, պարբերականը համառոտ կենսագրական տեղեկություններ է հաղորդում Սևան Կարապետյանի մասին, որը ծնված լինելով Շվեդ-ցարիայում, երկար տարիներ ապրել է Կահիրեում և թերթերից մեկին տված հարցազրույցում իրեն եգիպտացի է համարել³:

Արաբերեն պարբերականը նաև որոշ տեղեկություններ է հաղորդում Իրանի հայ համայնքի մասին: Իրանահայ համայնքը 19-րդ դարի երկրորդ կեսին մեծ վերելք ապրեց: Ռուսահայ համայնքի առևտրական շրջանակների հետ ունեցած սերտ կապերի շնորհիվ առևտրային կենտրոններ բացեցվին: Իրանի շահ Նասր ալ Դինը ցանկանում էր հայերի գիտական ներուժը, լեզվի իմացությունը, արտասահմանյան կապերը օգտագործե-

¹ , Արեգե, 2010, նոյեմբեր, № 7, էջ 5-6:

² 20-րդ դարի ընթացքում Մերձավոր Արևելքից Ավստրալիա գաղթեցին հազարավոր հայեր՝ ստվարացնելով տեղի հայ համայնքը:

³ , Արեգե, 2010, նոյեմբեր, № 7, էջ 8-11:

լով Իրանի տնտեսական, հասարակական կյանքում արմատական փոփոխություններ կատարել։ Այդ նպատակով Եվրոպա ուսանելու ուղարկեց բազմաթիվ հայերի, որոնք ուսումնասիրեցին արևմտյան արժեքներ, քաղաքական գաղափարներ, յուրացրեցին տեխնիկական նվաճումները։ Վերոնշյալ հայերից էր Միրզա Մալիքում խանը, որը մեկնել էր Եվրոպա ինժեներություն սովորելու։ Վերադառնալով Իրան՝ հայազգի ներկայացուցիչը իսլամ է ընդունում և դասավանդում Իրանի կրթական տարբեր հիմնարկներում։ 19-րդ դարի 90-ականներին Միրզա Մալիքումը գաղտնի միություն է հիմնում, այնուհետև հրատարակում իր նշանավոր գիրքը՝ «Բարենորոգումների գիրք», որը տրամադրվեց Իրանի շահին։ Իրանում 1906 թ. տեղի ունեցած սահմանադրական հեղափոխությունից հետո վերջինիս առաջնորդներն իրենց ծրագիրը ներկայացրեցին՝ ղեկավարվելով վերոնշյալ գրքով։ Այս գրքում նշված էր այն միջոցների ցանկը, որոնց իրագործման ընթացքում Իրանում կբարձրանար բնակչության կենսամակարդակը, կամրապնդվեր հասարակական արդարությունն ու երկրի տնտեսական կյանքում աշխուժություն կնկատվեր։ Միրզա Մալիքումը մեծ դեր խաղաց Իրանում նաև կրոնական համայնքների միջև հանդուրժողականության մթնոլորտի ձևավորման գործում¹։ Մալիքում խանը, 1890 թ. հիմնադրած «Ալ Կանուն» պարբերականի օգնությամբ, յուրահատուկ կամուրջ ստեղծեց մտավորականների և հոգևորականների միջև, որի միջոցով կոչ էր անում հոգևորականներին հաղթահարել կրոնական տարածայնությունները, ազատվել օտարների ազդեցությունից։

¹ . Արեգե, 2013, մայիս, № 35, էջ 6–8։

Պարբերականը գրեթե յուրաքանչյուր համարում ներկայացնում է հայ նշանավոր քանաստեղծների, երգիծաբանների ստեղծագործություններից մեկի արաբերեն թարգմանությունը: Մասնավորապես, 21-րդ համարում ներկայացվում են Հակոբ Պարոնյանի «Սեդրակ աղա», «Խեղճ աղջիկներ» ստեղծագործությունները¹: 36-րդ համարում էլ ներկայացնում է հայ գրող Հենրիկ Աթոյանի կյանքն ու բանաստեղծությունները²: Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը անդրադառնում է կոմպոզիտորի կյանքի ու երաժշտական գործունեության լուսաբանմանը՝ վերջինիս համարելով 20-րդ դարի աշխարհի լավագույն երգահաններից մեկը³:

Արաբերեն պարբերականը, ընթերցողին ներկայացնելով ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի ստեղծագործություններից մեկը, բարձր է գնահատում նրա տաղանդը՝ ընդգծելով, որ նրա բոլոր ստեղծագործություններում նկատվում է հայկական շունչը⁴: Մեկ այլ համարում ներկայացնում է հայկական ժառանգությունների մասնագետ Աստղիկ Վիրաբյանի հետ ունեցած հարցազրույցը հայկական խոհանոցի, հայ ավանդական ուտելիքների մասին⁵:

Այսպիսով, «Արեգ» պարբերականն արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, որոշ հայ համայնքների, հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակի վերաբերյալ, ինչպես նաև արժևորում ու ներկայացնում է հայ նշանավոր արվեստագետ-

¹ Արեգ, 2012, սեպտեմբեր, № 27, էջ 18–20:

² Նույն տեղում, 2013, հունիս, № 36, էջ 4–9:

³ Նույն տեղում, էջ 10–16:

⁴ Նույն տեղում, մայիս, № 35, էջ 9–13:

⁵ Նույն տեղում, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 15–17:

ների գործունեությունը, ստեղծագործությունները: Բացի այդ, ամսագիրն ընթերցողին ներկայացնում է Արցախի հիմնախնդրի պատմությունը, հիմնավորում հայկական դիրքորոշման արդարացիությունը:

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԵԳԻՊՏՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ ԳԱՐՆԱՆ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄՆ ՈՒ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ

Հայկական բովանդակությամբ թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական բովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը, որոնց շարքում մեծ տեղ է հատկացված Եգիպտոսին վերաբերող տարաբնույթ թեմաների լուսաբանմանը:

1881–1882 թթ. Ահմադ Արաբիի գլխավորած սահմանադրական առաջին ապստամբության 130-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը ներկայացնում է 1881–1882 թթ. պատմական անցքերը Եգիպտոսում, որի համար սուր պայքար ծավալվեց Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի միջև, որոնք ցանկանում էին Եգիպտոսը դարձնել իրենց գաղութը: Այս պայքարում վերջիվերջո հաղթող դուրս եկավ Մեծ Բրիտանիան, քանի որ Ֆրանսիան չհամարձակվեց բաց պատերազմի մեջ մտնել՝ վախենալով արևելյան հզոր հարևան Գերմանիայից: Այս պայքարը ուղեկցվում էր Եգիպտոսում տեղի ունեցող ներքաղաքական պայքարով, որն ընթանում էր խղիվ Թաուֆիկի և Ահմադ Արաբիի գլխավորած Եգիպտոսի հայրենասիրական շարժման կողմնակիցների միջև: Այս պայքարի արդյունքում հրաժարական տվեց Շերիֆ փաշայի կառավարությունը, և Ահմադ Արաբիին ստանձնեց նոր կառավարությունում ռազմական նախարարի պաշտոնը:

նը: Բացի այդ¹, 1882 թ. սկզբներին ընդունվեց նոր սահմանադրություն, որով ամրագրվում էին Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի որոշ իրավունքները: Այս սահմանադրական հեղաշրջումը համարվում է առաջինը Արևելքի նորագույն պատմության մեջ²:

19-րդ դարը արդյունաբերության մեջ հեղափոխական էր. նոր ճյուղեր ստեղծվեցին, որոնք դրական մեծ փոփոխություններ առաջ բերեցին եվրոպական հասարակության կյանքում: Եվրոպային մոտ գտնվելու շնորհիվ Եգիպտոսը ևս անմասն չմնաց այս դրական փոփոխություններից, և 19-րդ դարի կեսերին երկրում ի հայտ եկան արդյունաբերական տարբեր ճյուղեր, զարգացան գիտության, արվեստի մի շարք ճյուղեր, որոնց մասին պարբերականը ընթերցողին մանրամասն տեղեկություններ է տրամադրում³:

«Ծանր արդյունաբերության զարգացումը Եգիպտոսում 1954–1974 թթ.» հոդվածում արաբերեն պարբերականը ներկայացնում է եգիպտական իշխանությունների ձեռնարկած ծանր արդյունաբերության զարգացմանը նպաստող միջոցառումները: Դեռևս 19-րդ դարի կեսերից, Մուհամմադ Ալիի կատարած բարեփոխումներից հետո, Եգիպտոսում բուռն տնտեսական աշխուժություն նկատվեց: Մանդատային տարիներին Եգիպտոսում մեծ զարգացում ունեցավ թեթև արդյունաբերությունը (տեքստիլ և այլն): 1952 թ. հեղափոխությունից հետո Եգիպտոսի նոր իշխանությունները վերանայեցին երկրի տնտեսական քաղաքականությունը՝ արդյունաբերության ոլորտում կատարելով արմատական բարեփոխումներ: Կատարված փոփոխու-

¹ Արեգե, 2012, հունվար, № 20, էջ 19–25:

² Նույն տեղում, 2010, օգոստոս, № 5, էջ 20–26:

յունների արդյունքում 1954–1974 թթ. Եգիպտոսում մեծ զարգացում ապրեց ծանր արդյունաբերությունը՝ հատկապես, քիմիականը, ստեղծվեցին ծանր արդյունաբերության նոր ճյուղեր¹:

«Եգիպտոսի պատերազմները և դրանց ազդեցությունը արդյունաբերության վրա 1956–1973 թթ.» հոդվածում էլ արաբ հետազոտող Սայիդ Հասանը նշում է, որ 1956 թ. և 1973 թ. պատերազմները քաղաքականից բացի՝ նաև տնտեսական պատճառներ ունեին: Այդ պատերազմները Եգիպտոսում ուղղակի, հատկապես, ծանր արդյունաբերության զարգացման գլխավոր խթանիչ գործոնը հանդիսացան: Բացի այդ, սույն հոդվածում ներկայացվում է տնտեսական իրադրությունը Եգիպտոսում 1956–1973 թթ.՝ վերելքներն ու վայրէջքները, դրանց պատճառները²:

1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի 42-ամյակի կապակցությամբ «Արեգ»-ը ներկայացնում է պատերազմի մասին օտարների, մասնավորապես, եվրոպացի հրեա զինվորականների, քաղաքական գործիչների հայտնի հուշերը³: Նշենք, որ 1973 թ. պատերազմի սկզբում Եգիպտոսը, մասնակի հաղթանակ տանելուց հետո, դուրս եկավ պատերազմից, որից հետո Իսրայելին հաջողվեց վերականգնել կորցրած դիրքերը Եգիպտոսում: Արաբական աշխարհում ընդունված է համարել, որ այդ պատերազմում արաբները հաղթանակ են տարել: 50-րդ համարում էլ ներկայացվում են Անվար Սադատի հուշերը 1973 թ. արաբա-իսրայելական պատերազմի մասին⁴, որտեղ բարձր

¹ Արեգ 2011, հոկտեմբեր, № 17, էջ 22–25:

² Նույն տեղում, 2013, հոկտեմբեր, № 39, էջ 16–20:

³ Նույն տեղում, 2015, հոկտեմբեր, № 61, էջ 16–21:

⁴ Նույն տեղում, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 8–9:

է գնահատել ռազմական օդաչու Հոսնի Մուբարաքի դերը 1973 թ. պատերազմում տարած հաղթանակի գործում¹:

2010 թ. վերջերին արաբական երկրներում սկսված հեղափոխական ալիքը, այսպես կոչված, «Արաբական գարունը», տարածվեց նաև Եգիպտոսում, որտեղ 2011 թ. հունվարի 25-ից սկսվեցին խաղաղ ցույցեր, որոնք ավարտվեցին 2011 թ. փետրվարի 11-ին՝ Եգիպտոսի երկարամյա նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականով: «Արեգ» պարբերականը չէր կարող անմասն մնալ Եգիպտոսի նորագույն պատմության մեջ նմանը չունեցող այս հեղափոխության ընթացքը լուսաբանելուց և մի ամբողջ համար նվիրել է դրան: Պարբերականը մանրամասն, օր առ օր ներկայացնում է հեղափոխության ընթացքը, զարգացման դինամիկան, թե ինչպես հեղափոխական ալիքը կարճ ժամանակահատվածում ձնագնդի նման աստիճանաբար մեծացավ և, ի վերջո, հեղափոխություն տեղի ունեցավ: Բացի այդ, պարբերականը ներկայացնում է իշխանությունների ձեռնարկած միջոցառումները, հեղափոխության ընթացքը կասեցնելու փորձերը, տեղեկություններ հաղորդում իշխանություն – ընդդիմություն կարճատև երկխոսության ընթացքի մասին, ինչպես նաև անդրադառնում է Եգիպտոսում տեղի ունեցող ներքաղաքական գործունեության վերաբերյալ աշխարհի և տարածաշրջանի կարևոր պետությունների դիրքորոշման լուսաբանմանը²: Նշենք, որ հեղափոխության շարժիչ ուժը երիտասարդությունն էր, որը կարողացավ սոցցանցերի օգնությամբ միլիոնավոր մարդկանց արաբական փողոց դուրս բերել: 17 օր տևած ցույցերից հետո Հոսնի Մուբարաքը հրաժարական տվեց, որից հետո

¹ Արեգ, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 10–14:

² Նույն տեղում, 2011, փետրվար, № 10, էջ 1–38:

Եգիպտոսում սկսվեց անցումային շրջան, որի ընթացքում տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններում հաղթանակ տոնեցին իսլամիստները՝ Մուհամեդ Մուրսիի գլխավորությամբ: 2012 թ. Եգիպտոսում տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթեց Մուհամեդ Մուրսին, ինչի կապակցությամբ «Արեգ»-ը ներկայացնում է Եգիպտոսի նոր ընտրված նախագահի կենսագրությունը, ինչպես նաև լայնորեն լուսաբանում ընտրությունների ընթացքը¹: Եգիպտոսի զինվորականները չէին կարող հաշտվել այդ փաստի հետ և 2013 թ. հուլիսի 3-ին հեղաշրջում կազմակերպեցին՝ Մուհամեդ Մուրսիին հեռացնելով իշխանությունից: 2014 թ. հունիսի 8-ին տեղի ունեցած նախագահական ընտրություններում հաղթանակ տարավ երկրի պաշտպանության նախարար Աբդել Ֆաթթահ ալ Սիսին, որի ղեկավարման տարիներին Եգիպտոսն աստիճանաբար դուրս եկավ ճգնաժամից՝ երկրում վերահաստատելով աշխարհիկ կարգեր և վերականգնելով սասանված միջազգային հեղինակությունը:

«Իշխանության համար պայքարը Եգիպտոսում» հոդվածում արաբ հետազոտող Սաբր Մուհամմադ Սադեկը հաղորդում է, որ միշտ էլ Եգիպտոսի պատմության ընթացքում իշխանության հասնելու համար սուր պայքար է ծավալվել՝ ընթերցողին տեղեկություններ հաղորդելով պատմական վաղ անցյալում Եգիպտոսում ծավալված իշխանական պայքարի մասին²: Եգիպտոսն իր պատմության ընթացքում ունեցել է բազմաթիվ ներքին, արտաքին ճգնաժամեր, որոնց հաղթահարման արդյունքում Եգիպտոսը որպես պետություն ավելի է հզորացել:

¹ Արեգ, 2012, № 25, էջ 1–3:

² Նույն տեղում, 2010, օգոստոս, № 5, էջ 5–7:

Պարբերականն այս կապակցությամբ ընթերցողին ներկայացնում է մ.թ.ա. եգիպտոսում տեղի ունեցած քաղաքական, ռազմական ճգնաժամերը և պատմական կարևոր իրադրությունները¹:

2011 թ. եգիպտական հեղափոխության գործում մեծ դեր ունեցավ Facebook սոցիալական ցանցը, ինչի կապակցությամբ արաբերեն պարբերականը ներկայացնում է վերջինիս ստեղծման պատմությունը և դերը եգիպտական բնակչության հոծ զանգվածներին փողոց դուրս բերելու և շարժմանը կազմակերպված բնույթ տալու գործում²: «Սոցցանցերն ու հունվարի 25-ի հեղափոխությունը» հոդվածում պարբերականը տեղեկություններ է հաղորդում Youtube-ի, Twitter-ի, Facebook-ի մասին, ինչպես նաև ժամանակակից աշխարհում կարևորում է ինտերնետի դերը մարդկանց համախմբելու գործում³:

Հունվարի 25-ի հեղափոխությունից հետո եգիպտական նոր իշխանությունները վերանայեցին երկրի արտաքին և ներքին քաղաքականությունը: Արտաքին քաղաքականության ոլորտում առաջնահերթություն դարձավ շփումների ակտիվացումը առաջին հերթին աֆրիկյան, արաբական երկրների, այնուհետև ԱՄՆ-ի, եվրամիության և այլ երկրների հետ: Ներքին քաղաքականությունում միջոցառումներ ձեռնարկվեցին գործազրկության մակարդակը իջեցնելու, նոր աշխատատեղեր ստեղծելու ուղղությամբ⁴:

¹ Արեգե, 2015, հոկտեմբեր, № 61, էջ 22–25:

² Նույն տեղում, 2011, մարտ № 17, էջ 10–13:

³ Նույն տեղում, մայիս, № 13, էջ 13–16:

⁴ Նույն տեղում, նոյեմբեր, № 18, էջ 12–18:

«Արեգ»-ը ուշադրության կենտրոնում է պահել Եգիպտոսի հեղափոխության վերաբերյալ տարբեր գիտաժողովների լուսաբանումը: 2011 թ. հուլիսի 26–27-ին Կահիրեում տեղի ունեցավ գիտաժողով «Անցումային շրջանում Եգիպտոսում դեմոկրատական կարգերի հաստատման մարտահրավերներ» խորագրով: Զեկուցումները հիմնականում վերաբերում էին դեմոկրատական պետության կառուցման քաղաքականության մեջ բանակի դերի աճի, բանակի դերի վերաբերյալ հասարակական պահանջի իսլամական հոսանքների վերելքի հետ կապված խնդիրների լուսաբանմանը¹:

«Հեղափոխությունը և մշակույթը» հոդվածում պարբերականը լայնորեն լուսաբանում է 2012 թ. ապրիլի 14–16-ին Եգիպտոսում տեղի ունեցած համանուն միջազգային գիտաժողովը, որին մասնակցեցին 32 հետազոտողներ, լրագրողներ, գրողներ և այլք: Զեկուցումների թեմաները վերաբերում էին Եգիպտոսի նորագույն պատմության ընթացքում տեղի ունեցած հեղափոխություններին (1881 թ., 1919 թ., 1952 թ., 2011 թ.), դրանց նմանություններին ու տարբերություններին, դրանց ազդեցությունը երկրի մշակութային կյանքի վրա: Զեկուցողների զգալի մասը հանդես եկավ «2011 թ. հեղափոխությունը պատմության և դրա ազդեցությունը Եգիպտոսի մշակութային կյանքի վրա» թեմաներով²:

2015 թ. մայիսին տեղի ունեցած հունվարի 25-ի հեղափոխությանը նվիրված կոնֆերանսի ընթացքում զեկուցողները միանշանակ հեղափոխության գլխավոր պատճառների շարքում նշում էին ներքին դժգոհությունները, որոնք սկսվել էին

¹ Արեգ, 2011, օգոստոս, № 15, էջ 11–16:

² Նույն տեղում, 2012, № 25, էջ 25–29:

դեռևս 2000-ականների սկզբներից¹: Հոսնի Մուբարաքի միահեծան իշխանության մոտ 30 տարիների ընթացքում Եգիպտոսում գործազրկության մակարդակը զգալիորեն աճեց, 2000-ականների կեսերից երկրի տնտեսական վիճակը տարեցտարի վատթարանում էր, ինչը բացասաբար էր անդրադառնում բնակչության կենսամակարդակի վրա: Բացի այդ, երկրում մեծ չափերի էր հասել կաշառակերությունը: Վերոնշյալ ներքին գործոնները 2000-ականների կեսերին բնակչության մի հատվածին ստիպեցին ընդվզել իշխանությունների դեմ:

Եգիպտական ամենաբարձր ամբարտակի կառուցման մեկնարկի 50-ամյակի կապակցությամբ 2010 թ. տեղի ունեցան մի շարք տոնական միջոցառումներ, որոնց լուսաբանմանը նույնպես անդրադարձել է «Արեգ» պարբերականը: Բացի այդ, պարբերականը տեղեկություններ է հաղորդում Ասուանի ջրամբարի կառուցման պատմության վերաբերյալ²: Խորհրդային Միության օգնությամբ կառուցված Ասուանի ջրամբարը էլեկտրաէներգիայի մեծ աղբյուր է հանդիսանում և կարևոր նշանակություն ունի Եգիպտոսի տնտեսական կյանքում:

2010 թ. մայիսի 14-ին Նեղոսի ավազանի երկրներից Եթովպիան, Ռուանդան, Տանզանիան, Ուգանդան և Քենիան համագործակցության համաձայնագիր ստորագրեցին Նեղոս գետի համատեղ օգտագործման վերաբերյալ, ինչի կապակցությամբ արաբերեն պարբերականը վերհիշում է դեռևս 19-րդ դարի կեսերին ստորագրված Նեղոս գետի ջրերի օգտագործման վերաբերյալ բազմաթիվ երկկողմ, բազմակողմ պայմանագրերը, միջազգային գետահոսքերի արդար օգտագործման միջազգային

¹ Արեգ, 2015, հունիս, № 58, էջ 18–21:

² Նույն տեղում, 2010, հունիս, № 3, էջ 22–25:

կոնվենցիաները¹: Նշենք, որ Նեղոս գետը սկիզբ է առնում վերոնշյալ երկրներից, այնուհետև, հոսելով Եգիպտոսի տարածքով, թափվում Միջերկրական ծով: 20-րդ դարի ընթացքում Նեղոս գետի վերաբերյալ ստորագրված բոլոր պայմանագրերում, առանց Եգիպտոսի թույլտվության, ջրավազանի երկրները չէին կարող ջրային ծրագրեր իրականացնել, քանի որ Եգիպտոսի բնակչության 2/3 բնակվում է Նեղոսի հովտում, և, անհիշելի ժամանակներից սկսած, Նեղոսը կարևոր դեր է խաղացել Եգիպտոսի տնտեսական կյանքում: Օգտվելով 2010–2012 թթ. Եգիպտոսում տեղի ունեցած ներքաղաքական զարգացումներից՝ Եթովպիան սկսեց իրականացնել ջրային մեծ ծրագիր՝ գետի վրա սկսելով մեծ ջրամբար կառուցել, ինչը մեծ աջակցություն ստացավ Տանզանիայի, Ռուանդայի, Ուգանդայի, Քենիայի, Հարավային Սուդանի իշխանությունների կողմից: Վերջիններս ակնկալում են ջրամբարի շահագործումից հետո էժան էլեկտրոէներգիա ստանալ Եթովպիայից: 2012 թ. դրությամբ ջրամբարի 50% արդեն պատրաստ էր, ինչը մեծ անհանգստություն առաջացրեց Եգիպտոսի իշխանությունների շրջանում: Նույնիսկ լուրեր էին տարածվում, որ Եգիպտոսը հնարավոր է դիմի ռազմական գործողությունների: Եթովպիային կհաջողվի ավարտին հասցնել ջրամբարի կառուցումը, թե ոչ, ցույց կտա ժամանակը: Բացի այդ, հավելենք, որ ջրամբարի շահագործումից հետո Եթովպիան կդառնա տարածաշրջանի տնտեսապես ամենահզոր պետությունը՝ երկրորդ պլան մղելով Եգիպտոսին:

Պարբերականին մշտապես մտահոգել է արաբական երկրներից տեղի ունեցող արտագաղթի թեման: Արաբ ուսումնասի-

¹ . Արեգե, 2010, օգոստոս, № 5, էջ13–16:

րող Հիլամ Բաշիրը նշում է, որ արաբ երիտասարդները հիմնականում մեկնում են Արևելյան Եվրոպայի երկրներ: Մասնավորապես, վերջին տաս տարվա ընթացքում Եգիպտոսից արտագաղթել է 460.000 երիտասարդ: Արաբ հետազոտողը, որպես արտագաղթի գլխավոր պարետ, մատնանշում է արաբական երկրներում, այդ թվում, Եգիպտոսում առկա գործազրկության բարձր մակարդակը¹: Արտագաղթը դեպի Եվրոպա մեծ չափերի հասավ 1930-ականներին, երբ Եվրոպայում աշխատուժի մեծ պահանջարկ կար: 1970-ականների սկզբներին եվրոպական երկրները քայլեր ձեռնարկեցին գաղթյալների հոսքը զգալիորեն կրճատելու ուղղությամբ և ներգաղթը սահմանափակող մի շարք օրենքներ ընդունեցին: Սակայն, առ այսօր արաբական երկրներից մարդիկ շարունակում են օրինական և ապօրինի գաղթել եվրոպական երկրներ: Մեկ այլ համարում պարբերականը անդրադառնում է Եգիպտոսի կրթական համակարգում առկա խնդիրների լուսաբանմանը²:

2012 թ. մարտի 17-ին 89 տարեկան հասակում մահացավ Եգիպտոսի ղպտիական եկեղեցու՝ առաջնորդ Շունուդահ Երրորդը, ինչի կապակցությամբ արաբերեն պարբերականը ներկայացնում է ղպտիական հոգևոր առաջնորդի կենսագրությունը, վերջինիս փոխհարաբերությունները Եգիպտոսի նախագահներ Անվար Սադաթի, Հոսնի Մուբարաքի հետ՝ արժևորելով Եգիպտոսի հասարակական կյանքում ունեցած դերը³: 13-րդ համարում «Արեգ»-ը արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում ղպտիական երաժշտության, երաժշտական գոր-

¹ Արեգե, 2010, ապրիլ, № 1, էջ 16–21:

² Նույն տեղում, հուլիս, № 4, էջ 14–19:

³ Նույն տեղում, 2012, մարտ, № 22, էջ 15–20:

ծիչքների մասին, ինչպես նաև ներկայացնում ղպտիական երաժշտության նշանավոր գիտակ Ռաշիբ Մաֆբահի կյանքն ու գործունեությունը¹:

Պարբերականը շոշափում է նաև ծովահենության թեման, որը ներկայումս նույնպես արդիական խնդիր է Կարմիր ծովում: Մասնավորապես, պարբերականն ընթերցողին ներկայացնում է 21-րդ դարում ծովահենության դեպքերը Կարմիր ծովում և աշխարհի այլ վայրերում, նշում դրանց պատճառները²:

Եգիպտացի կինը վաղ ժամանակներից սկսած կարևոր դեր է խաղացել ընտանիքի, հասարակության կյանքում և շարունակում է իր ուրույն դերը կատարել նաև մեր օրերում: Այդ կապակցությամբ արաբերեն պարբերականը տեղեկություններ է հաղորդում 20-րդ դարի եգիպտոսի նշանավոր կանանց (դասախոս, բժիշկ, քաղաքական գործիչ և այլք) մասին³:

«Սինայ թերակղզու արաբական ֆոլկլորը. երաժշտական ու պարային ժառանգությունը» հոդվածում պարբերականը ներկայացնում է Սինայ թերակղզու պատմությունը՝ ընդգծելով, որ այն ամբողջովին արաբական է՝ թե՛ պատկանելության տեսանկյունից, թե՛ մշակութային ժառանգության, չնայած, որ հրեաները վերցրել են երաժշտության և պարային որոշ տեսակներ: Բացի այդ, պարբերականը ներկայացնում է Սինայ թերակղզու բնակիչների ավանդույթները, ազգային պարերը, տալիս դրանց պատմությունն ու ստուգաբանությունը⁴: 50-րդ համարում պարբերականը տեղեկություններ է հայտնում Սինայ

¹ Արեգե, 2011, մայիս, № 13, էջ 17–19:

² Նույն տեղում, 2012, հուլիս, № 26, էջ 28–29:

³ Նույն տեղում, հուլիս, № 26, էջ 28–32:

⁴ Նույն տեղում, 2013, մայիս, № 35, էջ 14–18:

թերակղզու ռազմավարական դիրքի, այնտեղ ապրող ցեղերի պատմության մասին¹:

Մերձավոր Արևելքի ամենահեղինակավոր թերթերից մեկի՝ եգիպտական «Ալ Ահրամ»-ի ստեղծման 136-ամյակի և, ընդհանրապես, եգիպտական մամուլի սկզբնավորման կապակցությամբ «Արեգ»-ը մանրամասներ է հաղորդում 19-րդ դարի վերջերի և 20-րդ դարի սկզբների եգիպտոսի նշանավոր այլ թերթերի՝ (, Ալ Մուկկարամե, , Ալ Մոայյադե և այլն) մասին²:

Արաբերեն պարբերականին եգիպտոսին վերաբերող թեմաներից բացի հետաքրքրել է նաև արաբական բովանդակությամբ այլ թեմաների լուսաբանումը: «Մշակութային ժառանգության խնդիրը Արևմտյան Աֆրիկայում 1962–1993 թթ.» հոդվածում արաբերեն պարբերականը տեղեկություններ է հաղորդում Պաղեստինի մշակութային ժառանգության մասին: Բացի այդ, պարբերականը հավելում է, որ չնայած միջազգային կոնվենցիաները արգելում են մշակութային ժառանգության յուրացումը, իսրայելական իշխանությունները, 1967 թ. Պաղեստինի ողջ տարածքը գրավելուց հետո, տարիների ընթացքում ավերել և յուրացրել են Պաղեստինի արաբ ժողովրդի պատմական, մշակութային ժառանգություն հանդիսացող բազմաթիվ շինություններ, մզկիթներ, կրթական հաստատություններ և այլն³: «Մարդկային քաղաքակրթությունը և մուսուլման գիտնականները» հոդվածում պարբերաբար տեղեկություններ է հաղորդվում մու-

¹ , Արեգե, 2014, հոկտեմբեր, № 50, էջ 18–25:

² Նույն տեղում, 2012, նոյեմբեր, № 29, էջ 17–21:

³ Նույն տեղում, 2013, մարտ, № 33 էջ 11–14:

սուլման գիտնականներ Արու Բաքր ալ Բագիի, Իբն աա Սինայի, Իբն ալ Նաֆիսի և այլոց գործունեության վերաբերյալ¹:

Արաբերեն պարբերականը միայն հայկական թեմաների լուսաբանմամբ չի սահմանափակվել, այլև անդրադարձել է արաբական թեմաների, մասնավորապես, արդի շրջանում Եգիպտոսին վերաբերող զանազան խնդիրների արծարծմանը: Ամսագիրն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Եգիպտոսի պատմությունը՝ մեծ տեղ հատկացնելով երկրի պատմության նորագույն շրջանի լուսաբանմանը: Բացի այդ, ամսագիրը մանրամասն ներկայացնում է Եգիպտոսի 2011 թ. հեղափոխության ընթացքը, զարգացման դինամիկան, սոցցանցերի դերը եգիպտական բնակչության հոծ զանգվածներին փողոց դուրս բերելու և շարժմանը կազմակերպված բնույթ տալու գործում:

¹ , Արեգե, 2010, ապրիլ, № 1, էջ 22–23:

ՎԵՐՋԱԲԱՆ

«Արև»-ի արաբերեն հավելվածի նման «Արեգ» պարբերականի հիմնական նպատակը հայ-արաբական, մասնավորապես, հայ-եգիպտական հարաբերություններն ամրապնդելն է: «Արեգ» պարբերականը «Արև»-ի արաբերեն հավելվածի նման ձգտել է ուշադրության կենտրոնում պահել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը, եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում վառ պահել նրանց հիշատակը: ՀԲԸՄ-ն, արաբերեն պարբերականի օգնությամբ, ցանկանում է խորացնել հայ և արաբ ժողովուրդների միջև մշակութային կապերը: Հայկական թեմաներից բացի «Արեգ» պարբերականը անդրադարձել է նաև արաբական բովանդակությամբ տարաբնույթ թեմաների լուսաբանմանը:

Ուսումնասիրելով 2010–2015 թթ. «Արեգ» արաբերեն պարբերականի էջերում լույս տեսած բոլոր հոդվածները՝ եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. 20-րդ դարի ընթացքում եգիպտոսում ապրեցին և ստեղծագործեցին հայազգի բազմաթիվ արվեստագետներ, որոնք մեծ ներդրում ունեցան եգիպտոսում արվեստի զարգացման գործում: Առանձնապես մեծ հաջողությունների հասան եգիպտահայ նկարիչները: «Արեգ» պարբերականը ձգտել է ուշադրության կենտրոնում պահել եգիպտահայ արվեստագետների գործունեության լուսաբանումը և արաբախոս ընթերցողի շրջանում պահպանել նրանց հիշատակը: Արաբերեն պարբերականը մեծապես արժևորում է եգիպտահայ անվանի արվեստա-

գետների գործունեությունը և արժեքավոր տեղեկություններ հաղորդում վերջիններիս մասին:

2. «Արեգ» պարբերականը 2010–2015 թթ. լույս տեսած համարներում 19-րդ դարի եգիպտահայ պետական գործիչներից առանձնացնում և արժևորում է Պողոս Բեյ Յուսուֆյանի ու Յակուբ Արթինի գործունեությունն ու ներդրումը եգիպտոսի կառավարման պետական համակարգում, երկրի հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացման գործում: Եգիպտահայ վերոնշյալ գործիչները բազմաթիվ ղեկավար պաշտոններ են զբաղեցրել Եգիպտոսի կրթական տարբեր հանձնաժողովներում, ծրագրերում, ինչպես նաև մեծ դեր են կատարել եվրոպական լեզուներից տարբեր ոլորտների գրքեր թուրքերեն ու արաբերեն, և հակառակը թարգմանության գործում: Բացի այդ, և՛ Պողոս Բեյ Յուսուֆյանը, և՛ Յակուբ Արթինը մեծ դերակատարում են ունեցել եգիպտահայ համայնքի կրթամշակութային կյանքի աշխուժացման գործում և սոցալիական ու բարոյահոգեբանական մեծ աջակցություն են ցուցաբերել Եգիպտոս գաղթած արևմտահայ գաղթականներին:

3. «Արեգ» արաբերեն պարբերականն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Հայոց ցեղասպանության հիմնահարցը, վերջինիս միջազգային ճանաչման գործընթացը 2010–2015 թթ., ինչպես նաև դատապարտում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում: «Արեգ»-ը մեծ տեղ է հատկացրել Հայոց ցեղասպանության տարբեր փուլերի լուսաբանմանը՝ տեղեկություններ հաղորդելով ցեղասպանության վերաբերյալ համաշխարհային և արաբական, մասնավորապես, եգիպտական մամուլի, հրապարակումների մասին: Պարբերականի ուշադրությունից չեն

վրիպել նաև ցեղասպանությունների կանխարգելման վերաբերյալ 2010–2015 թթ. միջազգային տարբեր գիտաժողովների լուսաբանումը: Արաբերեն պարբերականը պարբերաբար իր համարներում անդրադառնում է Հայկական հարցի վերաբերյալ եզրագլխադրյալ հետազոտողների թեկնածուական ատենախոսությունների, արաբական աշխարհում հրատարակված գրքերի լուսաբանմանը:

4. «Արեգ» արաբերեն պարբերականն իր էջերում ներկայացնում է իրաքահայ համայնքը՝ մեծապես արժևորելով հայ համայնքի ներդրումը Իրաքի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքում: Իրաքահայերի մասին բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում Իրաք այցելած օտարազգի ճանապարհորդները, որոնք մեկ անգամ ևս հաստատում են այն իրողությունը, որ իրաքահայ համայնքը միշտ կարևոր դերակատարում է ունեցել Իրաքի տնտեսական կյանքում, մասնավորապես, առևտևի ոլորտում: «Արեգ»-ի հրապարակումներն արժեքավոր են նրանով, որ դրանցում նորանոր փաստեր են երևան գալիս իրաքահայ համայնքի վերաբերյալ:

5. «Արեգ» արաբերեն պարբերականն իր էջերում լուսաբանում է 2010–2015 թթ. հայ-արաբական հարաբերությունների զարգացման դինամիկան, ինչպես նաև արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում Մերձավոր Արևելքի ժամանակակից հայազգի ուսումնասիրողների 2010–2015 թթ. հրատարակած աշխատանքների մասին: «Արեգ» պարբերականն իր նշանակալից ավանդն ունեցավ հայ-արաբական հարաբերությունների զարգացման գործում՝ նպաստելով երկու երկրներ ի քաղաքական, մշակութային շփումներին և իր լուսաբանումնե-

րում վերհանելով հայ և եգիպտացի ժողովուրդների հոգևոր ու քաղաքական մերձեցումների առարկայական օրինակներ:

6. «Արեգ» պարբերականն արաբախոս ընթերցողին տեղեկություններ է հաղորդում ՀՀ արտաքին և ներքին քաղաքականության, հայ-թուրքական հարաբերությունների արդի վիճակի վերաբերյալ, ինչպես նաև արժևորում ու ներկայացնում է հայ նշանավոր արվեստագետների գործունեությունը, ստեղծագործությունները: Բացի այդ, ամսագիրն ընթերցողին ներկայացնում է Արցախի հիմնախնդրի պատմությունը, հիմնավորում հայկական դիրքորոշման արդարացիությունը:

7. Արաբերեն պարբերականը միայն հայկական թեմաների լուսաբանմամբ չի սահմանափակվել, այլև անդրադարձել է արաբական թեմաների, մասնավորապես, արդի շրջանում Եգիպտոսին վերաբերող զանազան խնդիրների արծարծմանը: Ամսագիրն արաբախոս ընթերցողին ներկայացնում է Եգիպտոսի պատմությունը՝ մեծ տեղ հատկացնելով երկրի պատմության նորագույն շրջանի լուսաբանմանը: Բացի այդ, ամսագիրը մանրամասն ներկայացնում է Եգիպտոսի 2011 թ. հեղափոխության ընթացքը, զարգացման դինամիկան, սոցցանցերի դերը եգիպտական բնակչության հոծ զանգվածներին փողոց դուրս բերելու և շարժմանը կազմակերպված բնույթ տալու գործում:

Մեր կարծիքով, «Արեգ» արաբերեն պարբերականին հաջողվել է արաբախոս ընթերցողին ներշնչել Հայկական հարցի, Արցախի հիմնախնդրի հայկական տեսակետների արդարացիությունը, ինչպես նաև ընդհանուր պատկերացում տալ ՀՀ-առաքական երկրներ, աշխարհի այլ երկրների հետ ունեցած հարաբերությունների մասին, կարևորել հայ-արաբական բարեկամությունը:

ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Աբաջյան Վարդավառ – 87

Աբրահամ փաշա – 45

Աբրալլահ Ալի Աղիբ – 15

Աբրալլահ Ֆաթալ – 119

Աբդել Ֆաթահ առ Սիս – 60,

142

Աբդուլ Համիդ Երկրորդ – 62,

89

Աբդյան Շաքե – 29

Աբու Բաքր ալ Բազի – 150

Աբրահամյան Հովիկ – 116

Աբրոյան Տիգրան – 8, 22, 41

Ադամ Շիֆ – 78, 79

Ադր ալ Ազիզ ալ Դուրուբի – 59

Ադիբ Իսհակ – 55, 120

Ազարարյան Նորա – 34

Ազնավուր Շարլ – 15

Աթոյան Հենրիկ – 136

Ալ Ֆիլիպ ալ Քարամլի – 103

Ալբան տե՛ս Արնաուտյան

Արման

Ալթունյան Թաթուլ – 115

Ալի Սաբիթ Սաբրայ – 88

Ահմադ աբու ալ Ղայթ – 114

Ահմադ ալ Մանամ ալ Ադաուի

– 59

Ահմադ Աշան – 57

Ահմադ Արաբի – 138

Ահմադ Սաբիթ Տուշան – 13

Ահմեդ Ջեմալ փաշա – 70

Ամինա Ահմադ Իմամ ալ

Շուրուբշի – 59

Ամիրյան Հարություն – 29

Ամր Մուսա – 113

Այգյան Ավետիս – 87

Այգյան Զարմամիր Պողոս – 87

Այն Շամս – 95

Այուբյաններ – 49

Անահիտ – 19

Անդրանիկ – 91

Անդրանիկյան Հրանտ – 24

Անվար Սադաթ – 16, 140, 147

Աշճյան Արա – 71

Ապիշաթյան Գրիգոր – 119

Առաքել Պատրիկ – 12

Ասոյան Ֆաթալլահ – 119

Աստարջյան Գրիգոր – 110

Ավետիսյան Հակոբ – 22

Ավետիսյան Շանթ – 34, 36

Ավետիսյան Օնիկ – 12, 18–22

Ավերիս Իշխան – 110

Արզումանյան Ալեքսանդր – 113

Արթինյան Մարի – 34

Արիսյան Նորա – 57, 59, 118–

120

Արման Ալբան տե՛ս

Արնաուտյան Արման

Արման Հակոբի – 34

Արնաուտյան Արման – 11, 12,
23, 24

Արսալանյան Ֆարիդ – 119

Բ

Բադուլ – 108

Բադր ալ Ջամալի – 49

Բալաբանյան Լուսի – 119

Բալաբանյան Հենրի – 119

Բալյան – 11

Բալյան Մարտիրոս – 34, 35

Բալտիյան Մարգարիտա – 34

Բալթամյան Սուրեն – 54, 55

Բաշյան Հովսեփ – 43

Բաշտիբյան Նուբար – 110

Բաշր ալ Ասադ – 116

Բերբերյան – 54

Բերբերյան Արամ – 13

Բևրգրեն – 104

Բոթոխյան Արամ – 110

Բուզանթյան Միհրան – 119

Բուկինգամ Ժ. – 106

Բուռնաթյան Զորջ – 130

Գ

Գալուստյան Մովսես – 119

Գևորգյան Միսաք – 110

Գյուլբենկայն Գալուստ – 109

Գուլուգյան Հայկ – 87

Դ

Դաջիրբջյան Հովհաննես – 11,
24, 31, 32, 34

Դարբինյան Սարգիս – 54

Դեմիրճյան Երվանդ – 7-10,
22, 31, 32

Դեմիրճյան Ստեփան – 41, 43

Դիրարյան Ռուբեն – 119

Ե

Երանոսյան Նարինե – 57

Երիցյան Ներսես – 113

Երվանդ Նիշանյան – 87

Զ

Զահրադի Ֆաթիմա – 8

Զեյնանյան Պողոս – 87

Զորյան Աշոտ – 18, 19, 21, 24-
26, 36, 37

Է

Էգոյան Ատոմ – 128, 129

Էգոյան Շուշան – 34

Էմիր շերիֆ Հուսեյն – 81

Էնվեր փաշա – 65, 70, 81, 92

Թ

Թալեաթ փաշա – 66, 70, 81,
92

Թաղադրագյան Քրիստինա –
34, 36, 37

Թաներ Աքչամ – 99

Թաշյան – 11

Թաուֆիկ – 138

Թարգիմանյան Գևորգ – 87

Թեյլան Վահան – 34

Թերզյան Պերճ – 15, 55, 69,
73, 79, 125, 126, 131–133

Թոնյան Արիստակես – 55

Թուրգուլ Օզալ – 73

Թովհայան – 54

Ժ

Ժակ Շիրակ – 80

Ժամկոչյան Արմենուհի – 34

Ժիրաջյան Տիգրան – 119

Ի

Իբն ալ Նաֆիս – 150

Իբն աս Սինա – 150

Իթմաքչյան Արթին – 133, 134

Իմրա – 18

Ինջի Հուանի Հուսեյն – 122

Իսքանդարյան Սերոբ – 108

Իքմաքչյան Տիգրան – 109

Լ

Լեոնարդ Ուլուֆ – 102, 103

Լեոնարդո դա Վինչի – 6

Լիբարյան Սիմոն – 119

Լյուդովիկոս – 81

Լյուսի – 27

Լուսինյան Սելիմ – 110

Խ

Խաչատրյան Արամ – 38, 136

Խղիվ Իսմայիլ – 45

Կ

Կասիմին Լաբնա – 117

Կարամանուկյան Արամ – 119

Կարապետյան Սևան – 134

Կարապետյան Տիրան – 12, 22,
31

Կիյոմջյան Կիրակոս – 97, 118,
121

Կորյան Հովհաննես – 87

Հ

Հազիդ ալ Հուրուբ – 78

Հակոբ Մեղապարտ – 127

Հակոբյան Էդվարդ – 38

Հակոբյան Հակոբ – 33

Հակոբյան Հրանուշ – 113, 114

Հակոբյան Սեդա – 110

Հենրի Մորգենթաու – 77, 85

Հեքեքյան Յուսուֆ – 43

Հիլամ Բաշիր – 147

Հոսնի Մուբարաք – 141, 145,
147

Հովիվյան Վահան – 12

Հովհաննիսյան Արզար – 109

Հովհաննիսյան Գառնիկ – 110

Հովհաննիսյան Նիկոլայ – 84

Հուշիար Խիբարիի – 117

Հուսեյն Այսի – 96

Հուսեյն փաշա – 109

Հրազդան Պալյան – 31

Հրանտ Դինք – 83, 84

Ղ

Ղադա Խամիս Մուսա – 85

Ղազար Լևոն – 119

Ղուկիամ Լեծենի – 108

Ճ

Ճաղալյան Գեղամ – 34

Մ

Մալիքոմ Միրզա – 135

Մահմուդ Հալաֆ – 96

Մաղալյան Վահե – 34

Մանավյան Վահրամ – 7–11, 31

Մանուկյան Մարգարիտա – 35

Մանուկյան Մարտիրոս – 34

Մաջիդ Աջաթ – 57

Մաջրիյան Մկրտիչ – 87

Մառշան Լուի – 99

Մարգարյան Արշակ – 110

Մարգարյան Գուրգեն – 131

Մարգարյան Զոն – 110

Մարգարյան Ստեփան – 109

Մելքոն – 87

Մելքոնյան Արմեն – 53, 96,

112, 114, 124

Մեսրոպ – 54

Միլթիբաշյան Պետրոս – 119

Մինասյան Միհրան – 118

Միքայել – 107

Մկրտչյան Գրիգոր – 24

Մուհամեդ Մուրսի – 142

Մուհամմադ Աքբաս – 74

Մուհամմադ ալ Թաբաի – 13

Մուհամմադ ալ Լիսին – 72

Մուհամմադ Ալի – 8, 41–43, 51,
57, 139

Մուհամմադ Ահմադ Իբրահիմ
– 59

Մուհամմադ Նազիր – 52

Մուհամմադ Ռիֆաթ ալ Իմամ
– 3, 8, 53, 56, 60, 75, 90–
92, 96

Մուհամմադ Սաբեր Արաբի –
74

Մուհամմադ Ֆարիդ – 56, 63

Մուստաֆա Քեմալ – 56, 71, 73

Մուրադիջյան Ոսկան – 108

Մուրադյան Աբրահամ – 55

Մուրադյան Հովհաններ – 110

Մուրադյան Մուրադ – 117

Յ

Յակոբյան Նազարեթ – 119

Յակուբ Արթին տե՛ս Չրաքյան
Արթին

Յասիր Աուրուն – 91

Յուզջաթալյան Արտավազդ –
24

Յուսուֆ Կարդաուի – 97

Յուսուֆյան Պողոս Բեյ – 40

Ն

- Նադիր շահ – 109
- Նազըմ – 70
- Նազի Նասման – 98
- Նալբանդյան Էդվարդ – 117, 127
- Նասր ալ Դին – 134
- Նիկոլա Սարկոզի – 123
- Նուբար փաշա – 53, 114, 115
- Նուբարյան Նուբար – 41, 43

Շ

- Շահ Աբաս – 101
- Շահիրբեյան Սիմոն – 24, 31–33
- Շերիֆ – 138
- Շուարաբի Շիմա – 56
- Շունուդահ Երրորդ – 147

Ու

- Ուիլյամ Պերի Ֆոգի – 106

Չ

- Չաքմաքչյան – 109
- Չաքմաքչյան Հունա – 109, 110
- Չաքմաքչյան Սարգիս – 110
- Չիզիմջյան Ալին – 33, 34
- Չրաքյան Արթին – 40, 41, 43–48, 152

- Չրաքյան Խոսրով – 43

Պ

- Պարոնյան Հ. – 14
- Պարոնյան Հակոբ – 136

- Պարսամյան Գրիգոր – 110

- Պարտիզպանյան Պարույր – 12, 23

- Պետր Ֆորակ – 104

- Պողոս Բեյ Յուսուֆյան – 41–43, 47, 48, 152

- Պողոս Նուբար փաշա – 22, 45, 47

- Պողոսյան Արտաշես – 119

Ջ

- Ջամալ Չակրան – 96

- Ջամալ Քամալ Մահմուդ – 57, 59

- Ջանջիքյան Ջանջի – 119

- Ջաքսոն – 107

- Ջեմալ Ազմա – 64

- Ջեմալ փաշա – 92

- Ջիյում Բիուիհի – 99

- Ջոն Աշար – 107, 108

- Ջոջամանյան Բյուզանդ – 24, 28–30

- Ջորջ Բուտնաթյան – 120

- Ջորջ Վիլիելմ Բաուրենֆելդեր, – 104

- Ջոֆրի Ռոբերտսոն – 83

Ռ

- Ռադիզ Հերման – 84

- Ռամադան Աշան – 57

- Ռաշիբ Մաֆբահ – 148

Ռեզեի Թայիր Էրդողան – 72–

74

Ռիզկալլահ Հասուն – 120

Ռոբերտ Թալլոր – 107

Ռոբերտ Ֆիսք – 88, 89

Ռոնալդ Ռեյզան – 77

Ս

Սաբահաթ Թունջել – 73

Սաբիթ Սաբրան – 95

Սաբր Մուհամմադ Սադեն –

142

Սաթիյան Աննա – 110

Սալահյան Հրանտ – 119

Սալամի Կալիջ – 93

Սալարյան Մովսես – 119

Սահակ – 54

Սահիդ Հոսեյն – 123

Սահյան Համո – 118

Սամսոնյան Սիմոն – 24, 27, 28

Սայիդ Հասան – 140

Սայիդ փաշա – 45

Սասունյան Հարութ – 8, 11, 83,

91, 128

Սարաֆյան Ալեքսան – 55

Սարգիս Հակոբ – 110

Սարգիսյան Արա – 18

Սարգսյան Զավեն – 115

Սարգսյան Սերժ – 91, 116,

123–125

Սարոյան Վիլյամ – 15, 136

Սարուխան Ալեքսանդր – 12–

18, 21, 31, 32, 55

Սաֆարով Ռամիլ – 131

Սեթյան Վահե – 21

Սիվիլյան Սրապիոն – 109

Սիրունյան արք. – 52

Սիրվարդ – 25

Սուլեյման Բիքր – 57

Սունթուլյան Սունթուլ – 119

Ստալին – 130

Վ

Վարդանյան Ասքանազ – 109

Վարժապետյան Վահե – 34,

36, 37

Վիրաբյան Աստղիկ – 136

Վուդրո Վիլսոն – 86

Տ

Տինգո Մարտինոս Լըքլամա

Անիջեհուլտ – 108

Տիրունյան Վարդան – 68

Տոսոնյան Սարգիս – 34

Տուբալյան Արթին – 24

Փ

Փափազյան Հրաչ – 119

Փափազյան Զոն – 24

Փափազյան Ռոզ – 34

Փափազյան Վահրամ – 86-87

Փոլադյան Արշակ – 117

Ք

- Քամալ Մազհայ – 80
Քավաքյան Մարտիրոս – 110
Քարամյան Լևոն – 110
Քարարեն Նիպոտո – 104–106
Քաքավյան Արտաշես – 110
Քեշիշյան Հրանտ Մինաս – 23,
24, 33, 34, 36–39
Քիլիմջյան Տիգրան – 55
Քիյամջյան Ղազարոս – 87
Քիրխարիզյան Գևորգ – 87
Քոչարյան Ռոբերտ – 129
Քուլոնյան Գրիգոր – 109
Քուսան Գրիգոր – 60
Քուրքիջյան Սերովկիե – 18
Քրիսյան Շավարշ – 86, 87
Քրիստիան Կառլ Կամեր – 104

Օ

- Օլիկեր Գ. – 106
Օհանճյան Բիատրիս – 110
Օսման Զալաթի – 57
Օտյան Ե. – 14

Ֆ

- Ֆաթիմա – 59
Ֆաթիմյան – 113
Ֆաթիմյաններ – 49
Ֆաիզ Ղուսեյն – 56, 61, 74
Ֆիդիդիչի – 102
Ֆրանց Վերֆել – 82
Ֆրանցիսկ պապ – 95
Ֆրիդրիխ 5-րդ – 104
Ֆրիդրիխ Քրիստիան Ֆոն
Հավեն – 104

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐ

Ա

Ադանա – 10

Ադրբեջան – 123, 129–133

Աթենք – 28

Ալաշկերտ, հովիտ – 66

Ալեքսանդրիա – 6, 7, 10, 11, 12,

13, 15, 19, 23, 25, 28, 29,

32–35, 40, 43, 45, 50, 53,

54, 90, 104, 114

ԱՄԷ – 117

Անատոլիա – 67, 81, 93

Անգլիա – 27, 89

Անդալուսիա – 97

Անկարա – 80, 97

Ասուան, ջրամբար – 17, 20,

145

Աստանա – 125

Ավստրալիա – 133, 134

Ավստրիա – 13, 20, 94, 95

Արաբկիր – 35

Արաքս – 54

Արաքս, գետ – 124

Արգենտինա – 73

Արևելյան Եվրոպա – 147

Արևելք – 101, 102, 139

Արևմուտք – 42, 64, 97

Արևմտյան Անատոլիա – 72

Արևմտյան ափ – 149

Արևմտյան Հայաստան – 32,

35, 63, 68, 69, 85, 106

Արցախ – 130, 133, 137, 154

Բ

Բաբիլ – 103

Բաթում – 13, 25

Բաղդադ – 10, 102, 103, 105,

107–109, 111

Բասրա – 103, 107–109, 111

Բեյրութ – 15, 21, 26, 28, 68,

114

Բենգալ – 42

Բելոլին – 10

Բոմբեյ – 105

Բուենոս Այրես – 73

Բուլղարիա – 32

Բուրսա – 18

Բրիտանիա – 14, 40

Բրյուսել – 12, 24

Գ

Գերմանիա – 23, 93–94, 138

Դ

Դամասկոս – 96, 105, 118

Դանիա – 104

Դարդանեյ – 66

Դեր Էզ Ջոր – 89, 116

Դիարբեքիր – 102, 103, 105,
107, 108

Ե

Եգիպտոս – 4, 5, 8, 9, 10, 12,
13, 14, 16, 17, 20, 22–24,
27–29, 32, 33, 35, 37–50,
51–61, 63, 74, 75, 82, 90,
95, 112–115, 124, 138–152,
154

Եթովպիա – 145, 146

Եմեն – 104, 105

Եվրոպա – 18, 20, 25, 37, 40,
43, 44, 47, 92, 102, 106,
135, 139, 147

Երևան – 28, 29, 75, 91, 92,
95, 97, 125, 127

Երուսաղեմ – 20, 97

Զ

Զախո – 107, 108, 109

Զմյուռնիա – 27, 42

Է

Էրբիլ – 103

Էրզրում – 65

Թ

Թել Ավիվ – 97

Թեհրան – 124

Թուրքիա – 4, 13, 18, 19, 24,
27, 28, 62, 64–66, 69–75,

77–80, 83, 84, 86, 88, 92,
93, 96, 97, 99, 128, 152

Ի

Իզմիր – 40, 67, 86

Իսրայել – 91, 97, 140

Իտալիա – 20, 27, 29

Իրան – 105, 107, 108, 124, 134,
135

Իրաք – 96, 97, 101–111, 117,
153

Իրաքյան Քրդստան – 97

Լ

Լատինական Ամերիկա – 73

Լեռնային Ղարաբաղ – 122–
125, 128–133

Լիբանան – 21, 56, 88, 91, 92,
97, 98, 102, 116

Լյուքսոր – 20

Լոնդոն – 36, 64, 66, 97

Լոս Անջելես – 30, 97

Խ

Խարտում – 16

Խորհրդային Հայաստան – 35

Խորհրդային Միություն – 117,
125, 129, 145

Օ

Օոգ – 111

Կ

Կ.Պոլիս – 27, 44, 66, 71, 77,
81, 86, 93, 105, 120
Կազան – 133
Կահիրե – 3, 6–10, 12, 15, 17–
20, 23, 24, 26–39, 45, 46,
50, 52–56, 58, 60, 61, 63,
84, 90, 96, 104, 112, 115,
120, 134, 144
Կանադա – 36
Կարմիր ծով – 104, 148
Կիլիկիա – 10, 50
Կիպրոս – 19, 20, 21, 92
Կոպենհագեն – 105
Կոսովո – 131

Հ

Հալեպ – 15, 19, 20, 26, 68, 86,
89, 102, 103, 105, 116–118
Հայաստան – 4, 21, 26, 29, 49,
53, 55, 56, 58, 59, 69, 77,
78, 86, 100, 112, 117, 119,
122–130, 132
Հարավային Կովկաս – 123
Հարավային Սուդան – 146
Հինթիա – 18
Հիջազ – 81, 90
ՀՀ – 91, 112–115, 117, 136, 154
Հնդկաստան – 42, 106, 107

Հոլանդիա – 102

Հունաստան – 27, 29

Հունգարիա – 131

Հոֆենհոլ – 93

Հռոմ – 18, 19, 21, 25, 29, 122

Ղ

Ղազախստան – 129

Մ

Մաշրիկ – 91
Մարդին – 105
Մեծ Բրիտանիա – 81, 83, 88,
107, 123, 138, 139
Մերձավոր Արևելք – 12, 55,
88, 95, 102, 104, 121, 124,
134, 149, 153
Միացյալ Նահանգներ (ԱՄՆ) –
26, 30, 76–79, 85, 131,
143
Միջագետք – 58
Միջերկրական ծով – 146
Մոնրեալ – 36
Մոսկով – 103, 105, 107–111
Մուշ – 67
Մուսա լեռ – 67, 81–82

Ն

Նախիջևան – 132
Նեղոս, գետ – 145, 146
Նեղոս, ավազան – 145
Նեղոս, հովիտ – 146

Նիկոսիա – 19
Նյու Յորք – 28

Շ

Շապին Գարահիսար – 24
Շվեդիա – 76, 77
Շվեյցարիա – 134

Ու

Ուզանդա – 145, 146
Ուրֆա – 106

Պ

Պաղեստին – 74, 149
Պարսկաստան – 107, 122
Պերսեպոլիս – 107
Պորտ Սայիդ – 35, 47, 67, 82,
95

Ջ

Ջիբրալտ – 24

Ռ

Ռաբատ մատուռ – 105
Ռադիդ – 133, 134
Ռոդոս կղզի – 10
Ռուանդա – 145, 146
Ռուսաստան – 89, 92, 125

Ս

Սալոնիկ – 81
Սամոն – 27
Սան Պաուլո – 29

Սասուն – 67
Սերբիա – 92, 131
Սևան – 54
Սիդնեյ – 133
Սինա – 148
Սիրիա – 56, 59, 65, 74, 89,
90, 92, 95, 96, 102, 105,
106, 108, 116–119
Սուեդիա – 61
Սուեզի ջրանցք – 17, 45
Սույերք – 106
Սվազի նահանգ – 32
Ստամբուլ – 7, 8, 9, 11, 13, 18,
23, 25, 32, 42, 83, 97, 104
Ստեփանակերտ – 132
Ստոկհոլմ – 87

Վ

Վան – 67, 85, 86
Վատիկան – 95
Վենետիկ – 127
Վիեննա – 13, 18, 19, 21, 25,
26, 28, 45
Վրաստան – 25, 123

Տ

Տանզանիա – 145, 146
Տորոնտո – 28
Տրապիզոն – 24, 28, 64

Ց

Ցյուրիխ 127

Փ

Փարիզ – 7, 9, 12, 22, 24, 26,
36, 43, 44, 64

Ք

Քենիա – 145, 146

Քիրքուք – 109, 111

Քուվեյթ – 98, 117, 121

Օ

Օման – 105

Օսմանյան կայսրություն – 10,
35, 50, 51, 53, 56, 66, 68,
71, 76, 78, 79, 81, 82, 85–

89, 91–94, 99, 106–108,
123

Ֆ

Ֆրանսիա – 12, 27, 46, 79–81,
92, 99, 102, 123, 138, 139

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
Եգիպտահայ արվեստագետները «Արեգ» պարբերականի էջերում	6
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
Պողոս Բեյ Յուսուֆյանն ու Յակոբ Արթինը «Արեգ» պարբերականի էջերում	40
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ	
Եգիպտահայ համայնքի պատմությունը	49
ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ	
Հայոց ցեղասպանության հիմնահարցի արծարծումը	62
ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ	
Իրաքահայ համայնքի պատմությունը	101
ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ	
Անդրադարձ հայ-արաբական հարաբերություններին	113
ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ	
Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի տեղեկատվությունը	123
ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ	
Եգիպտոսի պատմության, արաբական գարնան լուսաբանումն ու արժևորումը	139
ՎԵՐՋԱԲԱՆ	152
ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	156
ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ	163

ՄՅԱՍՆԻԿ ԵՍՈՅԱՆ

**«ԱՐԵԳ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԸ
2010-2015 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ**

Սրբագրիչ՝ Դ. Սարգսյան
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Տպաքանակը՝ 100 օրինակ

**ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA**

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
<http://www.academhistory.am>

[1500mm]

ՀԱՄԱՅՈՒՆԱՊԵՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԱՄ ԶԻՃՆԱՐԱՐԻ ԳԻՏ. ԳՐԱԴ.



FL0677733

A. N
109071

ISBN 978-9939-892-11-5



9 789939 892115